ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՎԱՆԱՁՈՐ - 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
Մակրոտնտեսական ցուցանիշներ	4
Ֆինանսական միջոցներ	5
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	12
Արդյունաբերություն	15
Քաղաքաշինություն	17
Սուբվենցիոն ծրագրեր	20
Տրանսպորտ, Ճանապարհաշինություն գործունեության բնագավառ	28
Բնակարանային եւ ենթակառուցվածքների	33
Ջրամատակարարում	34
Գազամատակարարում	35
Էներգամատակարարում, Կապ	36
Գյուղատնտեսություն	37
Բնապահպանություն	42
Հողաշինություն և հողօգտագործում	47
Առևտուր և սպասարկում	48
Տարածքային կառավարում	48
Տեղական ինքնակառավարում	49
Կրթություն	52
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	58
Առողջապահություն	59
Սոցիալական ապահովություն	70
Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանություն	78
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	78
Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր	81
Քաղպաշտպանություն և արտակարգ իրավիճակներ	82
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	83
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	84
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	85
	86

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ընդհանուր տեղեկություններ

Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3799 քառ. կմ
Բնակչության թիվը՝	213.3 հազար մարդ, այդ թվում՝
➢ քաղաքային	126.1 հազար մարդ,
➢ գյուղական	87.2 հազար մարդ,
Մարզի համայնքների թիվը՝	56, որից՝
Խոշորացված համայնքներ -11	
➢ Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➢ Կառավարման ձևը	տարածքային կառավարում
Ազգային կազմը	
➢ հայեր	97.0 %,
➢ ռուսներ	1.5 %,
➢ հույներ	1.0 %,
➢ այլ ազգություններ	0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Ջիլիզա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)

2020 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.
- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.

- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2020թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

- Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:
- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը:
- Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:
- Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:
- Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:
- Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը:
- Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:
- Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:
- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:
- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:
- «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:
- 2020 թվականին ՏԻՄ-երի ընտրություններից անցկացվել է միայն Չկալով համայնքի ղեկավարի ընտրությունը:
- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 139 մրցույթներ, որոնցից կայացել են 46-ը, ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու պատճառով չեղարկվել են 54-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 97 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 76-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 43-ը:

2020թ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

մլրդ դրամ

	2020թ. տարեկան /փաստացի/	*Աճը 2019թ. տարեկանի նկատմամբ, %*	*Տեսակարար կշիռը հանրապետական ծավալում, %*
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	109.6	126.5	5.3
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	65.1	95.0	7.9
Շինարարության ծավալը	15.4	111.4	3.7
Մանրածախ առևտրի շրջանառությունը	33.0	92.7	2.5
Ծառայությունների ծավալը	20.9	88.4	1.2
Ընդամենը մարզում	**244.2**	**106.9**	**3.9**
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլն ԿՎտ/ժ)	9195.8	109.3	3.6
Արտաքին ապրանքաշրջանառությունը (հազ. դոլար), այդ թվում՝	277.1	114.2	3.9
ա/ արտահանում	181.1	128.0	7.1
բ/ ներմուծում	96.0	94.9	2.1

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին մարզի տնտեսության հիմնական հատվածների համախառն արտադրանքը (ծավալը) կազմել է 244.2 միլիարդ դրամ (հանրապետականի 3.9%-ը), աճը 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսների նկատմամբ կազմել է 106.9%:

Մեկ շնչին ընկնող տնտեսական ցուցանիշները
ՀՀ-ում և Լոռու մարզում 2020թ. հունվար-դեկտեմբեր)
(մշտական բնակչության թիվը 01.01.2021թ. ՀՀ – 2959.7 հազ. մարդ,
Լոռի – 213.3 հազ. մարդ)

(մլն. դրամ)

	Չափի միավոր	*ՀՀ*	*Լոռի*	*Լոռի ±*	*Լոռի %*
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	դրամ	699492.0	513985.5	-185506.5	73.5
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	դրամ	3841068.9	305203.9	-3535865.0	7.9
Շինարարության ծավալը	դրամ	139821.9	72301.9	-67520.0	51.7
Մանրածախ առևտրի շրջանառությունը	դրամ	437568.0	154804.0	-282763.9	35.4
Ծառայությունների ծավալը	դրամ	577237.8	98372.2	-478865.6	17.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	ԿՎտ/ժ	2609.5	1291.4	-1318.2	49.5
Արտաքին ապրանքաշրջանառությունը	դոլար	2400.2	1299.2	-1101.0	54.1
ա/ Արտահանում	դոլար	859.7	849.1	10.6	98.8
բ/ Ներմուծում	դոլար	1540.5	450.1	-1090.3	29.2
Համայնքների սեփական եկամուտներ (փաստ)					
ա/ ընդամենը	***դրամ***	***14175.0***	***10857***	***-3318.0***	***76.6***
բ/ առանց Երևան քաղաքի	***դրամ***	***11502.0***	***10857***	***-645.0***	***94.4***

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
2020Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2020թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 93.8%-ով կամ նախատեսված 12215.0 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 11454.4 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 8278.2 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 2312.6 մլն. դրամ:

(հազար դրամ)

h/h	Եկամուտների անվանումը	2019թ. Բյուջե			2020թ. Բյուջե			2020թ-ի աճը 2019թ-ի նկատ.	2020թ-2019թ-ի փաստ. նկատ. (%)
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	348774.0	326255.7	93.5	352373.8	272941.9	77.5	-53313.8	83.7
2	Գույքահարկ	894574.0	920608.6	102.9	1005573.7	1012627.6	100.7	92019.0	110.0
3	Պետական տուրք	51700.0	70157.1	135.7	57800.0	47225.9	81.7	-22931.2	67.3
4	Տեղական տուրք	129147.1	116079.0	89.9	119029.5	106218.9	89.2	-9860.1	91.5
5	Գույքի վարձ. վճար	241411.7	262652.8	108.8	273421.5	267350.0	97.8	4697.2	101.8
6	Այլ հարկային եկամուտներ								
7	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողություններ ի դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	7418.2	10600.5	142.9	10698.0	4417.0	41.3	-6183.5	41.7
8	Տեղական վճարներ	637472.6	640532.1	100.5	549069.6	426564.7	77.7	-213967.4	66.6
	որից աղբահանության վճար	318378.6	291794.6	91.7	328204.2	267288.6	81.4	-24506.0	91.6
9	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	4599.0	5711.3	124.2	5539.0	9548.1	172.4	3836.8	167.2

10	Մուտքեր տույժերից, տուգանքներից	2260.0	5917.8	261.9	3000.0	9605.4	320.2	3687.6	162.3
11	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	10365.0	10091.7	97.4	2021.2	2021.1	100.0	-8070.6	20.0
12	Այլ եկամուտներ	121685.4	166726.1	137.0	123891.2	154608.1	124.8	-12118.0	92.7
13	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4760718.3	4759218.3	100.0	5814645.0	5828708.4	100.2	1069490.1	122.5
	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ			#DIV/0!			#DIV/0!	0.0	#DIV/0!
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	85462.6	80454.4	94.1	79784.1	79809.7	100.0	-644.6	99.2
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	91279.5	83270.6	91.2	53017.0	55003.1	103.7	-28267.4	66.1
ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից			-30.9			1510.0		1540.9	-4891.9
Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ		7386867.3	7458245.2	101.0	8449863.6	8278160.0	98.0	819914.8	111.0
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	33413.4	33413.4	100.0	37,061.5	37,061.5	100.0	3648.1	110.9
Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր		7420280.7	7491658.6	101.0	8486925.1	8315221.5	98.0	823562.9	111.0
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	20285.6	18392.0	90.7	77444.7	8169.7	10.5	-10222.3	44.4
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	1185107.7	776677.8	65.5	2043978.4	1700913.5	83.2	924235.7	219.0
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	439382.7	355289.7	80.9	664411.5	557430.4	83.9	202140.8	156.9
4	Այլ մուտքեր	48060.0	48282.5	100.5	440995.7	264486.9	60.0	216204.4	547.8
ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի									

ֆոնդային մասից									
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1692836.0	1198641.9	70.8	3226830.2	2531000.5	78.4	1332358.6	211.2
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	1029804.1	1029804.1	100.0	1165637.7	1165637.7	100.0	135833.6	113.2
Ֆոնդային բյուջեի մուտքեր		2722640.1	2228446.0	81.8	4392467.9	3696638.2	84.2	1468192.2	165.9
Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ		2439041.9	2525210.2	103.5	2500396.4	2312617.6	92.5	-212592.6	91.6
Ընդամենը բյուջեի եկամուտներ		8640320.7	8301597.5	96.1	11012282.3	10251730.1	93.1	1950132.6	123.5
Ընդամենը բյուջեի մուտքեր		9703538.2	9364814.9	96.5	12214981.5	11454429.3	93.8	2089614.3	122.3

Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 98.0%-ով՝ նախորդ տարվա 101.0%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 78.4%-ով՝ նախորդ տարվա 70.8%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2019թ. կտրվածքով կազմել է 2525.2 մլն դրամ, 2020թ. կտրվածքով կազմել է 2312.6 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2019թ-ի նկատմամբ կազմել է 91.6%, բացարձակ նվազումը 2019-ի նկատմամբ՝ 212.6 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտները նվազում են գրանցել բոլոր տարածաշրջաններում, որից՝ Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 94.6%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 93.7%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 93.5%, Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 90.7%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 89.5%:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 46.0%, ապա Թումանյանի տարածաշրջանը 20.1%, Սպիտակի տարածաշրջանը՝ 11.9%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 11.7%, Տաշիրի տարածաշրջանը՝ 10.3%:

2020թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների



2020թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 37 համայնքներում (համայնքների 66.1%-ը, այդ թվում՝ Սպիտակում՝ 16 համայնք, Գուգարքում՝ 14 համայնք, Թումանյանում՝ 4 համայնք, Ստեփանավանում՝ 2 համայնք, Տաշիրում՝ 2 համայնք:

Սեփական եկամուտների գծով 2020թ. համար նախատեսվել են 2500.4 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 2312.6 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 92.5%, 2019թ. համար նախատեսվել է 2439.0. մլն. դրամ, կամ2020թ. աճը 2019թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 102.5%, փաստացիի նկատմամբ 99.0%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2020թ. համար կազմում է 10.8 դրամ, 2019թ. համար կազմել է 11.9 դրամ (213.0 հազ. մարդ) :

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2019 թ-ին սեփական եկամուտները մինչև 80% կատարել էին 2 համայնք, 2020 թ-ին՝ 16 համայնք, 80-100% համապատասխանաբար 7 և 24 համայնքներ, 100%-ից ավել՝ 47 և 16 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը աճել է 14-ով, 80-100%-ից ավել աճել՝ 17-ով, իսկ 100%-ից ավել նվազել՝ 11-ով:



2020 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 11.8%, գույքահարկինը՝ 43.8%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 11.6%, տեղական տուրքը՝ 4.6%, պետական տուրքը՝ 2.0%, այլ եկամուտները՝ 26.2%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 12.9%, 36.5%, 10.4%, 4.6%, 2.8% և 32.8%-ի դիմաց, ինչը խոսում է այն մասին, որ 2020թ. սեփական եկամուտների տեսակարար կշռում ավելացել է գույքահարկի բաժինը, որը պայմանավորված է հիմնականում փոխադրամիջոցների քանակի ավելացմամբ և հետևաբար հարկի գումարի ավելացմամբ:

2020թ. հողի հարկի 352.4 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 272.9 մլն դրամ, կամ 77.5%, (2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 83.7%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 53.3 մլն. դրամով: Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2020թ. համար կազմում է 1281 դրամ, 2019թ. համար նախատեսվել է 1532 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը թերակատարվել է բոլոր տարածաշրջաններում՝ Տաշիրի տարածաշրջանում՝ 72.4%, Թումանյանի տարածաշրջանում 73.9%, Ստեփանավանի տարածաշրջաններում 79.0%, Սպիտակի տարածաշրջանում 79.3%, Գուգարքի տարածաշրջանում 81.2%:

Հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի հավաքագրումը 2016-2020թթ. (մլն. դրամ)

Գույքահարկի գծով 2020թ. համար նախատեսվել է 1005.6 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 1012.6 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 100.7%, (2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 110.0%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 92.0 մլն. դրամ:

Գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 100.7%, Գուգարքի տարածաշրջանում՝ 101.2%, Սպիտակի տարածաշրջանում՝ 101.6%, Թումանյանի տարածաշրջանում՝ 101.5% , Տաշիրի տարածաշրջանում՝ 114.8% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 84.9%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 43 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 28 համայնքներ:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Թումանյանում՝ 119.2%, Գուգարքում՝ 110.3%, Ստեփանավանում՝ 108.5%, Սպիտակում՝ 105.9%, Տաշիրում՝ 102.9%, :

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



2020թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 273.4 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 267.4 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 97.8%, (2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 101.8%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 4.7 մլն. դրամ:



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների հավաքագրումը 2016-20թթ. (հազ. դրամ)

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 89.%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 89.9%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը նվազել է 9.9մլն. դրամով:

Պետական տուրքի գանձումը կազմել է 81.7%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 22.9 մլն. դրամով:

Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնա-ծախսածածկման եղանակով կատարելու և անհրաժեշտ մակարդակի գանձումներ ապահովելու նպատակով մարզի բոլոր համայնքներում, բացի շատ փոքր համայնքներից, առաջարկվել է նախատեսել աղբահանության գծով վարձավճարներ և ապահովել դրանց գանձումը: Աղբահանության գծով վարձավճարները նախատեսվել է 2020թ. 328.2 մլն. դրամ կամ փաստացի 267.3 կատարվել է մլն. Դրամ, կատարողականը՝ 81.4%:

2020թ. պետական բյուջեից մարզի համայքներին նախատեսվել է 5424,4 մլն.դրամ ֆինանսական համահարթեցման և 394.4 մլն. դրամ այլ դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով, 2021թ. համար նախատեսվել է 6590,9 մլն. դրամ դոտացիա, 2020թ. նկատմամբ 1,166,5 մլն. հազ. դրամ ավել, կամ աճը նախատեսվել է 21.5%:

2020թ. մարզի 41 համայնքներ ներկայացրել են 98 սուբվենցիոն ծրագրեր, կատարված աշխատանքների համար պետական բյուջեից վճարվել է 1493.0 մլն. դրամ, 2019թվականից հետաձգված ծրագրերի համար 449.9 մլն դրամ, կամ ընդամենը 2020թ. ընթացում համայնքներին վճարվել է 1700.9 մլն. դրամ սուբվենցիա:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2020թ-ի համար նախատեսվել են 8486.9 մլն. դրամ, 31.12.2020թ. դրությամբ փաստացի վճարվել է 7381.0 մլն. դրամ, կամ 87.0%, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 4392.9 մլն. դրամ, որից վճարվել է 2294.6 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 52.2%-ով:

հազար դրամ

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2816855.9	2546950.1	90.4	34.5
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	6889.0	4406.3	64.0	0.1
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ	165.0	0.0		

	ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	295630.3	245216.5	82.9	3.3
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	720240.3	668520.6	92.8	9.1
	այդ թվում աղբահանություն	623556.3	592143.5	95.0	
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	470349.1	402673.7	85.6	5.5
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	4230.0	3597.2	85.0	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	728176.7	626875.1	86.1	8.5
9	ԿՐԹՈՒԹՅՈւՆ	2377386.5	2145050.0	90.2	29.1
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	209034.4	180233.4	86.2	2.4
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	857968.1	557430.4	65.0	7.6
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	664411.5	557430.4	83.9	7.6
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		8486925.3	7380953.4	87.0	80.9
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	425391.5	301858.4	71.0	13.2
	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	263.0	263.0	100.0	0.0
	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	1000.0	999.6	100.0	0.0
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1210358.4	632932.0	52.3	27.6
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	169220.7	92631.3	54.7	4.0
	այդ թվում աղբահանություն	18983.0	16780.5	88.4	
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1878080.0	837158.9	44.6	36.5
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	245.0	245.0	100.0	0.0
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	344419.3	264285.7	76.7	11.5

7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	327878.3	164247.6	50.1	7.2
8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	36016.0	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		4392872.3	2294621.5	52.2	25.2
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		12215386.1	9118144.4	74.6	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2020թ. համար նախատեսվել են 12215.4 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 11454.4 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 93.8%:

Մարզի 56 համայնքների 2020թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1948,6 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 26.4%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 89.9%-ը: Համայնքներում վարչական ծախսերի ընդհանուր ծավալում բարձր է մնում աշխատանքի վարձատրության հոդվածով կատարվող ծախսերի տեսակարար կշիռը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 120.0 հազար դրամ, որը Ձորագյուղ համայնքի պարտքն է համայնքապետարանի աշխատակիցներին:

Ըստ ոլորտների բյուջեի վարչական մասի ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 29.1%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 15.9%-ը:

Աղբահանության գծով համայնքային բյուջեներով որպես ընթացիկ ծախս 2020թ. նախատեսվել 623.6 մլն. դրամ, փաստացի կատարվել է 592.1 մլն. դրամ, 2019թ. բյուջեներով նախատեսվել է 635.8 մլն. դրամ, փաստացի կատարվել է 607.9 մլն. դրամ, կամ ծախսի նվազումը կազմել է 2.6%:

Աղբահանության գծով մարզում ծախսեր իրականացրել են 44. համայնքներում, որի համար 2020թ. ծախսվել է 608.9 մլն. դրամ, որից վարչական բյուջեով՝ 592.1 մլն. դրամ, ֆոնդային բյուջեով՝ 16.8 մլն. դրամ: Աղբահանության գծով ընթացիկ ծախսը կազմել է վարչական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի 8.0%-ը, կամ մարզում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2780 դրամ:

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2020թ. կազմել է 180.2 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 2.4%-ը: Մարզի 56 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 50 համայնքներում, բացառություն են կազմել Ձորագյուղ, Ձորագետավան, Հալավար, Քարաբերդ, Ղուրսալի և Ան

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Զարգացման ծրագրեր

Համաձայն Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարության 2020թ. գործունեության ծրագրի մարզում պլանավորվել է շուրջ 54,985.431.2 հազ. դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **46,025,197.7** հազ. դրամ, այդ թվում՝
  - ✓ Սեփական միջոցներ՝ 33,025.529.1 հազար դրամ,
  - ✓ Վարկային միջոցներ՝ 12,999,668.6 հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **1,174,813.0** հազար դրամ,

- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **1,783,296.9** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **5,178,123.6** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **824,000**.0 հազար դրամ:

2020թ. փաստացի իրականացվել է 40,761,644.2 մլն դրամի աշխատանքներ (88.56%), որից՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **36,137,750.4** հազ. դրամ, այդ թվում՝
  - ✓ Սեփական միջոցներ՝ 31,303,532.9 հազար դրամ,
  - ✓ Վարկային միջոցներ՝ 4,834,217 հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **611,181.6** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **1,325,836.6** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **2,561,961.7** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **124,914.0** հազար դրամ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտ

Մասնագիտական կարողությունների զարգացում

2020թ-ին Վանաձորի Տեխնոլոգիական Կենտրոնում իրականացվել կամ մեկնարկել ու ընթացքի մեջ են (ընդ որում, համավարակային իրավիճակով պայմանավորված՝ նաև հեռավար ձևաչափով) 4 մասնագիտական դասընթացներ, ընդհանուր՝ 46 մասնակիցներով և հետևյալ ուղղություններով.

- WEB ծրագրավորման հիմունքներ (1 խումբ, 1 փուլով),
- Java Script (1-ին փուլ, 1 խումբ),
- C# (1-ին փուլ, 1 խումբ),
- Adobe Illustrator (1 խումբ)

ՁԻՀ-ի և ՀԱՊՀ-ի միջև ստորագրված հուշագրի շրջանակում շարունակվում են Պոլիտեխնիկական համալսարանի որոշ դասընթացների և պրակտիկաների իրականացումը ՎՏԿ-ում:

Հայաստանում Yandex ընկերության Ծրագրավորման դպրոցի շրջանակում 9-ից 11-րդ դասարանների աշակերտներից կազմված 3 խմբերում իրականացվող դասընթացներին մասնակցել է 40 աշակերտ:

ՎՏԿ «Տեխնոլոգիական դպրոց»-ի դասընթացներին, որոնց մասնակիցները սովորում են ծրագրավորման հմտություններ, ինժեներական 3D մոդելավորում, ինչպես նաև ստանում գիտելիքներ տեխնիկական անգլերեն, տրամաբանութուն և մաթեմատիկա առարկաներից, մասնակցում է 10-ից 16 տարեկան 72 աշակերտ: Հունիսի 2-ին տեղի է ունեցել «Տեխնոլոգիական դպրոց»-ի վկայականների հանձման արարողությունը, որը մեկնարկել էր 2019թ. նոյեմբերին:

Հունիսի 8-ին մեկնարկել են ՎՏԿ «Ամառային դպրոցի» առցանց դասընթացները: 2020թ-ի հունիսի 8-ից օգոստոսի 15-ը ներառյալ կկազմակերպվի ամառային դպրոց՝ 10-ից 18 տարեկան դպրոցականների համար: 70-ից ավել երեխա մասնակցում են 10 շաբաթ տևողությամբ հագեցած ծրագրերին:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմադրամի (ՁԻՀ), Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի և Լոռու մարզպետարանի կրթության վարչության նախաձեռնությամբ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակում անընդհատ կրթվելու և նոր գիտելիքներ ստանալու անհրաժեշտությունը, իրականացվում են հեռավար դասընթացներ Լոռու մարզի դպրոցականների համար: Մարզի դպրոցներից հեռավար դասընթացներին մասնակցել են Վանաձորի թիվ 20 դպրոցի 6-ից 9-րդ դասարանի աշակերտները: Կողմերի համագործակցության շրջանակում, կազմակերպված «Computer science» ծրագրի ներքո, մայիսի 8-ից մինչև մայիսի 30-ը իրականացվել են նաև հեռավար դասընթացներ՝ Լոռու մարզի թվով 21 դպրոցների աշակերտերի հետ:

Բիզնես զարգացում և աքսելերացիա

Շարունակելով աջակցել տարածաշրջանի կայուն զարգացմանը, օգնելով սկսնակ և գոյություն ունեցող ընկերություններին, տեխնոլոգիական թիմերին իրենց գաղափարները վերածել հաջողակ բիզնեսի, ինչպես նաև աջակցել առաջատար հայաստանյան և միջազգային ՏՏ և Բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններին՝ իրենց գործունեությունը ծավալել Վանաձորում՝ հաշվետու ժամանակաընթացում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Անձնակազմը համալրելու և ընկերությունները զարգացնելու նպատակով ՎՏԿ-ում գործող ՎանԱյԹի և Հայ Թեք Գայթվեյ ընկերությունների հետ կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ, որոնց հաջողությամբ ավարտող մասնակիցները կարող են աշխատանքի անցնել նշված ընկերություններում:

Երկարաժամկետ կտրվածքով որակյալ կադրերով ապահովելու նպատակով ԱրխիԴաչ ընկերության հետ համատեղ իրականացվում է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկ Համալսարանի Վանաձորի մասնաճյուղի Շինարարության ամբիոնի ծրագրերի փոփոխություն՝ ըստ ժամանակակից եվրոպական ստանդարտների պահանջների:

ՎՏԿ շենքում գործում է նաև Համատեղ աշխատանքային տարածք, որտեղ նորարար բիզնես գաղափարով հանդես եկած սկսնակ թիմերի հետ տարվում են ինկուբացիայի և աքսելերացիոն գործընթացներ: Ներկայումս կենտրոնում իրենց գաղափարի վրա են աշխատում 4 թիմեր, որոնք ամենօրյա խորհրդատվական ծառայություններ են ստանում ՎՏԿ-ի մասնագետների կողմից:

ՎՏԿ-ում գործող բոլոր ընկերությունների համար տրամադրվում է անձնակազմը համալրելու աջակցություն: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում նոր աշխատակիցներով են համալրվել «Թիմզ» ՍՊԸ, «ՎանԱյԹի», «Արխիդաչ», «Արդեսք» և «Ապոլլո Էքսպրես» ընկերությունները:

Վանաձարում իրենց գործունեությունը ծավալելու մտադրություն ունեցող 3 թիմեր և ընկերություններ անցել են Մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթի եզրափակիչ փուլ, որոնց հետ Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը իրականացրել է երկշաբաթյա առցանց սեմինարներ և դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՎՏԿ ներգրավված ընկերությունների և կազմակերպությունների թիվը 12-ն է, աշխատատեղերի թիվը՝ շուրջ 170:

2020 թվականին Վանաձորի տեխնոլոգական կենտրոնի գործունեությունն իրականացվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի սեփական ֆինանսական միջոցների հաշվին: Այլ աղբյուրներից ֆինանսավորում չի տրամադրվել:

Զբոսաշրջություն

2020թ.-ին նախատեսված էին ծրագրեր էկոտուրիզմի զարգացման ուղղությամբ դեպի պատմամշակութային կոթողներ տանող ճանապարհների բարեկարգման, զբոսաշրջային երթուղիների մշակման, հյուրատների և այլ ենթակառույցների ստեղծման աշխատանքներ:

Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում կյանքի կկոչվեն մարզպետարանի եւ մասնավորի հետ համատեղ մշակված ծրագրեր՝ ուղղված նոր հյուրատների ստեղծմանը, զբոսաշրջային երթուղիների մշակմանը:

Ընդհանուր առմամբ 2020թ-ին զբոսաշրջության բնագավառում ներդրումների ծավալը կազմել է 83,0 մլն դրամ:

2020թ-ին գործարկվեց Ալավերդի համայնքում Մենձ Էր քարանձավային տուրիզմի կենտրոնը, որի ներդրումների ծավալը կազմում է շուրջ 40.0 մլն դրամ:

2020թ-ին գործարկվեց նաև ԵՄ համաֆինանսավորմամբ ՀՀ Լոռու, Արմավիրի եւ Սյունիքի մարզերում իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի ենթակառուցվածքային բաղադրիչի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում 2019թ հիմնված «ճամփեզրյա կայանը»: Այն տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց է: Ներդրումների ծավալը կազմել է 15.0 մլն դրամ և ստեղծվել է 9 նոր աշխատատեղ: Կայանի կողմից հետագաում կարող են կազմակերպվել տեղական ապրանքների ցուցահանդեսներ, տոնավաճառներ,

փառատոններ, վարպետաց դասեր և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:

ԵՄ-ն բիզնեի համար ՀՀ-ում նորարական զբոսաշրջության և նորագույն տեղնոլոգիաների զարգացում ծրագիր շրջանակներում 6 տնտեսվարողի տրվել են 8000 ական Եվրո դրամաշնորհ:

2020թ.-ին Վանաձոր, Ալավերդի, Լոռի Բերդ համայնքների կողմից մշակվել են զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կյանքի կկոչվեն ներդրումների առկայության դեպքում:

<u>Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ոլորտ</u>

Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից ՓՄՁ աջակցության ծրագրերի շրջանակում 2020 թվականի ընթացքում կատարվել է.

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցության ծրագիր -5,2 մլն դրամ (1շահառու)
Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառում - 336,4մլն դրամ (42 շահառու) :

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով 2020թ-ին իրականացվել են գործատուներին աջակցման մի շարք ծրագրեր՝ ավելի քան 242,3 մլն դրամ արժողությամբ, այդ թվում՝

- ✓ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում:
- ✓ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին:
- ✓ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում

ՄԱԿ-ի մարդկային անվտանգության հիմնադրամի (UNDP) միջոցներով «Մարդկային անվտանգության բարելավումը Հայաստանի համայնքներում» ծրագրի շրջանակներում Ալավերդի Համայնքում 2 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 5,4 մլն դրամի ֆինանսական աջակցություն: Ծրագրի արդյունքում Ալավերդի համայնքում հիմնվել է Պանրի և պլաստիկ թափոնների արտադրամաս:

<u>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</u>

ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է արդյունաբերությունը, որի հիմնական ուղղությունները հանքագործական և մշակող արդյունաբերություններն են (մասնավորապես՝ մետաղագործական, սննդի և թեթև, այդ թվում՝ Վանաձորում թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

2020թ. Հունվար-դեկտեմբեր ամիսներին մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է 109,633,1 մլն դրամ, նախորդ տարվա 2019թ. նույն ժամանակահատվածի 86 634,9 մլն դրամի դիմաց: Համադրելի գներով թողարկվել է 108 674,1 մլն դրամի արտադրանք, արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է կազմելով նախորդ տարվա նկատմամբ 125,4%: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ-ի արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 5.3% (6-ր ցուցանիշը):

Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 114,298,9 մլն դրամ աճի ինդեքսը 141,3%, որից ԱՊՀ երկրներ 1295,6 մլն դրամ (աճը՝ 107,4%, տեսակարար կշիռը՝ 11,3%), ԵԱՏՄ 1059,4 մլն դրամ տեսակարար կշիռը 0,9% աճը 107,8%, այլ երկրներ 65,709,4 մլն դրամ (աճը՝ 182,3%, տեսակարար կշիռը իրացման ծավալում 57,5%):

Արտասահմանյան երկրներ առաքված արտադրանքի տեսակարար կշիռը իրականացված արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է.

- ✓ Հանքարդյունաբերությունում- 54,6% (62379,9 մլն դրամ)
- ✓ Մշակող արդյունաբերությունում- 36,3% (41471,3 մլն դրամ)
- ✓ Հագուտի արտադրությունում- 5,5% (6242,9 մլն դրամ)
- ✓ Էլեկտրական սարքերի արտադրությունում -0,3 % (39,3 մլն դրամ)
- ✓ Խմիչքի արտադրությունում - 0,12% (143,5 մլն դրամ)
- ✓ Սննդամթերքի արտադրությունում- 29,2% (33356,2մլն դրամ)
- ✓ Քիմիական նյութեր - 0,4% (401,5 մլն դրամ)
- ✓ Մեքենաների և սարքավորումների արտադրությունում-0,2% (268,9 մլն դրամ)

Ընդհանուր առմամբ մարզի արդյունաբերության պատրաստի արտադրանքի իրացման մեջ արտահաման տեսկարար կշիռը կազմել է 59,5%:

Մարզի արդյունաբերական հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2020թ. հունվար- դեկտեմբերի արդյունքներով ունեն հետևյալ տեսքը.

- ✓ Հանքարդյունաբերություն՝ 57996,6 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 65,5% և տեսակարար կշիռը 52,9%
- ✓ Մշակող արդյունաբերություն՝ 41471,3 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 1,6% և տեսակարար կշիռը 36,3%
- ✓ Էեկտրաէներգիայի արտադրություն՝ 9195,8 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 9,3% և տեսակարար կշիռը 8,04%
- ✓ Ջրամատակարարում, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1251,8 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 2,,2%, տեսակարար կշիռը 1,1%:



Փաստորեն 2019թ.-ի հունվար-դեկտեմբերի համեմատությամբ հանքարդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրությունն ունեցել են ծավալների աճ, մշակող արդյունաբերությունը և ջրամատակարարումը՝ ծավալների նվազում:

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետական արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

- ✓ Հանքարդյունաբերություն-14,4 %
- ✓ Մշակող արդյունաբերություն- 3,0 %
- ✓ Էլեկտրաէներգիայի արտադրություն- 3,6 %
- ✓ Ջրամատակարարում -5,8 %

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2020թ. քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության, բնակարանային եւ ենթակառուցվածքների ոլորտում մարզում նախատեսված 46,275.0 մլն դրամից իրականացվել է շուրջ 13,505.7 մլն դրամի շինարարական աշխատանքներ

այդ թվում՝ քաղաքաշինության ոլորտում փաստացի իրականացվել են 1.536.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ,

Ըստ ֆինանսավորման աղբյուրների ունի հետևյալ պատկերը՝

- ✓ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ – 1,387.8 մլն դրամի, որից
- ✓ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե– 1,387.8 մլն դրամ
- ✓ ՀՏԶՀ ծրագրով 148.2 մլն դրամ

1.536.0 մլն դրամի շինարարական աշխատանքները ըստ ոլորտների բաշխվել են հետեյալ կերպ՝

/h	Ըստ ոլորտների	Ընդամենը մարզում	ՀՀ պետական բյուջե	ՀՏԶՀ
	Կրթական օբյեկտներ	1.510.7	1,387.8	122.9
	Այլ օբյեկտներ	25.3		25.3
	Ընդամենը	1.536.0	1,387.8	148.2

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/ – 154.8 մլն դրամի (դպրոցների գազաֆիկացում, վերգետնյա անցումի կառուցում, ջրագծերի փոխարինում և լուսավորության անցկացում) աշխատանքներն ավարտված են:

ՀՏԶՀ-ի /ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ/ ծրագրով նախատեսված էր իրականացնել շուրջ 1,033.5 մլն դրամի շինարարական աշխատանքներ, 2020թ. իրականացվել է 154.8 մլն դրամի, իսկ մնացած աշխատանքներ տեղափոխվել են իրականացվելու 2021թ-ին: Այս ծրագրերի իրականացումը մեծ աջակցություն է մարզի համայնքներին:

Քաղաքաշինության ոլորտում առավել խոշոր ծրագրերն են.

- ✓ Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի վերակառուցում: Ծրագրային արժեքը՝ 647.656 մլն. դրամ: Աշխատանքները սկսվել են 2017թ.: 2020թ. իրականացվել է 516,178 մլն դրամի աշխատանք: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:
- ✓ Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ: Ծրագրային արժեքը՝ 1.239 մլրդ.դրամ: Աշխատանքները սկսվել են 2017թ-ին: Իրականացվել է 871.587 մլն.դրամի

շինարարական աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

✓ Ստեփանավանի թիվ 3 դպրոցի կառուցում իրականացվում է ՀՏՋՀ-ի կողմից՝ 1200.0 մլդ դրամի Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2019թ:

✓ Վանաձորի Ռաֆֆու անվան N 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի իրականացվում է ՀՏՋՀ-ի կողմից: Ծրագրային արժեքը՝ 110.237 մլն.դրամ: 2020թ. իրականացվել է 77.919 մլն դրամի աշխատանք: Աշխատանքները կավարտվեն 2021թ.;

✓ Վերգետնյա անցումի կառուցում Վանաձորի թիվ 7 դպրոցի մոտ – ծրագիրն իրականացվել է ՀՏՋՀ-ի կողմից: Ծրագրային արժեքը՝ 26.576 մլն.դրամ: Աշխատանքներն ավարտվել են 2020թ. հոկտեմբեր ամսին՝ 25.258 մլն.դրամ արժեքով:

✓ Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերակառուցում - Ծրագիրն իրականացվում է ՀՏՋՀ-ի կողմից՝ 55.0 մլն.դրամ ծրագրային արժեքով: 2020թ. իրականացվել է 45.0 մլն.դրամի աշխատանք: Աշխատանքները կավարտվեն 2021թ.:

✓ Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում: Ծրագրային արժեքը՝ 798.0 մլնդրամ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2017թ: 2018թ. կատարվել է 196.4 մլն.դրամի աշխատանքներ: Ծրագիրն իրականացվել է ՀՏՋՀ-ի կողմից՝ Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: 2019թ. իրականացվել է 225.0 մլն դրամի աշխատանքներ: Աշխատանքներն ավարտված են:

ՀՀ Լոռու մարզի աղեփի գոտու գյուղական բնակավայրերում բնակապահովման խնդիրների վերաբերյալ.

Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովման հարցը:

2019թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. թիվ 424-Ն որոշմամբ հաստատված, հավելված թիվ 1-ում ընդգրկված 198 գույքը «Գլենդել Հիլզ» ՓԲԸ եւ սնանկության հարցերով կառավարչից ընդունվել է և Հայաստանի Հանրապետության անվամբ գրանցվել է սեփականության իրավունք 197 գույքի նկատմամբ: Նշված հավելվածից ըստ պատրաստակամության աստիճանի ընտրվել է 44 գույք:

ՀՀ կառավարության որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետի և «Ֆուլեր տնաշինական կենտրոն» հասարակական բարեգործական կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր:

2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1855-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է 27,5 մլն դրամ՝ 2015 թվականին Գուգարք համայնքում հրդեհից տուժած 7 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու համար: Շահառու ընտանիքներին տրամադրվել են ԲԳՎ- ներ, ծրագիրն ավարտվել է 2020 թվականի հուլիսի 1-ին:

2019թվականի ապրիլի 16-ին մեկնարկվել է աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակարանային ապահովման ծրագիրը:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14 N 1610-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է 674,932.0 հազ. դրամ՝ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 121 ընտանիքի վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով՝ ֆինանսական աջակցության տրամադրման համար: Ծրագիրն ավարտվել է 2020թ. նոյեմբեր ամսին:

ՀՀ կառավարության 07.05.2020թ. թիվ 712-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է՝

1) 2,234,936.8 հազ. դրամ, որն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմին, որից՝

ա. 2,185,516.8 հազ. դրամը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 153 ընտանիքի համար բնակելի տների կառուցման նպատակով (2,183,527.8 հազ. դրամը՝ բուն շինարարական, իսկ 1,989.0 հազ. դրամը՝ արդեն շինարարությունն ավարտված բնակելի տների չափագրման աշխատանքների համար),

բ. 49,096.0 հազ. դրամը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում և գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 9 ընտանիքի բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման համար, 2020թ. դեկտեմբերին բոլոր 9-ը ԲԳՎ-ները իրացվել են և գնվել բնակարաններ:

գ. 324.0 հազ. դրամը՝ սույն որոշման 6-րդ կետով նախատեսված նոտարների դեպոզիտ հաշիվների սպասարկման նպատակով նոտարներին փոխանցելու համար.

152 շահառու ընտանիքից 146-ի հետ «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական կազմակերպությունը կնքել է պայմանագրեր, որի աշխատանքներն սկսված են: Մնացած 6 ընտանիքի հետ պարզվում են նախագծերի և թերի փաստաթղթերի նեկայացման հարցերը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բնակապահովման հավաստագիր է տրվել 3 զոհվածի ընտանիքի՝ 15,913 մլն. դրամ, որից՝ 2 ընտանիքի՝ յուրաքանչյուրին՝ 4.117 մլն.դրամ, 1 ընտանիքի՝ 7.679 մլն.դրամ:

<u>Քաղաքաշինության վարչության կողմից արձանագրված խնդիրները և վերացման ուղիները</u>

Համայնքներում իրականացված վարչական ստուգումների ժամանակ արձանագրվել են թերություններ, որոնք բնորոշ են համայնքների մեծամասնության համար, մասնավորապես մարզի 7 համայնքներ ունեն գլխավոր հատակագծեր, մնացածները չունեն համայնքների ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Համայնքների միավորման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կազմել խոշորացված համայնքների համակցված գլխավոր հատակագծեր: 2021թ. նախատեսվում է մշակել միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման 2 փաստաթուղթ՝ ՀՀ Լոռու մարզի 22 բնակավայրերի համար:

Համայնքներում չի վարվում քաղաքաշինական կադաստր, համայնքները չունեն քաղաքաշինական կանոնադրություն:

Ըստ հաստատված ժամանակացույցի, քաղաքաշինության բնագավառի գործունեության վարչական ստուգումներ է իրականացվել բոլոր համայնքներում, արձանագրվել են խախտումներ և կազմվել համապատասխան արձանագրություններ: Տրվել է համապատասխան հանձնարարականներ թերությունները վերացնելու ուղղությամբ:

2019թ. համեմատությամբ շինարարության թույլտվությունների, ավարտական ակտերի ձևակերպման և շահագրգիռ մարմիններին ներկայացման գործընթացը բարելավվել է 2020թ.:

2021թ.շինարարական ծրագրերի հիմնական ուղղությունները լինելու են՝

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը,

- ✓ 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը,

- ✓ աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթեւան մնացած ընտանիքների բնակապահովումը,
- ✓ Խոշորացված համայնքների գլխավոր հատակագծերի և շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը,
- ✓ Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացում և վերանորոգումը, էներգոխնայողության համակարգերի տեղադրումը :
- ✓ Մշակութային օբյեկտների շենքերի կառուցումը և վերանորոգումը:
- ✓ Համայնքներում մանկապարտեզների հիմնումը և բարեկարգումը
- ✓ Քաղաքային և գյուղական համայնքներում առողջապահական հիմնարկների վերանորոգում, կառուցում և համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:

Սուբվենցիոն ծրագրեր

2020 թվականին Լոռու մարզի **40** համայնքներում նախատեսված էր թվով **97** ծրագիր՝ ընդհանուր մոտ 3774.0 մլն դրամ, որից պետական բյուջեից հատկացվել է 2 050.0մլն դրամ, համայնքային ներդրում՝ 1 480.0 մլն դրամ և այլ ներդրողներ (ՄԱԶԾ, բարերարներ, ՀԿ-ներ)՝ 244.0 մլն դրամ, այդ թվում՝

1. Թվով 25 ասֆալտապատման ծրագրեր մարզի 22 համայնքներում ընդհանուր 1 293.0 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 708.0 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 556.5 մլն դրամ և այլ ներդրողներ)՝ 28.5 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Լոռի Բերդ	Լոռի Բերդ բնակավայրի Աշոտ Երկաթ փողոցի 1-ին նրբանցքի ասֆալտապատում	11.791
2	Ստեփանավան	Համայնքի մի շարք փողոցների մայթերի հիմնանորոգում	76.779
3	Գուգարք	Համայնքի 1-ին և 6-րդ փողոցների ասֆալտապատում	41.493
4		Համայնքի 14-րդ փողոցի և Էներգետիկների 5-րդ փողոցի 7-րդ շենքի անձրևաջրերի հեռացման առվակների կառուցում	12.702
5	Շահումյան	Համայնքի 1-ին փողոցի ասֆալտապատում	36.199
6	Վանաձոր	Չուխաջյան, Լալվարի փողոցների և մայթերի կապիտալ նորոգում	424.639
7	Լեռնապատ	Համայնքի 11-րդ փողոցի չասֆալտապատված հատվածի վերականգնում և ասֆալտապատում	14.155
8	Բազում	Ներհամայնքային ճանապարհների սալարկում	24.802

9	Դարպաս	Ճանապարհային պատվածքի և ծածկի ամբողջական փոխարինում	16.273
10	Օձուն	Համայնքի բնակավայրերի փողոցների վերանորոգում և ասֆալտապատում	55.341
11	Ախթալա	Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում՝ ասֆալտապատման և տուփապատման միջոցով	138.345
12	Տաշիր	Տաշիր բնակավայրի Կ.Դեմիրճյան, Վ.Սարգսյան փողոցների և Լեռնահովիտ բնակավայրի 1-ին, 6-րդ, 9-րդ թաղամասերի ճանապարհների ասֆալտապատում	66.408
13	Արևաշող	Համայնքի «Յազիկ» թաղամասի ճանապարհի հիմնանորոգում	40.532
14	Լեռնանցք	Համայնքի կենտրոնական ճանապարհի ջրահեռացման համակարգի կառուցում և հենապատի վերակառուցում	11.262
15	Լեռնավան	Համայնքի 13-րդ և 14-րդ փողոցների ասֆալտապատում	14.374
16		Համայնքի կենտրոնական ջրահեռացման համակարգի վերակառուցում	12.042
17	Սպիտակ	Համայնքի ճանապարհների ասֆալտապատում	87.271
18	Հարթագյուղ	Համայնքի փողոցների կառուցման աշխատանքներ	16.271
19	Մեծավան	Մեծավան բնակավայրի Կոմիտաս փողոցի նորոգում	18.918
20		Համայնքի ջրահեռացման համակարգի վերակառուցում	11.751
21	Կաթնաջուր	Համայնքի գերեզմանատան ճանապարհի ասֆալտապատում	25.121
22	Ջրաշեն	Համայնքի փողոցների վերակառուցման աշխատանքներ	21.329
23	Ծաղկաբեր	Համայնքի 1-ին փողոցի 6-րդ փակուղու և 2-րդ փողոցի ջրահեռացման համակարգի կառուցում	14.757
24	Արջուտ	Համայնքի կենտրոնական ճանապարհի մասնակի վերանորոգում տուֆ քարով	44.791

25	Գյուլագարակ	Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ բնակավայրերի համայնքային ճանապարհների ասֆալտապատում	55.325

2. Թվով 10 խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ծրագրեր մարզի 7 համայնքներում ընդհանուր 140.2 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 91 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 49.2 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Լոռի Բերդ	Լեջան բնակավայրի ջրամատակարարման ներքի ցանցի մասնակի փոխարինում	19.670
2		Բովաձոր բնակավայրի ջրամատակարարման ներքի ցանցի մասնակի նորոգում	13.830
3		Կողես բնակավայրի ջրամատակարարման ներքին ցանցի մասնակի նորոգում	14.117
4		Յաղդան բնակավայրի ջրամատակարարման ներքի ցանցի մասնակի նորոգում	13.751
5	Եղեգնուտ	Համայնքի խմելու ջրի Կառնուտ ջրագծի վերանորոգում	8.265
6	Դեբետ	Համայնքի ջրամատակարարման համակարգի հիմնանորոգում և կառուցում	20.951
7	Թումանյան	Շամուտ բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի մասնակի հիմնանորոգում	15.437
8	Լեռնանցք	Համայնքի խմելու ջրագծի վերակառուցում և մարիչ հորի կառուցում	12.740
9	Ծաղկաբեր	Համայնքի 3-րդ փողոցի ջրագծի նորոգում	7.069
10	Մեծավան	Միխայլովկա բնակավայրի ջրագծի ներքին ցանցի վերանորոգում	14.370

3. Թվով 4 ոռոգման համակարգերի կառուցման ծրագրեր մարզի 4 համայնքներում ընդհանուր 72.3 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 47 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 25.3 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Ախթալա	Ճոճկան գյուղի ոռոգման համակարգի կառուցում	16.191
2	Սարահարթ	Համայնքի ոռոգման համակարգի մասնակի ընդլայնում	19.810
3	Լուսաղբյուր	Համայնքի ոռոգման ցանցի նորոգում	15.227
4	Թումանյան	Աթան բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում	21.095

4. Թվով 20 լուսավորության համակարգերի կառուցման և ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրեր մարզի 20 համայնքներում ընդհանուր 393.5 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 234.5 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 125.3 մլն դրամ և այլ ներդրողներ՝ 33.7 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Մարգահովիտ	Համայնքի փողոցային լուսավորության կառուցում	12.705
2	Արջուտ	Համայնքում ֆոտովոլտային կայանի կառուցում	7.641
3	Օձուն	Համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում	20.518
4	Դսեղ	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	9.313
5	Թումանյան	Թումանյան, Քարինջ, Մարց, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր բնակավայրերի փողոցային լուսավորության ընդլայնում	9.464
6	Ախթալա	Ճոճկան և Մեծ Այրում գյուղերի լուսավորության նոր համակարգերի կառուցում	26.770
7	Տաշիր	Տաշիր քաղաքի և Լեռնահովիտ բնակավայրի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում	46.190
8	Արևաշող	Համայնքապետարանի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի և առաջին փողոցի 11-րդ նրբանցքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	5.993

9	Գոգարան	Համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում, ֆոտովոլտային կայանի տեղադրում	32.438
10	Լեռնանցք	Համայնքի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	11.567
11	Լեռնավան	Համայնքի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում	6.564
12	Շիրակամուտ	Արևային ֆոտովոլտային կայանի և Վանաձոր-Գյումրի ավտոմայրուղու Շիրակամուտ համայնքի տարածքով անցնող հատվածի գիշերային լուսավորության ցանցի կառուցում	9.291
13	Սարամեջ	Համայնքի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	9.316
14	Լուսաղբյուր	Համայնքում արևային էլեկտրակայաններով սնվող գիշերային լուսավորության համակարգի կառուցում	9.583
15	Սպիտակ	Համայնքի փողոցային լուսավորության համակարգերի և քաղաքային լոկալ օպտիկական ցանցի կառուցում	114.988
16	Մեծ Պարնի	Համայնքում արևային էլեկտրակայանով սնվող գիշերային լուսավորության համակարգի կառուցում	14.652
17	Գեղասար	Համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցում	9.050
18	Մեծավան	Մեծավան բնակավայրի Թեհլերյան, Խաչատրյան, Աբովյան, Կոմիտաս և Վարդանանց փողոցների լուսավորության ցանցի արդիականացում	15.318
19	Կաթնաջուր	Համայնքի փողոցների գիշերային լուսավորության համակարգը սնուցող ֆոտովոլտային կայանի և էներգախնայող լուսատուներով հենասյուների կառուցում	14.487
20	Շենավան	Համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցում	*7.148*

5. Թվով 2 գազաֆիկացման ծրագրեր մարզի 2 համայնքներում ընդհանուր 272.1 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 164.4 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 103.1 մլն դրամ և այլ ներդրողներ՝ 4.6 մլն դրամ:

#	Համայնք	Նկարագիր	Ընդհանուր արժեք (մլն.դրամ)
1	Շնող	Համայնքի գազաֆիկացում	250.706
2	Չկալով	Համայնքի գազաֆիկացում	21.424

6. Թվով 2 մանկապարտեզների հիմնանորոգման և անհրաժեշտ գույքի ձեռքբերման ծրագրեր մարզի 2 համայնքներում ընդհանուր 50.1 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 29.7 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 20.4 մլն դրամ:

#	Համայնք	Նկարագիր	Ընդհանուր արժեք (մլն.դրամ)
1	Ախթալա	Համայնքի «Ճոճկան գյուղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	41.890
2	Ջրաշեն	Համայնքի մանկապարտեզի գույքի ձեռքբերում	8.220

7. Թվով 15 համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական շենքերի՝ համայնքային կենտրոնների, մշակույթի տների, հանդիսությունների սրահների և մարզադպրոցների, կառուցման և հիմնանորոգման ծրագրեր մարզի 9 համայնքներում ընդհանուր 430.5 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 176.6 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 230.1 մլն դրամ և այլ ներդրողներ՝ 23.8 մլն դրամ:

#	Համայնք	Նկարագիր	Ընդհանուր արժեք (մլն.դրամ)
1	Լոռի Բերդ	Ուռուտ բնակավայրի համայնքային կենտրոնի արտաքին պատերի ամրացում, ներքին հարդարում	8.979
2		Սվերդլով բնակավայրի համայնքային կենտրոնի երկրորդ հարկի կապիտալ նորոգում, տարածքի բարեկարգում	6.631
3		Ագարակ բնակավայրի համայնքային կենտրոնի շենքի ճակատային մասի և առաջին հարկի կապիտալ նորոգում	11.026
4	Վանաձոր	«Աթլետիկայի մարզադպրոցի», «Հրաչյա Կլեկչյանի անվան մշակույթի տան», «Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանային համակարգ» շենքերի հիմնանորոգում»	70.567
5	Շնող	Շնողի համայնքապետարանի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում	26.712
6	Օձուն	Մղարթ բնակավայրի համայնքային դահլիճի վերանորոգում	6.641

7		Օձուն բնակավայրի համայնքային դահլիճի նորոգում	9.285
8	Ախթալա	Ճոճկան գյուղի մշակույթի տան գույքի ձեռքբերում	13.123
9		Շամլուղ և Ախթալա բնակավայրերի հանդիսությունների սրահների հիմնանորոգում	18.320
10	Տաշիր	Համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի վերանորոգում	87.784
11	Մեծ Պարնի	Համայնքի մշակույթի տան ամրացման և մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքներ	34.851
12	Մեծավան	Համայնքի արվեստի դպրոցի շենքի վերանորոգում և ջեռուցման համակարգի տեղադրում	9.063
13		Համայնքի մարզադպրոցի կառուցում	84.056
14	Սարչապետ	Պետրովկա բնակավայրում հանդիսությունների սրահի վերանորոգում	18.933
15		Նորաշեն բնակավայրի մշակույթի տան դահլիճի վերանորոգում	24.540

8. Թվով 8 բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային գույքի նորոգման՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ, ծրագրեր մարզի 7 համայնքներում ընդհանուր 623.8 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 391.6 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 115.2 մլն դրամ և այլ ներդրողներ՝ 117 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Ստեփանավան	Համայնքի 3 բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում	117.348
2	Գուգարք	Համայնքի Էներգետիկների 5-րդ փողոցի 9-րդ շենքի տանիքի վերանորոգում	11.329
3	Վանաձոր	Համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցների կիրառմամբ	65.391
4	Ախթալա	Ախթալա համայնքի ԲԲՇ-ների տանիքների վերանորոգում	24.589

5		Համայնքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում	92.661
6	Ալավերդի	Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	55.771
7	Տաշիր	Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացում	150.101
8	Սպիտակ	Համայնքի 3 բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացում	106.63

9. Թվով 6 այգիների, պուրակների, հրապարակների, մարզադաշտերի կառուցման և բարեկարգման ծրագրեր մարզի 6 համայնքներում ընդհանուր 376.3 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 150.5 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 188.8 մլն դրամ և այլ ներդրողներ՝ 37 մլն դրամ:

#	**Համայնք**	**Նկարագիր**	**Ընդհանուր արժեք** (մլն.դրամ)
1	Մարգահովիտ	Համայնքի ֆուտբոլի մարզադաշտի կառուցում	17.935
2	Վանաձոր	Համայնքի «Շառլ Ազնավուրի» անվան այգու հիմնանորոգում, Տարոն-2 և Տարոն-4 այգիների կառուցում	224.488
3	Արևաշող	Համայնքի «Յազիկ» թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում	6.885
4	Սարահարթ	Համայնքի ֆուտբոլի դաշտի կառուցում	36.298
5	Սպիտակ	Քաղաքային հրապարակի լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների կառուցում և հրապարակի լուսային ձևավորում	79.265
6	Սարչապետ	Համայնքի Սարչապետ և Նորաշեն բնակավայրերի հուշարձանների վերանորոգում և շրջակա պուրակների բարեկարգում	11.439

10. Թվով 5 մեքենասարքավորումների, գյուղտեխնիկայի, գյուղատնտեսական գործիքների և հակակարկտային կայանների ձեռքբերման ծրագրեր մարզի 5 համայնքներում ընդհանուր 122.9 մլն դրամ արժեքով, որից պետական բյուջեից հատկացվել է 57.1 մլն դրամ, համայնքային ներդրում՝ 65.8 մլն դրամ:

#	Համայնք	Նկարագիր	Ընդհանուր արժեք (մլն.դրամ)
1	Լոռի Բերդ	Համայնքի կարիքների համար գյուղգործիքների ձեռքբերում	9.030
2		Համայնքի Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Յաղդան, Կողես, Ուռուտ, Սվերդլով գյուղերի համար հակակարկտային կայանների ձեռքբերում	18.900
3	Վահագնի	Համայնքի կարիքների համար գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ձեռքբերում	9.050
4	Լեռնապատ	Համայնքի կարիքների համար գյուղտեխնիկայի և գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերում	9.890
5	Սպիտակ	Համայնքի կարիքների համար գրեյդեր և հիբրիդային դիզել (էլեկտրական) ավլող, փոշեկուլ մեքենայի ձեռքբերում	76.000

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում է 43 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղի: Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 14 մասնավոր կազմակերպություններ:

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 12 կայարաններով:

Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի հինգ փոքր բնակավայրերից՝ Դաշտադեմ, Հովնանաձոր, Կաճաճկուտ, Ծաղկաշատ և Ձորագյուղ, կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ բնակավայրերից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ավտոմեքենաներով:

Փոխադրողների կողմից նոր ավտոբուսներ և միկրոավտոբուսներ չեն ներկայացվել, քանի որ ուղևորահոսքի նվազման հետևանքով ներմարզային երթուղիներ սպասարկելը դարձել է տնտեսապես ոչ շահավետ: Դրան նպաստում է նաև այն, որ տաքսամոտորային փոխադրումները բավականին ազատականացված են և կանոնավոր փոխադրումներ իրականացնողները գտնվում են ոչ մրցակցային պայմաններում:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից

դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

2021թ. բացի ընթացիկ աշխատանքներից նախատեսված է կատարել ուսումնասիրություններ՝ բնակչության սպասարկման որակը բարձրացնելու և երթերի կատարման ժամանակացույցը ուղևորներին ավելի հարմարավետ դարձնելու համար, ինչպես նաև բացատրական աշխատանք տանել վարորդների շրջանում պատշաճ մակարդակի սպասարկում ապահովելու նպատակով:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 878.0կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 216.2 կմ
- հանրապետական 262.7 կմ
- մարզային (տեղական) 399.1 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

2020թ-ի տարեսկզբին ծրագրավորված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է *14.085 մլրդ դրամ,* որով նախատեսվում է հիմնանորոգել *109.7 կմ* ճանապարհ, փաստացի կատարված է *10.323 մլրդ դրամի* աշխատանք (հավելված 1):

Առավել խոշոր ծրագրերն են Մ-3, Մ-6, Մ-7 և Մ-8 միջպետական և Հ-25, Հ-31, Հ-34 հանրապետական նշանակության, ինչպես նաև S-5-57՝ /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/՝ 3.8 կմ երկարությամբ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:

Սուբվենցիոն ծրագրերով մարզի 22 համայնքներում իրականացվել են ճանապարհաշինական աշխատանքներ: Դրանք են՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Սպիտակ, Ախթալա, Օձուն, Դարպաս, Ջրաշեն, Լոռի Բերդ, Գուգարք, Շահումյան, Լեռնապատ, Բազում, Արևաշող, Լեռնանցք, Լեռնավան, Հարթագյուղ, Մեծավան, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Արջուտ, Գյուլագարակ: Նշված համայնքներից 13-ում աշխատանքներն ավարտվել են, իսկ 9-ում՝ գտնվում են ավարտական փուլում:

Ճանապարհաշինության ոլորտում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացված աշխատանքներ

Հ/h	Ֆինանսավորման աղբյուրը	2020թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2020թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	**14085.116**	**10322.648**	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4846.816**	**5281.748**	
1	***ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ***	**3556.2**	**4523.3**	

	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ			
2	***ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ***	**125.56**	**125.56**	
3	***ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ***	**8,353.70**	**4,516.00**	
4	***ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ***	**2,049.70**	**1,157.76**	

Հավելված 1

Հ/h	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2020թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2020թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	***14,085.12***	***10,322.65***	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4846.816**	**5281.748**	
I	***ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***	**3556.2**	**4523.3**	
1	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգում	0.0	489.0	
2	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգում	384.1	338.8	
3	Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգում	323.4	44.4	
4	Հ31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգում	1,119.9	1,006.8	
5	Հ34, Մ3-Ստեփանավան-Պրիվոլնոյե-Վրաստանի սահման կմ 5+000 - կմ 18+000 հատվածի հիմնանորոգում	1,450.6	1,165.7	
6	Տ-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ կմ 0+000-կմ 3+800 հատվածի հիմանորոգում	278.2	271.9	

7	Մ- 7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ19+000-կմ27+000 հատվածի հիմնանորոգում	0.0	435.0	
8	Մ7, Մ 3 - Սպիտակ - Գյումրի - Թուրքիայի սահման կմ0+000- կմ19+000	0.0	672.0	
9	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ33+500-կմ34+200 հատվածի հիմնանորոգում	0.0	99.7	
II	***ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ***	**125.562**	**125.562**	
1	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	125.562	125.562	
III	***ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ***	**8353.7**	**4516.0**	
1	Մ6՝ Վանաձոր- Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ	8,353.7	4,516.0	
IV	***ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ***	**2049.7**	**1157.8**	
1	Պետական բյուջեից համայնքներին տրամադրվող կապիտալ սուբվենցիաներ	1165.1	632.9	
2	Կապիտալ սուբվենցիաներով իրականացվող ծրագրերին համայնքների ներդրում	540.3	499.9	
3	Մասնավոր ներդրումներ	344.3	25.0	

<u>Լոռու մարզում իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ</u>

- Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների երկրորդ փուլ: Ծրագրի արժեքը՝ 8.354 մլրդ դրամ: 2020թ-ին կատարվել է 4.516 մլրդ դրամի աշխատանքներ: Կապալառու կազմակերպություններն են «Հորիզոն-95» ՍՊԸ, «ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ և «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղ իտալական կազմակերպությունը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական ներդրումային և Ասիական զարգացման բանկերի ֆինանսավորմամբ և ՀՀ պետ. բյուջեի համաֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են. ներկայումս ընթանում են ճանապարհի լայնացման, ճանապարհային պաստառի պրոֆիլի բերման, հիմնատակի կառուցման, ինժեներական ցանցերի տեղափոխման և մասնակի

ասֆալտապատման աշխատանքներ: Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ, որից 26.0 կմ՝ Լոռու մարզում: Ավարտը նախատեսված է 2021թ.:

- Մ-3՝ Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 4.0 կմ և 2.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգում: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 827.8 մլն դրամ: Կապալառու կազմակերպություններն են «Արգիշտի-1» և «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ները: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
- Մ-7՝ Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 27.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածի միջին նորոգում: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 1.107 մլրդ դրամ: Կապալառու կազմակերպություններն են «Արգիշտի-1» և «Արարատ-ճանշին» ՍՊԸ-ները: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
- Մ-8՝ Վանաձոր-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի 0.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 99.7 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Արհովշին» ՍՊԸ-ն: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
- Հ-25՝ Մ6-Հաղպատի հուշարձան հանրապետական նշանակության ավտոճանապարհի 5.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 323.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Կապալառու կազմակերպությունն է «Ճանապարհ» ՍՊԸ: Ներկայումս կատարվում են ճանապարհի լայնացման, ճանապարհային պաստառի պրոֆիլի բերման, հիմնատակի կառուցման աշխատանքներ: Ավարտը նախատեսված է 2021թ.:
- Հ-31՝ /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 10.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 1.006 մլրդ դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Ճանապարհ» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
- Հ-34՝ Մ3 – Ստեփանավան – Պրիվոլնոյե -Վրաստանի սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի 13.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 1.135 մլրդ դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Ճանապարհ» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
- Հ-5-57՝ /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 3.8 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 271.9 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Ճանապարհ» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:

- Լոռու մարզպետարանին մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանման և շահագործման համար 2020թ-ին հատկացվել էր *125.562 մլն դրամ*, որից ընթացիկ ձմեռային պահպանման համար՝ *46.450 մլն դրամ*, ընթացիկ ամառային պահպանման համար՝ *79.112 մլն դրամ*:

Ճանապարհաշինության ոլորտում արձանագրված խնդիրները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները

- Ճանապարհաշինության ոլորտում ներդրումները բավարար չեն մարզի ամբողջ ճանապարհային ցանցի վերանորոգման համար:
- *Մարզում դեռևս առկա են չլուծված ճանապարհաշինական խնդիրներ, որոնք ենթակա են հրատապ լուծման, դրանցից են՝*
- S-5-24՝ /Մ-3/ (Ստեփանավան) – Արմանիս – Ուրասար – Կաթնաղբյուր մարզային նշանակության ճանապարհի 10.0կմ երկարությամբ հատվածը՝ արժեքը - մոտ 1.3 մլրդ դրամ,
- S-5-7՝ /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (S-5-38) մարզային նշանակության ճանապարհի 9.3 կմ երկարությամբ հատվածը, արժեքը - մոտ 600.0 մլն դրամ,
- S-5-46 /Մ-6/ (Ալավերդի) – Սանահին թաղամաս – Ակներ մարզային նշանակության ճանապարհի 12 կմ երկարությամբ հատվածը, արժեքը - մոտ 1.2 մլրդ դրամ,
- S-5-34՝ /Մ-7/ (Լուսաղբյուր) – Խնկոյան մարզային նշանակության ճանապարհի 3 կմ երկարությամբ հատվածը՝ արժեքը - մոտ 150.0 մլն դրամ,
- S-5-27՝ /Հ-60/ (Ձյունաշող) – Դաշտադեմ – Նորամուտ մարզային նշանակության ճանապարհի 5.0 կմ երկարությամբ Ձյունաշող - Պաղաղբյուր հատվածը, արժեքը - մոտ 300.0 մլն դրամ:
- *Հրատապ լուծման ենթակա հանրապետական նշանակության ճանապարհներից են.*
- Հ-70՝ /Մ6/-Աթան, երկարությունը՝ 27.5 կմ
- Հ-60՝ /Մ-3/ (Տաշիր) – Մեծավան – Ձյունաշող (S-5-27) ճանապարհի Մեծավան-Ձյունաշող հատվածը, երկարությունը՝ 4.3 կմ
- Հ-22՝ /Մ-6/–Դսեղ-/Հ-70/ ճանապարհի Դսեղ-/Հ-70/ հատվածը, որի երկարությունը կազմում է 6.0 կմ
- Հ-24՝ /Մ-3/ - Գյուլագարակ – Կուրթան - /Մ-6/ ճանապարհի Կուրթան - /Մ-6/ հատվածը, երկարությունը՝ 11.5 կմ
- 2021թ. նախատեսվում է իրականացնել մարզային և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ուսումնասիրություն, կազմել բոլոր ճանապարհների իրավիճակային նկարագիր, ունենալ մարզի հրատապ լուծում պահանջող ճանապարհահատվածների հիմնանորոգման մոտավոր հաշվարկ՝ ֆինանսավորման աղբյուրների և դոնորների առկայության դեպքում՝ վերջիններիս առաջարկ տրամադրելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բնակֆոնդ

- Բնակչության կենսապահովման կարևոր բնագավառ է հանդիսանում բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության ոլորտը, ինչը համակարգում է մարզի բազմաբնակարան շենքերի կառավարումն ու կոմունալ գործունեությունը, ապահովում կապը բնակչության, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

Լոռու մարզի քաղաքային համայնքներում առկա են՝

- ✓ Բազմաբնակարան շենքեր 1637
- ✓ III կարգի վնասվածության եւ ամրացման ենթակա բազմաբնակարան շենքեր 148
- ✓ Վերանորոգման են 667
- ✓
- ✓ թակա բազմաբնակարան բնակելի շենքեր
- ✓ Անավարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվածության բնակելի շենքեր 243
- ✓ Բազմաբնակարան շենքերի վերանորոգման ենթակա տանիքներ 465
- ✓ Վերելակներ (սարքին/անսարք) 131/55

Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է համատիրությունների եւ համայնքներում գործող «Բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ»-ների միջոցով:

Ներկայումս մարզում բազմաբնակարան բնակարանային ֆոնդը կառավարվում է համատիրությունների, բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակների, ինչպես նաև համայնքների կողմից: Այս իրողությունը պայմանավորված է նրանով, որ դեռևս հանրապետության շատ քաղաքային համայնքներում, որտեղ առկա է բազմաբնակարան բնակարանային ֆոնդ, համատիրություններ դեռևս ձևավորված չեն: Լոռու մարզի քաղաքային համայնքներից միայն Վանաձորում է, որ բազմաբնակարան բնակարանային ֆոնդը կառավարվում է համատիրությունների կողմից. Դրանք թվով 42 են:

Մարզի քաղաքային համայնքների համատիրությունների եւ բնակարանային տնտեսության բաժինների ոչ բավարար աշխատանքի վերաբերյալ մարզի բնակիչներից ստացվում են դիմում-բողոքներ, որոնք հիմնականում վերաբերվում են շենքի սանիտարական մաքրմանը, բազմաբնակարան շենքերում ջրամատակարարման և կոյուղու համակարգերի մաշվածությանը, դրա հետևանքով նկուղներում գոյացող ջրերին, աղբահանությանը, ինչպես նաև համասեփականության այլ տեսակներին առնչվող առկա խնդիրներին (տանիք, նկուղ, աստիճանավանդակ, շքամուտքի պատուհան, դուռ): Դրանք պարբերաբար քննարկվում են քաղաքապետարանների համապատասխան բաժինների, համատիրությունների և բնակարանային տնտեսության բաժինների հետ:

Խնդիրների կարգավորման դժվարությունը կայանում է նրանում, որ բնակչության կողմից հավաքագրված վարձավճարների ցածր մակարդակը թույլ չի տալիս իրականացնել նույնիսկ ամենահրատապ վերանորոգման աշխատանքները:

Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը կնպաստի բնակարանային ֆոնդի պատշաճ շահագործմանն ու պահպանմանը, բնակչության կենցաղի, բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2020թ. Ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության սպասարկման տարածքի մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարավերականգնողական, ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ: Մի շարք բնակավայրերում ջրատար խողովակների վթարված հատվածների փոխարինման շնորհիվ

խնայվել է ջրի զգալի քանակ և բարձրացել ջրի ճնշումը: Մի շարք համայնքներում կառուցվել են նոր ջրագծեր, ինչի արդյունքում բարելավվել են ջրամատակարարման համակարգերը, վերացվել են հաճախակի կրկնվող վթարները:

«Վեոլիա Ջուր» ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական օպերատորը և սպասարկում է մարզի 40 քաղաքային և գյուղական բնակավայր:

Մարզի հիմնական մասը մատակարարող «Նովոսելցովո» ջրատարի որոշ հատվածներում իրականացվել է բարձրադիր ու ցածրադիր ջրաղբյուրների վերաբաշխում: Իրականացված աշխատանքների շնորհիվ բարձրացել է ջրատար համակարգերի հուսալիության աստիճանը, ինչպես նաև նվազել է վթարների առաջացման հավանականությունը:

Ջրամատակարարման սեփական համակարգ ունեցող համայնքներից մարզի 36 համայնք (30 բնակավայրով) չի օգտվում կենտրոնական ջրամատակարարման համակարգից եւ խմելու ջրի պաշարները ստանում է սարերի բնական աղբյուրներից, գետերից:

Չնայած նշված համայնքները պարբերաբար իրականացնում են վերանորոգման աշխատանքներ, այնուամենայնիվ, դեռեւս խորհրդային տարիներին կառուցված ջրամատակարարման ներքին ցանցի խիստ մաշվածության կամ բացակայության պատճառով խմելու ջրի մաքրման, քլորացման աշխատանքների արդյունավետությունը խիստ ցածր է: Դրա վկայությունն են ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ամենամսյա վերահսկողության արդյունքները:

2020թվականին Լոռու մարզում ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից մարզի թվով 7 համայնքում իրականացվել են 146,405.7հազ.դրամի աշխատանքներ:
- ✓ Լոռու ջրանցք և Գետիկ տեղամասերիի կողմից իրականացվել են 12,789.93 հազ.դրամի աշխատանքներ:
- ✓ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից (ՀՏԶՀ) իրականացվել է Բլագոդարնոյե համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ 1,379.0 հազ.դրամ արժեքով:
- ✓ Մարզի թվով 17 համայնքում սեփական բյուջեի շրջանակներում իրականացվել են 112.705.5 հազ.դրամի ջրամատակարարարման համակարգերի բարելավման աշխատանքներ:
- ✓ ՀՀ պետ.բյուջեի վարկային միջոցներով իրականացվել է «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3-Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերի վերանորոգում և անհատական ջրաչափերի տեղադրում» 713,409.1 հազ.դրամ արժեքով:

Գազամատակարարում

Լոռու մարզն ունի 56 համայնք, որից 7 քաղաքային բնակավար ունեցող եւ 49 բացառապես գյուղական բնակավայրերից կազմված համայնքներ: 01.01.2021թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 51 (91.0%) եւ չգազաֆիկացված 5 (9.0%) համայնք: Գազաֆիկացված 8 համայնքներում գազաֆիկացված չէ նաև 25 բնակավայր:

Առ 01.01.2021թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազիֆիկացված բնակավայրերում առկա են թվով 66859 բաժանորդներ, 31222 բնակարաններ և 35637 առանձնատներ, որից թվով 31595 Վանաձոր

քաղաքում: 2020թ. ընթացքում բաժանորդների թվաքանակն աճել է 545-ով, որից 299 բնակարաններ և 246 առանձնատներ:

2020թ.-ին գազամատակարարման ոլորտում իրականացվել է 450,4 մլն. դրամի աշխատանքներ, որից սուբվենցիոն ծրագրերի շրջանակում մարզի Շնող և Չկալով համայնքներում իրականացվել են գազաֆիկացման աշխատանքներ 21,4 մլն դրամ արժողությամբ:

2020թ-ին իրականացված աշխատանքներ.

- ✓ մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում միջին և ցածր ճնշման վերգետնյա և ստորգետնյա գազատարերի վերատեղադրում և վթարային հատվածների նորոգում
- ✓ մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում ՊԳԿԿ-ների (պահարանային գազակագավորիչ կետեր) կապիտալ նորոգում
- ✓ Բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների և ազդանշանային սարքերի տեղադրում:
- ✓ Ախթալա համայնքի բյուջեից ֆինանսավորվել է Շամլուղ, Նեղոց բնակավայրերի, Առափնյա և Երկաթուղայիներ թաղամասերի գազատարերը բարձր ճնշման գազատարին միացման համար:
- ✓ Գուգարք համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է նախկին ամբուլատորիայի շենքի գազաֆիկացումը:
- ✓ Թումանյան համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է Քարինջ, Լորուտ բնակավայրերի ՆՈՒՀ-երի և Մարց բնակավայրի հանդիսությունների սրահի գազաֆիկացման աշխատանքները:
- ✓ Գյուլագարակ համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է Գերմանական թաղամասի գազաֆիկացման նախագծանախահաշվային աշխատանքները:

Էներգամատակարարում

ՀՀ Լոռու մարզի էլեկտրաէներգիայի մատակարարը «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ «Հյուսիսային» մասնաճյուղն է, որը հանդիսանում է միջանկյալ օղակ արտադրող կայանների և բաշխիչ ցանցերի միջև ՀՀ հյուսիսային տարածքում: «Հյուսիսային» մասնաճյուղը հանդիսանում է նաև կարևոր օղակ, որի միջոցով կատարվում է էլեկտրաէներգիայի փոխանցումը Վրաստանի Հանրապետություն:

2020թ-ին մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 1,694.7 մլն դրամ ընդհանուր արժեքով:

2020թ.-ի ընթացքում «Հյուսիսային» մասնաճյուղի կողմից իրականացվել են Էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքներ՝ 1.7 մլն դրամ:

2020թ-ին պետական և վարկային միջոցներով իրականացվել են «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցման՝ 120.6 մլն դրամ և «Լալվար-Նոյեմբերյան» 110կվ ՕԳ կառուցման աշխատանքներ՝ 42.7 մլն դրամ:

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2020թ. դրությամբ առկա է շուրջ 97 750 բաժանորդ:

2020թ.-ի ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 188.9 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 120.4 մլն. կՎտժ-ը բնակչությանը, ինչի համար անհրաժեշտ էր գանձել 7.631 մլդ դրամ, փաստացի գանձվել է 7.628 մլդ դրամ, (99.9%):

«ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ 1.178 մլդ դրամի ներդրում.

- ✓ Նոր բաժանորդների միացման աշխատանքներ
- ✓ Համայնքներում ցանցերի վերազինման, ավտոմատացված համակարգերի ներդրման, փոխարինման և այլ աշխատանքներ
- ✓ Օդային և մալուխային գծերի հիմնանորոգման աշխատանքներ

Թվով 9 համայնքապետարանների ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ՝ 21.5 մլն դրամի:

<<Աստղիկ>> ԲՀ-ի 9.3 մլն դրամ ֆինանսավորմամբ ՀՀ Լոռու մարզի Կուրթան բնակավայրում տեղադրվել են Արևային ջրատաքացուցիչներ:

Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի 9.5 մլն դրամ ֆինանսավորմամբ ՀՀ Լոռու մարզի Օձուն(2), Կաթնաջուր և Մեծ Պարնի համայնքներում տեղադրվել են թվով 4 արևային ֆոտովոլտային կայաններ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակնում մարզի 20 համայնքներում իրականացվել են լուսավորության համակարգի կառուցում, ֆոտովոլտային կայանների տեղադրում 306,0 մլն դրամ արժողությամբ:

Կապ

ՀՀ Լոռու մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «Տելեկոմ Արմենիա» **ՓԲԸ**, «**ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ** և «ՅՈԽՔՈՄ» ՍՊԸ-ները: «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:

«Տելեկոմ Արմենիա» **ՓԲ** ընկերության կողմից 2020 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականցվել են.

- ✓ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր և Ալավերդի համայնքներում իրականցվել են օպտիկամանրաթելային մալուխի անցկացման աշխատանքներ:
- ✓ Վանաձոր համայնքի Տարոն-2 ԱՀԿ(ավտոմատ հեռախոսակայան)-30, Տարոն-4 ԱՀԿ-6, Դիմաց ԱՀԿ-2,4,5 և Կենտրոն ԱՀԿ-2,4 իրականացվել են մինչև 100մբ/վ թողունակությամբ VDSL սարքավորումների տեղադրման աշխատանքներ՝ ինտերնետ ծառայության որակի բարձրացման նպատակով:

Աղբահանություն

ՀՀ Լոռու մարզում գույքագրված է 348 աղբավայր, որից 342-ը փակված է:

Ներկայումս շահագործվում է 6 աղբավայր (Արջուտ, Սպիտակ, Տաշիր, Ամրակից,Ալավերդի և Դսեղ):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2020 թվականի **հուլիսի 1-ի** դրությամբ .

	(հեկտար)					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
Լոռու մարզ	250904.3	42013.6	423.5	35060.7	145633.2	27773.3

Մարզում. ցանքատարածությունները ըստ **ԱՎԾ-ի** կազմել են՝ 2020թ.- 21620,1 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 51,5 %-ը

Լոռու մարզում 2019-2020թթ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի և բերքահավաքի համեմատականներ (ըստ ԱՎԾ-ի)

h/h	Մշակաբույսը	2019թ.		2020թ		Համեմատական 2019թ-ը 2020թ-ի նկատմամբ(աճը)			
		ցանքը հա	բերքը տ	ցանքը հա	բերքը տ	ցանքը		բերքը	
						հա	%	տ	%
1	Հացահատիկ	10244	25684	10559	28836	+315	+3	+3152	+12.2
	Հատիկաընդեղեն	242	554	267	630	+25	+10.3	+76	+13.7
2	Կարտոֆիլ	3431	49338	3510	59291	+79	+2.3	+9953	+20.1
3	Բանջարաբոստանային մշակաբույսեր	1311	15028	1303	16001	-8	-0.05	+973	+6.4
4	Կուտակվել է խոտ		92333		76167			-16166	-17.5
5	Կերային մշակաբույսեր	325	8104	405	10466	+80	+24.6	+2362	+29.1
6	Տեխնիկական մշակաբույսեր	103	75	170	213	+67	+65	+138	+184

«Բույսերի պաշտպանություն» միջոցառումների շրջանակներում՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի աշխատանքներն իրականացնելու համար մարզին հատկացված 147.2լ «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութը ներկրվել է մարզ և բաշխվել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի աշնանը ՀՀ Լոռու մարզի առավել

վարակված 1840 հեկտար տարածության վրա կատարված մոնիթորինգի արդյունքների հիման վրա ընդգրկված համայնքներին:

Ներ է դրվել շուրջ 850 հազար դրամ:

Գյուղատնտեսության բնագավառում 2020թ-ին ներդրումների ծավալը (պետական,մասնավոր,միջազգային) կազմել է շուրջ 6 745.3 մլն դրամ:

Պետական օժանդակության ծրագրերի շրջանակներում տրամադրվել են՝

- «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի» պետական աջակցության ծրագրով 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 22 լիզինգառուի տրամադրվել է 33 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 12 տրակտոր, 21 այլ գյուղատնտեսական տեխնիկա, լիզինգի գումարը կազմել է 107.2մլն դրամ:
- «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում 2020 թվականի տվյալներով 3526 վարկառուի տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 4.4 մլրդ դրամ:
- Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, ըստ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված հաշվետվության՝ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 12 հայտ 239.5 մլն դրամի չափով, կնքվել է 69 հումքի գնման պայմանագիր:
- Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում, ըստ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված հաշվետվության՝ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 5 հայտ՝ 17.3 մլն դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 7 միավոր սարքավորում:
- «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում կնքվել է 4 պայմանագիր, կառուցվել է 2 անասնաշենք, փոխհատուցման գումարը կազմել է 26.25 մլն դրամ:
- «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրով առկա է 2 շահառու, ներդրվել է 5,04 հա ազնվամորու ինտենսիվ այգի, փոխհատուցման գումարը կազմել է 43,7 մլն դրամ:
- «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակում Լոռու մարզում 2020 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվել են դեղձի և խնձորի այգիները և հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ կարկուտ և հրդեհ (եթե հրդեհի ռիսկը կիրառելի է) ռիսկից: Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է մոտ 480 հա: Լոռու մարզում տրամադրվել է 65 ապահովագրական հատուցում՝ 23.0 մլն դրամի չափով:
- «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրի շրջանակներում 2020 թվականին 2 շահառուի տրամադրվել է 0% տոկոսադրույքով 31.0 մլն. և 40.0 մլն. դրամի վարկ՝ համապատասխանաբար 31 գլուխ և 86 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանի ձեռք բերելու նպատակով:

Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետական բյուջեյի միջոցներով, իրականացվել է գյուղատնտեսական կենդանիների անասնահամաճարակային հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ: Ներդրման գումարը կազմել է 170.0մլն դրամ:

Լոռու մարզպետի 03-ը դեկտեմբերի 2020թ. թիվ 1050 որոշման համաձայն վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2021թ. հունվարի 1-18-ը անցկացված անասնագլխաքանակի հաշվառման գործընթացը:

Լոռու մարզի 2021թ-ի անասնագլխաքանակի համեմատականը2020թ-ի նկատմամբ (հունվարի 1-ի դրությամբ) ըստ ԱՎԾ-ի

h/h	Անվանում	2021թ. գլուխ	2020թ. գլուխ	Համեմատական	
				գլուխ	%
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	74 674 36849	71 236 34 755	+3 438 +2 094	+4.8 +6.0
2	Մանր եղջ. կենդ. Որից՝ ոչխարներ այծեր	26 306 24 623 1683	24 440 22 947 1 493	+1866 +1 676 +190	+7.6 +7.3 +12.7
3	Խոզեր	12 912	14 244	-1 332	-10.3
4	Թռչուններ	266 210	248 369	+17 841	+7.2
5	Մեղվաընտանիք	23 742	20 727	+3 015	+14.5
6	Ձիեր	2 658	2 575	+83	+3.2

Լոռու մարզի 2020թ. անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների համեմատականը 2019թ.նկատմամբ ըստ ԱՎԾ-ի

Անվանում	Չափի միավոր	2020թ.	2019թ.	Համեմատական	
				քանակ	%
Կաթ	տոննա	83400	82 100	+1300	+1.5
Միս	տոննա	20900	20300	+600	+2.9
Ձու	մլն. հատ	44.3	47.9	-3.6	-8.1

«Լոռի» ՋՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կատարվել է 21.214 մլն դրամի ներդրում:

Ջրային պետական կոմիտեի միջոցով ոռոգման համակարգերի վերանորոգում հրատապ ծրագրով իրականացվել է 18.998 մլն դրամի աշխատանք:

«Լոռի» ՋԸ-ի կողմից ջրօգտագործողներին տրված ոռոգման ջրերի, հասույթի և վարձավճարների գանձումը

h/h	ՋՕԸ-ի անվանումը	Ոռոգված տարածքը (հա)			Ջրտուքը հազ. խ.մ.	Հասույթը հազ. դրամ	Գանձումը հազ. դրամ	Գանձման մակարդակը %
		Ընդամենը	որից					
			մեխանի-կական	ինքնահոս				
1	Լոռի	915	478	437	2394,7	26341,7	15778,5	60

- ✓Սուբվենցիոն ծրագրերով մարզի Լոռի Բերդ համայնքում տեղադրվել են 9 հակակարկտային կայաններ 18.900 մլն դրամ արժեքով: Լեռնապատ, Վահագնի և Լոռի Բերդ համայնքները ձեռք են բերել գյուղատնտեսական սարքավորումներ ընդհանուր արժեքով 27.970 մլն դրամ արժեքով: Ախթալա, Սարահարթ, Լուսաղբյուր համայնքներում և Աթան բնակավայրում իրականացվել են ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքներ ընդհանուր արժեքով 72.321 մլն դրամ: Ընդհանուր առմամբ ներ է դրվել 119.192 մլն դրամ:
- ✓«Բոզոյան» ՍՊԸ–ի կողմից շարունակվում են իրականացվել խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները՝ 500 գլուխ խոզամոր տարողությամբ: Ներդրումների ծավալը կազմել է 160.0 մլն դրամ, նախատեսվում է 40-50 աշխատատեղերի ստեղծում:
- ✓Մեծավան համայնքի Ձյունաշող բնակավայրում «Աբսալյուտ օրգանիկ» ՍՊԸ կառուցում է կաթի վերամշակման և սպանդի արտադրամասերով համալրված անասնաբուծական համալիր, ներդրման գումարը կազմել է 20.0 մլն. դրամ, կստեղծվի 12 աշխատատեղ:
- ✓<<Անասնաբուծության զարգացում հարավ-հյուսիս>> ծրագիրի շրջանակներում համայնքներում իրականացվել է արոտային ենթակառուցվածքների կառուցում և վերամշակման ձեռնարկությունները սարքավորումներով վերազինում: Ներդրումները կազմել են 147.415 մլն. դրամ:
- ✓Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայում կառուցվում է ինկուբատորային արտադրամաս և արևային էներգիայի ստացման համակարգ, ներ է դրվել 520.0 մլն. դրամ, կստեղծվի:
- ✓Մարզի Քարաձոր, Տաշիր և Վանաձոր համայնքներում կառուցվել է թվով 4 սպանդանոցներ: Ներդրման գումարը կազմել է ընդամենը՝ 77.0 մլն դրամ, որից Քարաձոր համայնքում 40.0 մլն դրամ, Մեդովկա բնակավայրում՝ 20.0 մլն և Տաշիր քաղաքում 10.0 մլն և Վանաձորում 7.0 մլն դրամ:
- ✓«ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագիրի մարզի համայնքներին անվճար տրամադրվել է հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմացուներ 15 համայնքի (սոյա, սիսեռ, ոլոռ, ոսպ)՝ ընդամենը 9150 կգ և 10 միավոր գյուղատնտեսական մինի տրակտորներ: Ներդրման գումարը կազմել է ընդամենը՝ 11.825 մլն դրամ, որից մինի տրակտորներինը՝ 8.500 մլն դրամ. սերմացուինը՝ 3.325 մլն դրամ:
- ✓«Ստադի Ստուդիո» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի թվով 41 համայնքների տրամադրվել 879 տոննա վրացական արտադրության ազոտական պարարտանյութ: Ներդրման գումարը կազմել է 114.0 մլն դրամ:
- ✓«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Հարթագյուղ համայնքում իրականացվել է 50 հա ոսպի, սիսեռի և կորնգանի ցանքս, ներ է դրվել 10.892 մլն դրամ:

✓«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Կուրթան համայնքում մեղվաբուծությունը զարգացնելու նպատակով ներ է դրվել 1.5 մլն. դրամ:

✓ՄԱԶԾ-ԳԷՀ փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերում ոռոգման համակարգի և արևային ֆոտովոլտային կայանի կառուցման գործում ներ է դրվել 10.800 մլն դրամ:

✓«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ» ծրագրի շրջանակներում Գոգարան համայնքում կառուցվել է խոշոր եղջերավոր կենդանիների փարախներ, հովվատան, ջրախմոցներ: Ջրաշեն, Սարամեջ, Գոգարան, Մեծավան և Միխայելովկա համայնքներին տրամադրվել է գյուղ. մեխանիզմներ և սարքավորումներ: Ներդրումների գումարը կազմել է 300.0 մլն դրամ:

✓Սարատովկա և Տաշիր համայնքների թվով 2 ֆերմերների կողմից արտ. երկրներից ներկրել են 74 գլուխ զտացեղ տոհմային երինջներ: Ներդրման գումարը կազմել է շուրջ 110.0 մլն. դրամ:

Բնապահպանություն

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,279.6 հա, որից անտառածածկ է 85,799.6 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակներ են համարվում լորենին, կեչին, թեղին, հացենին:

✓ Մարզի անտառների կառավարումն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 5 անտառտնտեսությունների կողմից՝ Վանաձորի, Թումանյանի, Ջիլիզայի, Ստեփանավանի և Տաշիրի:

✓ 2020թ. ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 9 234մ3:

✓2020թ. ընթացքում մթերվել և մարզի ազգբնակչությանը անվճար տրամադրվել է շուրջ 19 495մ3 թափուկ վառելափայտ:

✓Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2020թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 7 033մ3:



Անվանումը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Օրինական հատումներ (մ3)	11282	10826	14598	10504	8030	9234
Թափուկ (մ3)	10954	9910	13167	12738	24507	19495
Ապօրինի հատումներ (մ3)	219	332	697	1751	4284	7033

ՀՀ Ոստիկանության մարզային վարչության հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները.

Անվանումը	Չափման միավոր	2017 թ.	2018թ.	2019թ.	2020 թ.
Ստուգայցների թիվը	հատ	1186	1645	1959	1521
Ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման դեպքերի թիվը	հատ	222	233	328	289
Հայտնաբերված փայտանյութի քանակը	մ3	1158	764	886	648
Հարուցված քրեական գործերի թիվը	հատ	46	56	90	123
Վարչական պատասխանատվության ենթարկվծների թիվը	հատ	41	73	89	71

2020թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից հարուցված քրեական գործերով պետությանը հասցված վնասի չափը կազմել է շուրջ 299.2 մլն. դրամ:

Պետ. բյուջեի միջոցներով 2020թ. ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնեսությունների տարածքներում իրականացվել է .

- ✓ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հակաճգնաժամային միջոցառումների 15-րդ ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի 4 անտառտնտեսությունների (Վանաձորի, Ջիլիզայի, Տաշիրի, Դսեղի) կողմից իրականացվել են 844 750 ուռենիների կտրոնների տնկման և 3.5 կմ ցանկապատման աշխատանքներ: Տնկման աշխատանքներին մասնակցել է 441 քաղաքացի: Ուռենիների տնկման աշխատանքների վրա ընդհանուր առմամբ ծախսվել է 43 մլն. 258 հազ. դրամ:
- ✓ 30 հա անտառտնկման աշխատանքներ, 71.2 հա նախորդ տարիներին հիմադրված անտառկուլտուրաների խնամք և լրացում, 42 հա տարածքի վրա բնական վերաճին օժանդակման միջոցառումներ, 0.15 հա տնկարանի ցանքսի և խնամքի և այլ աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 23 մլն. 36 հազ. դրամ:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2015-19թթ. ընթացքում Շնող համայնքում իրականացվել են 45հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ: Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2020թ. նախատեսված էր իրականացնել 31.214 հա պտղատու այգիների հիմնում, ոռոգում, մշակում և լրացում: Ծրագրի արժեքը 64 մլն. 888 հազ. դրամ է, որն ամբողջությամբ իրականացվել է:

2021թ. նախատեսվում է ևս շուրջ 30 հա պտղատու նոր այգիների հիմնում, որի արժեքը նախնական տվյալներով կազմում է 60 մլն. դրամ:

2020թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից Լոռու մարզում իրականացվել է 88.12 հա անտառտնկման, 178.94 հա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման և խնամքի, 11.3 կմ ցանկապատման աշխատանքներ: Անտառվերականգնման ծրագրի կողմից մարզում տնկվել է 259 704 տնկի: Ներդրումները կազմել են 85.5 մլն. դրամ, որից հիմնադրամի կողմից շուրջ 81 մլն. դրամ, պետ. բյուջեյի կողմից 4.5 մլն դրամ:

2021թ. մարզում նախատեսում է իրականացնել 42 հա տարածքի վրա շուրջ 15 մլն. դրամի անտառվերականգնման աշխատանքներ, 2020թ. հիմնված շուրջ 88 հա անտառտմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ, իսկ նախորդ տարիներին հիմնադրված մյուս տարածքների անտառտմշակույթների խնամքի, ցանկապատի վերանորոգման աշխատանքները կպլանավորվեն տարվա ընթացքում իրականացվող ուսումնասիրություններից հետո:

Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի հետ համագործակցության արդյունքում «Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն Լոռու մարզի Գուգարք և Դեբեդ համայնքներում հիմնել է անտառային կուլտուրաների տնկարաններ (համապատասխանաբար 3 հա և 1.6 հա):

Ընթացիկ տարում իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ և Ջրաշեն համայնքների նախանշված համայնքային համապատասխանաբար մոտ 90 և 350 հա արոտավայրերի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում»:

Շիրակամուտ համայնքում իրականացված անտառհիմնման տարածքը կազմել է մոտ 23 հա:

Գուգարք տնկարանում իրականցվել է ոռոգման համակարգի նախագծում և մոնտաժ, որի ընթացքում իրականացվել է ավելի քան 900մ ոռոգման ցանցի հիմնում և պահուստային ջրի 30 մ3 տարողության ստեղծում:

2021թ. «Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն նախատեսում է գարնանը Ջրաշեն և Շիրակամուտ համայնքում իրականացնել անտառպատման աշխատանքներ:

ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում 2020թ. ընթացքում Լոռու մարզում իրականացվել է.

Վահագնի համայնքի բնակիչներին տրամադրվել է 14 901 ԱՄՆ դոլար (շուրջ 7 մլն. 152 հազ. դրամ) ընդհանուր արժողությամբ 100 հատ փայտի էներգաարդյունավետ վառարաններ, որոնք 25-30 տոկոսով կրճատում են վառելափայտի օգտագործումը:

Լոռու մարզի Մարգահովիտ, Գուգարք և Վահագնի համայքներում իրականացվել է դեգրադացված արոտավայրերի վերականգնման ծրագիր, որի շրջանակներում համայնքներին տրվել են խոտախառնուրդի սերմեր, դիզելային վառելիք, իսկ Վահագնի համայնքին տրվել է նաև անիվավոր տրակտոր: Բարելավվել և վերականգնվել են 250 հա-ից ավել դեգրադացված արոտավայրեր: Ներդրումների ընդհանուր ծավալը, ներառյալ տրակտորի արժեքը (10 մլն. 100 հազ. դրամ) կազմել է 16 մլն. 114,88 հազ. դրամ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի և Ջիլիզայի անտառտնտեսությունների տարածքներում իրականացվել է 850 հա դեգրադացված անտառային էկոհամակարգի վերականգնում 122 500 ԱՄՆ դոլար (շուրջ 59 մլն. 45 հազ. դրամ) ընդհանուր արժեքով: Աշխատանքներին մասնակցել են անտառամերձ համայնքների 103 բնակիչներ:

Գնվել է 60տ վառելիքային բրիկետ և տրվել է Արցախի Հանրապետությունից Լոռու մարզ տեղափոխված 30 ընտանիքների՝ տների ջեռուցումը ապահովելու նպատակով: Ծրագրի արժեքը կազմել է 10 688 ԱՄՆ դոլար (շուրջ 5 մլն. 472 հազ. դրամ):

2020թ. ընթացքում վերոնշյալ ծրագրի շրջանակներում Լոռու մարզում ներդրումները կազմել է 87.8 մլն դրամ:

Ընթացքի մեջ են Լոռու մարզում գործող Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների կառավարման պլանների նախագծերի քննարկման աշխատանքները: Քննարկումների ավարտից հետո անտառկառավարման պլանները կհաստատվեն և կտպագրվեն:

Ընդհանուր առմամբ 2020թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 141.12 հա անտառտնկման, շուրջ 250 հա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ, 892 հա տարածքի վրա բնական վերաճին օժանդակման միջոցառումներ, 15 կմ ցանկապատման աշխատանքներ, ինչպես նաև Թեղուտի անտառվերականգնման ծրագրով Շնող համայնքում հիմնվել է 31.2 հա պտղատու այգի: Իրականացվել են նաև նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիոլետովո բնակավայրերով: Լոռու մարզում իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79 մլն. 752.6հազ. դրամ:

Մարգահովիտի համայնքապետարանը և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն կապալառու «Սարդարյանշին» ՍՊԸ-ի միջոցով իրականացրել են Մարգահովիտի համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ) կառուցապատման աշխատանքները 10/90 համաֆինանսավորմամբ (10% համայնքապետարան և 90% «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 4 194 000 (չորս միլիոն մեկ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

Մարզպետարանի հանձնարարությամբ համայնքներում ծառերի էտը կազմակերպվում է ուշ աշնանը և էտից առաջացած վառելափայտը տրամադրում են սոցիալապես անապահով ընտանիքներին: Մասնավորապես Վանաձոր համայնքում իրականացված ծառերի էտի արդյունքում գոյացել է 110 մ3 փայտանյութ, որը տրամադրվել է համայնքի 101 ընտանիքի և 4 ՀՈԱԿ-ի:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ:

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում 44 կազմակերպություններ ունեն ընդերքարդյունահանման արտոնագրեր, որոնցից 6-ը մետաղական:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2017-2019թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Հ/Հ	Խոշորացված	Տարիները

	համայնքներ	2017	2018	2019
1	Ալավերդի	57 815.6	170 268.75	76 266.4
2	Օձուն	49 857.3		27615.6
3	Ախթալա	1 874.3		
4	Շնող	2 120.0		
Ընդամենը Լոռու մարզ		111 667.2	170 268.75	103882.0

2020թ. ՀՀ պետական բյուջեի կողմից բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին գումարներ չի տրամադրվել:

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2021թ. համար ՀՀ պետական բյուջեի կողմից նախատեսվում է հատկացնել 451.36մլն. դրամ, համապատասխանաբար.

Ալավերդի-370 994.0 հազ. դրամ;

Օձուն -76 522.5 հազ. դրամ;

Ախթալա-3 848.6 հազ. դրամ:

Ախթալա համայնքը 2021թ. նախատեսում է իրականացնել Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերակառուցման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 16.99մլն.դրամ, որից 3.8մլն. դրամ բնապահպանական սուբվենցիաներից, իսկ 13.1մլն. դրամը համայնքային բյուջեից:

Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժինը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի և այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող մի շարք հասարակական լսումների, սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին:

Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լսումները հիմնականում անց են կացվել մարզպետարանի նիստերի դահլիճում և հեռավար կարգով: Հասարակական լսումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ՁԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

Մարզում էկոլոգիական վիճակը բարելավելու և բնաահպանական այլ ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզպետարանը սերտ համագործակցում է պետական կառավարման մարմինների և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2020թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 10 ժամանակավոր սխեմա Դեբետ, Դսեղ, Ալավերդի /Հաղպատ/, Թումանյան /Լորուտ/, Ջրաշեն, Սպիտակ, Օձուն, Մեծ Պարնի և Արջուտ համայնքներում, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

2020թ. մարզի համայնքներում օտարվել է 280 միավոր հողամաս 76.663 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2020թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 229.6 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված կարգով 3 միավոր հողամասի օտարման դեպքում օտարման գինը կազմել է կադաստրային արժեքի 71.4 %, 1 դեպքում՝ 52.5%, մնացած 276 միավորի դեպքում հողամասերը օտարվել են հողամասի կադաստրային արժեքից բարձր գնով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 286.56%-ը:
Ընդհանուր առմամբ 2020թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 20441.5 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 5307.1հա 6784.2 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 7628.3 հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 112.4 %:

2020 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 88047.2 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 44563.4 հա 166320.5 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 162611.5 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 97.8 %
ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետությաան հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2020թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250904.3 հա, բնակավայրերի՝ 16491.9 հա, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3982.9 հա, Էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1655.4 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2403.2 հա, հատուկ նշանակության՝ 1217.1 հա, անտառային՝ 100603.0 հա, ջրային՝ 2606.9 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 250904.3 հա հողերից, որից վարելահող 42013.6 հա, բազմամյա տնկարկ 423.5 հա, խոտհարք 35060.7 հա, արոտ 145633.2 հա, այլ հողատեսք 27773.3 հա: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն համարվող գյուղատնտեսական

նշանակության 45996.55 հա հողամասերից օգտագործվում է վարելահող 23906.77 հա, բազմամյա տնկարկ 258.14հա, խոտհարք 12174.6հա, արոտ 895.78հա, այլ հողատեսք 109.61 հա:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2020թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի օբյեկտներն ապահովել են 33019.7մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2019թ. 35635.9մլն. դրամի ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը նվազել է և կազմել նախորդ տարվա 92.7%-ը (ՀՀ-ում տեսակարար կշիռը՝ 2,6%): Մարզում մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները՝ 19289.1մլն. դրամի շրջանառությամբ, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 2618.8մլն. դրամի շրջանառությամբ, կրպակները՝ 1495.1մլն. դրամի շրջանառությամբ և առևտրի այլ օբյեկտները՝ 9616.7 մլն. դրամի շրջանառությամբ:

Մարզի մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2020թ. կազմել է 155,0 հազ. դրամ միջին հանրապետական 437.2 հազ. դրամի դիմաց կամ ցածր է ավելի քան 3,5 անգամ և 2019թ. 166.3 հազ. դրամի դիմաց.

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Մանրածախ առևտուր	50090.8	39756.6	37635.6	43290.4	35635.9	33019.7

Ծառայությունների ծավալը մարզում 2020թ. կազմել է 20982.8մլն. դրամ, 2019թ. 23740.4մլն. դրամի դիմաց կամ ծառայությունների ծավալն նվազել է 88.4%-ով, իսկ տեսակարար կշիռը կազմել է հանրապետական ծառայությունների 1.2%-ը:

Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում անցյալ տարի կազմել է 98.5 հազ. դրամ 2019թ. 110.8 հազ. դրամի և միջին հանրապետական 576.8 հազ. դրամի դիմաց (կամ հանրապետականի 17.1%-ը):

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Մատուցվող ծառայությունների ծավալը	17720.4	15770.6	18214.7	20783.8	23740.4	20982.8

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նախապատրաստվել և անցկացվել է մարզպետի մոտ մարզի բոլոր համայնքների ղեկավարների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ 4 ընդլայնված խորհրդակցություններ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման և տեղական ինքնակառավարման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել և ընդունվել են մարզպետի 15 որոշումներ:

Աջակցություն է ցուցաբերվել թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային ընտրական հանձնաժողովին՝ Չկալով համայնքի ղեկավարի ընտրության նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:

Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը:

Ներկայացվել է պաշտոնական թղթակցությունների, հանձնարարականների կատարման 1144 պատասխանների նախագծեր:

Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված 275 դիմում-բողոքներ և ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր:

Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել 170 շրջաբերական գրություններ:

Ապահովվել է մարզի համայնքներում ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության աշխատանքներին վարչության մասնագետների մասնակցությունը:

Համակարգվել է համայնքների 2020 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:

2020 թվականին ստացվել են համայնքների ավագանիների 2567 և համայնքների ղեկավարների 9120 որոշումներ:

Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ (զինկոմիսարիատներ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայության մարզային բաժին, փրկարարական մարզային վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների և դիմումների առավել խորությամբ քննարկմանը և դրանց հստակ պատասխանների ներկայացմանը:

Վարչությունը իրականացրել է մարզի ԲՈՒՀ-երի ուսանողների նախաավարտական պրակտիկան անցկացնելու աշխատանքներ:

Ապահովվել է ՀՀ Լոռու մարզպետի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագծի կազմման աշխատանքները, ապահովվել են պլանով սահմանված միջոցառումների իրականացումը: Արտակարգ դրության և ռազմական դրության պատճառով չեն անցկացվել պլանով նախատեսված ուսումնավարժությունները:

Մարզի 56 համայնքները հաստատել են համայնքների աղետների ռիսկերի պլանները՝ հաշվի առնելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մշակած նոր մեթոդական ուղեցույցը:

Հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2020 թվականի ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը: Ապահովվել է ըստ պլանի ունկնդիրների մասնակցությունը դասընթացներին: 39 ունկնդիրներից դասընթացներին մասնակցել են 30-ը:

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված և մարզպետներին տրամադրած մարզի

համայնքների միավորման տարբերակների աշխատանքային քննարկումներ համայնքների ղեկավարների մասնակցությամբ:

COVID -19 համավարակի դեմ պայքարի շրջանակում վարչության կողմից համակարգվել է համայնքներում արտակարգ դրությամբ և կարանտինով սահմանված համայնքների ղեկավարների կողմից միջոցառումների իրականացումը: Մասնավորապես համայնքների ղեկավարների կողմից հակահամաճարակային միջոցառումների իրականացումը (հանրային տարածքների, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի և վերելակների ախտահանիչ նյութերով մշակում), բնակչության տեղաշարժի սահմանափակման ռեժիմի հսկողություն համայնքնային ոստիկանության հետ համատեղ, Պարետի այլ ցուցումների կատարման ապահովում:

Ռազմական դրություն հայտարարելուց հետո վարչությունը բերվել է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի, աշխատանքները իրականացվել են շուրջօրյա ռեժիմով: Իրականացվել են ռազմական դրության ժամանակ վարչությանը վերապահված գործառույթները:

Վարչության կողմից հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն է ներկայացվել մարզի համայնքներ տեղափոխված Արցախի Հանրապետության քաղաքացիների հաշվառման թերթիկները, ինչպես նաև Արցախից տեղահանվածների տվյալների շտեմարանում իրականացվել է տվյալների մուտքագրումը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2020 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ 1 համայնքում՝ Չկալով համայնքի ղեկավարի ընտրություն:

Սահմանվել և իրականացվել է հսկողություն 2019 թվականի ընթացքում համայնքների ղեկավարների, համայնքապետարանների աշխատակազմերի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների աշխատակիցներին չտրամադրված արձակուրդները տրամադրելու ուղղությամբ և բոլոր աշխատակիցներին տրվել են չօգտագործված արձակուրդները:

ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացման և տեղական եկամուտների հավաքագրման աճ ապահովելու նպատակով՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների և աշխատակազմերի հետ կազմակերպվել են քննարկումներ:

Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում:

Վարչության կողմից ամիսը մեկ անգամ իրականացվել է մարզի համայնքներում փաստացի գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակի և նրանց հետ կնքված աղբահանության պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն:

Մարզպետարանի ինտերնետային կայքում համայնքների ՏԻՄ-երի վերաբերյալ տվյալները թարմացնելու նպատակով տեղեկատվություն է ներկայացվել զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնին:

Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:

Պարբերաբար իրականացվել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում, որի արդյունքները ներկայացվել է համայնքապետարանների աշխատակազմերին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացվել, տեսակավորվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2020թ.-ի հունվարի 1-ի և հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված քաղաքացիների ցուցակները:

Աշխատանքներ են իրականացվել 3000-ից ավելի բնակչություն ունեցող մարզի 16 համայնքների ինտերնետային կայքերի շահագործման մակարդակը բարձրացնելու, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխանացնելու, համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման և բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 139 մրցույթներ, որոնցից կայացել են 46-ը, ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու պատճառով չեղարկվել են 54-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 97 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 76-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 43-ը:

Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում, ֆեյսբուքյան էջում, http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:

Արտակարգ դրության և ռազմական դրության պատճառով չեն անցկացվել համայնքային ծառայողների վերապատրաստումներ:

Քննարկվել են համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության անվանացանկերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները և դրանք

ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին: Տարվա ընթացքում կրճատվել են համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության 16 պաշտոններ:

Մարզի համայնքապետարանների աշխատակազմերից մշտապես հավաքագրվել են համայնքային ծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները (գրանցամատյան Ձև 1, 2) և աշխատակազմերի, բյուջետային հիմնարկների և համայնքային կազմակերպությունների հաստիքացուցակները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզում 2020թ. գործել է.

ա/ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

բ/ 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 3369 երեխաներով

գ/ 163 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան:

Մարզային ենթակայությամբ գործող 149 դպրոցներն ընդգրկում են՝

միջնակարգ դպրոցներ - 80

վարժարան - 1

հիմնական դպրոցներ - 68

Մարզի դպրոցներում աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը 14.09.2020թ-ի դրությամբ կազմել է 9/1:

Նախադպրոցական կրթություն

2020 թվականին Լոռու մարզում գործել է 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ընդգրկվել է 3369 երեխա: Ընդ որում, 5-6 տարեկանների թիվը 1544 է:

Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5443 երեխա/տեղ, որի միայն 61%-ն է շահագործվել նախկին 88%-ի փոխարեն՝ ելնելով ՀՀ նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման և կանխարգելելման միջոցառումների պահանջներից :

Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 24%-ը: Այս բացը լրացվում է գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող նախակրթարանների միջոցով:

2015-2020 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապար-տեզների թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2016	68	4379	1807
2017	69	4856	1805
2018	70	4751	1833
2019	72	5055	1870
2020	68	3369	1544

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 149 դպրոցում աշխատում է 3001 ուսուցիչ, 1 դասարանում սովորող աշակերտների միջին թիվը 16.9 է:

Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	2015/2016 2-րդ կիսամ	2016/2017 2-րդ կիսամ	2017/2018 2-րդ կիսամ	2018/2019 2-րդ կիսամ	2019/2020 2-րդ կիսամ
Դպրոցների քանակը	151	150	149	149	149
Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	26120	26435	26751	27499	27947
/1-ին/ դասարան	3055	3223	3118	3018	2995
/9-րդ/ դասարան	2145	2031	2346	2356	2576
/12-րդ/ դասարան	1096	959	498	778	735
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	173	176	179	184	187
Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10.6	10.7	10.7	10.9	11
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	16.2	16.4	16.7	16.9	16.9
Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցություն	1/8.3	1/8.3	1/8.5	1/9.3	1/10

Գծապատկերից երևում է, որ 2020 թվականի հունվարին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 448-ով:

Ըստ դպրոցների տվյալների, 2020թ. մարզի տարածքում հայտնաբերվել են հանրակրթական հաստատություններում գրանցված, սակայն պարտադիր ուսուցումից դուրս մնացած 42 երեխա, որից 19-ը Լերմոնտովո և Ֆիոլետովո համայնքների երեխաներն են, որոնք հիմնականում մոլոկաններ են, 4-ը քաղաքում չեն եղել, մնացածն ունեցել են ընտանեկան տարբեր խնդիրներ:

Հեռավար կրթությունը խիստ սահմանափակում է կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը: Այս պայմաններում շատ արդյունավետ է աշխատում արագ արձագանքման մեթոդը:

Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ անց են կացվել բացատրական աշխատանքներ:

Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,8%:

Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 149 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի «ՀՀ կառավարության 2002թ հուլիսի 25-ի 1395-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1535-Ն որոշումը կազմակերպվել է մարզային ենթակայության 149 հանրակրթական դպրոցների կանոնադրությունների փոփոխության և լրացման հաստատման գործընթացը:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների 2020 թվականի փոխհատուցման համար կատարվել է վերահաշվակ /հաշվի է առնվել Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված դպրոցներում դասապրոցեսի դադարեցումը/, արդյունքում՝ թվով 106 դպրոցի թվով 511 ուսուցիչների և 26 դպրոցի թվով 301 աշակերտի համար համար փոխհատուցվել է 27571.0 հազար դրամ:

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում հայտարարվել է Հագվու և Մեդովկայի դպրոցների համար նախատեսվող շենքային համալիրների կառուցման աշխատանքների մրցույթները:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020 թվականի բյուջեների վերաբախշման արդյունքում 13.303 մլն.դրամ է հատկացվել Վանաձորի թիվ 12 հիմնական, Ահնիձորի հիմնական, Արջուտի միջնակարգ, Կաճաճկուտի հիմնական, Գարգառի միջնակարգ, Ճոճկանի միջնակարգ և Լեռնանցքի միջնակարգ դպրոցներին /աշխատանքներն ավարտվել են/:ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020 թվականի բյուջեների վերաբախշման արդյունքում 162.3976 մլն.դրամ է հատկացվել թվով 22 դպրոցի /աշխատանքներն կիրականացվեն 2021 թվականին/:

Հաշվետու ժամանակաշրջանում ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային Ծրագրի կողից իրականացվող «Դպրոցական ճաշարան» միկրոծրագրի շրջանակներում վերանորոգվել են Լեռնապատի, Վահագնիի, Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցների ճաշարանները, սարքավորումներ են ստացել 20 դպրոց (Վանաձորի թթ. 7, 18, 22, 24, Դեբեդի, Եղեգնուտի, Լեռնապատի, Սպիտակի

թթ. 1, 8, Ախթալայի թթ. 1, 2, Արևաձագի, Դսեղի, Թեղուտի, Հաղպատի, Մարցի, Մեծ Այրումի, Քարինջի, Ստեփանավանի թիվ 6, Լեռնահովիտի դպրոցներ):

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի հետ համատեղ կատարվել են արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքներ 16 դպրոցներում, 2020թ. շահագործման են հանձնվել 3 դպրոցներ /Վանաձորի թիվ 27 հ/դ, Սպիտակի թիվ 2 հ/դ, Հարթագյուղի մ/դ/ ջերմոցների հիմնման նախագծային աշխատանքներ 5 դպրոցներում /Սպիտակի թիվ 8, Ստեփանավանի թիվ 6, Մարգահովիտի, Կուրթանի Վանաձորի թիվ 27 հիմնական/, այգիների հիմնման աշխատանքներ 6 դպրոցներում /Դարպասի, Ֆիոլետովոյի Կաթնաջրի, Շահումյանի, Ճոճկանի, Ալավերդու թիվ 12 հ/դ/, հատապտղային այգիների հիմնման աշխատանքներ 2 դպրոցներում /Լեռնանցքի մ/դ, Դսեղի մ/դ/: Ծրագրի նպատակն է աշակերտներին զինել ժամանակակից գյուղատնտեսության վերաբերյալ գործնական գիտելիքներով, որը միտված է գյուղատնտեսության կազմակերպման կարծրացած, ոչ արդյունավետության մեթոդները նոր, արդյունավետ մեթոդներով փոխարինմանը և գյուղատնտեսության ոլորտում համայնքների զարգացմանը: ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային ծրագրի շրջանակներում նախատեսվող ջերմոցների և այգիների հիմնում ծրագրին մասնակցությունն ապահովելու համար լրացուցիչ 8.9 մլն դրամ գումար է հատկացվել թվով 9 դպրոցի:

Խնայված միջոցների հաշվին /այդ թվում բարեգործների կողմից հատկացված միջոցներ/ նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 93 դպրոցում: Ներդրումը կազմել է 110.214 մլն.դրամ:

2020թ. խնայողությունների հաշվին ՀՀ Լոռու մարզային ենթակայության դպրոցները ձեռք են բերել համակարգչային տեխնիկա, սպորտային և դպրոցական գույք շուրջ 8624.6 հզ դրամի:

Ներկայացվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունիսի 4-ի N 907-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծ:

Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 81-ը ջեռուցումը իրականացնում է լոկալ համակարգով /բնական գազ, կաթսայատուն կամ փոքր հզորության կաթսա/, 31-ը գազի վառարանով, 19-ը վառելափայտով, 16-ը էլեկտրականությամբ, 2-ը հեղուկ վառելիքով: Թվով 7 դպրոց օգտագործում է երկու էներգակիր:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար եւ հետագա պլանների ձեւավորման համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխարգելելու և ուսումնական գործընթացի շարունակականությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով, սույն թվականի մարտի 16-ից առաջարկել է ուսումնական գործընթացը կազմակերպել հեռավար եղանակով: Հեռավար եղանակով ուսումնական գործընթացը պատշաճ ձևով իրականացնելու և ուսուցման շարունակականությունը ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզային ենթակայության շուրջ 85 դպրոցներին 2020թ. առաջին կիսամյակում բաշխվել է թվով 176 պլանշետ և 50 սմարթֆոն: 2020թ. դեկտեմբերին ՀՀ Լոռու մարզպետարանի և Չեխիայի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում Վիշեգրադի միջազգային հիմնադրամի աջակցությամբ Սպիտակ համայնքի թվով 6 դպրոցի տրամադրվել է ընդհանուր առմամբ 135 հատ BG7000G մակնիշի

պլանշետ՝ սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին հատկացնելու համար:

2019-2020թթ. Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակը, համագործակցելով ԿԳՄՍ նախարարության հետ, «Հանուն ուժեղ հասարակության» ծրագրի շրջանակներում 2 փուլով իրականացրել է Լոռու մարզի անգլերենի ուսուցիչների վերապատրաստում անգլերենի դասավանդման և ուսուցման որակի բարելավման նպատակով: Արդյունքում իրականացվել է շուրջ 60 ուսուցիչների վերապատրաստում:

Չնայած COVID-19 համավարակի պատճառով երկրում ստեղծված իրավիճակին, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամն 2020թ. իրականացրել է գալիք սերնդի ուսուցիչների առաջնորդության ակադեմիան: Արդյունքում 2020-2021 ուսումնական տարում 2 տարի ժամկետով թվով 14 մասնակից գործուղվել է Լոռու մարզի հանրակրթական դպրոցներ: Ինչպես նաև 2020թ. հուլիսի 13-ից 31-ը «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի կողմից առցանց իրականացվել է աշակերտների առաջնորդության ամառային ճամբար, մասնակից աշակերտներին տրամադրվել են թվային սարքավորումներ՝ նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու:

2020թ. հոկտեմբեր ամսին, համագործակցելով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության Լոռու մարզի համակարգողի հետ, կազմակերպվել են Լոռու մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների «Տեխնոլոգիա» առարկան 6-րդ դասարաններում դասավանդող թվով 286 ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ՝ ««Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը» թեմայով: Դասընթացները իրականացվել են առցանց եղանակով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավար աշխատողների, ուսուցիչների և զինղեկների վերապատրաստման դասընթացներ «Աղետների և ռիսկերի նվազեցման կրթության հարցեր» թեմայով: 2020թ-ին վերապատրաստվել են թվով 12 աշխատակից:

ՀՀ Կենտրոնական բանկի աջակցությամբ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կողմից հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի, հանրահաշվի, հասարակագիտության, «Ես և շրջակա միջավայրը» առարկայի ուսուցիչների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ «Ֆինանսական կրթությունը դպրոցում» թեմայով: COVID19 համավարակով պայմանավորված, վերապատրաստումներն անցկացվել են առցանց եղանակով: Այդ վերապատրաստումներն իրականացնելու նպատակով կազմվել և ամփոփ տեղեկատվություն է տրվել վերապարաստմանն ընդգրկված Լոռու մարզի Վանաձոր քաղաքի և Տաշիրի տարածաշրջանի թվով 27 դպրոցների 219 ուսուցիչների վերաբերյալ:

2020 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական դպրոցից 10-ում կազմակերպվել են դպրոցի տնօրենի թափուր պաշտոնների համար մրցույթներ: 2020 թվականի ընթացքում ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվել է շուրջ 2200 մրցույթ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլն ըստ ժամանակացույցի իրականացվել է «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աստղագիտություն» «Աշխարհագրություն», «Պատմություն», «Ինֆորմատիկա» առարկաներից, իսկ «Գերմաներեն» , «Ֆրանսերեն», «Անգլերեն», «Հայոց լեզու», «Հայ Գրականություն», «Ռուսաց լեզու», «ՀԵՊ» և «Քիմիա» առարկաների օլիմպիադաների հանրապետական փուլերը միայն 12-րդ դասարանների համար իրականացվել է ս/թ հունիսի 5-6-ը:Նշված առարկաներից հանրապետական փուլում ՀՀ Լոռու մարզից ունենք չորս 1-ին կարգի, երեք 2-րդ կարգի, վեց 3-րդ կարգի և երեք գովասանագրի արժանացած մրցանակակիրներ:

Հանրապետական փուլի 9-11-րդ դասարանների սովորողների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը մեկնարկել է նոյեմբերի 22-ին «Հայ գրականություն», «Հայոց լեզու», «Գերմաներեն լեզու», «Ֆրանսերեն լեզու», «Անգլերեն լեզու», «Ռուսաց լեզու», «Հայոց եկեղեցու պատմություն»և«Քիմիա»առարկաներից:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 33 մրցանակակիր, որոնցից.

ա/ 1-ին կարգի դիպլոմ – 5
բ/ 2-րդ կարգի դիպլոմ – 6
գ/ 3-րդ կարգի դիպլոմ – 8
դ/ գովասանագիր – 14

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մրցանակակիրները և նրանց ուսուցիչները ՀՀ Լոռու մարզպետի կողմից արժանացել են շնորհակալագրերի:

Հատուկ /ներառական/ կրթություն

2020-2021 ուստարում ներառական կրթություն են իրականացրել մարզի 110 հանրակրթական դպրոցներ՝ 879 վկայագրված աշակերտների համար, որոնցից 463-ը՝ միջին ծանրության աստիճանի են, 137-ը՝ ծանր, 18-ը՝ խորը, 261-ը՝ թեթև:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

2020թ-ի ընթացքում ՀՀ Լոռու մարզպետարանի ԿՄՍ վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել են մի շարք դաստիարակչական, ռազմահայրենասիրական միջոցառումներ.

ՀՀ Լոռու մարզպետարանը և «Ազգային արժեք» մշակույթի համահայկական հիմնադրամը հայտարարել են «Իմ գունեղ Լոռի» խորագրով գունանկարի առցանց մրցույթ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած Հաղթանակի-75 և Շուշիի ազատագրման 28- ամյակին:

Պատերազմական իրավիճակում հայենիքի պաշտպաններին ոգեշնչելու նպատակով իրականացվել է դպրոցահասակ երեխաների կողմից գրված նամակ-շարադրությունների հավաքագրում:

Դասագրքերի շրջանառու համակարգով 2020-2021 ուստարվա սկզբում բաշխվել է 43 անուն 48 003 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով: Ստացվել են տարրական դասարանների 16 անուն 30 623 դասագիրք:

ՄՇԱԿՈՒՅԹ

2020 թվականին նախապատրաստական աշխատանքներ են տարվել ՀՀ Լոռու մարզի Հաղպատի, Քոբայրավանքի, Սանահինի, Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր (գյուղ Դսեղ) վանական համալիրների ենթակառուցվածքների վերականգնման հետ կապված: Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխարգելելու նպատակով հայտարարված արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ այդ աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2021թ:

2020 թվականի սուբվենցիոն ծրագրերով կառուցվել, հիմնանորոգվել և բարեկարգվել են թվով 17 համայնքային կենտրոններ, հանդիսությունների սրահներ, մշակույթի տներ, գրադարաններ, հուշարձաններ:

2020 թվականի սուբվենցիոն ծրագրերով կառուցվել և հիմնանորոգվել է նաև 5 մարզադպրոց և մարզադաշտ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ, համայնքների համաֆինանսավորմամբ, մարզի 14 համայնքներում կառուցվել են մինի ֆուտբոլի մարզադաշտեր /աշխատանքներն ավարտական փուլում են/: Վանաձորի կենտրոնական մարզադաշտի կառուցման աշխատանքները շարունակվում են:

Կազմակերպվել է միջոցառում նվիրված կանանց տոնին,որի ժամանակ մարզի մշակույթի գործիչները պարգևատրվել են ՀՀ Լոռու մարզպետի կողմից:

Հոբելյանական օրերի առթիվ պարգևատրվել են Լենա Անթառանյանը, Ֆահրադ Ափուջանյանը,Վահե Շահվերդյանը, Սարգիս Ղարիբյանը:

Սեպտեմբերին Մեծավանում կազմակերպվել է Լոռու ստեղծարար երիտասարդներ երիտասարդական փառատոնը, մարզի շուրջ 300 երիտասարդների մասնակցությամբ:

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում կայացած «Պլեներ 2020» երիտասարդական փառատոնին ապահովվել է մարզի 5 երիտասարդ նկարիչների մասնակցությունը:

Ստեփան Զորյանի 131-ամյակին նվիրված միջոցառմանը ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից ցուցաբերվել է աջակցություն:

Դսեղում ՅՈՒՆԻՍԱ-Հայաստանի հետ համատեղ կազմակերպվել է «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային 15-րդ փառատոնը: Կազմակերպչական աշխատանքներին ցուցաբերվել է աջակցություն:

-Սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության օրվա առթիվ կազմակերպվել է «Մեր հայրենիք» խորագրով մոտո-հեծանվարշավ, որը ամփոփվեց Հայքի հրապարակում՝ շուրջպարով:

Լոռու մարզի զբոսաշրջային գրավչությունը հանրայնացնելու նպատակով կազմակերպվել է «Լոռին այսօր» խորագիրը կրող լուսանկարչական մրցույթ:

«Ազգային արժեք» մշակույթի հանրապետական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է «Իմ գունեղ Լոռի» խորագիրը կրող առցանց մրցույթ՝ նվիրված Հայենական Մեծ Պատերազմի 75 և Շուշիի ազատագրման 28-ամյակներին: Պարգևատրման արարողությունը կազմակերպվել է Ստեփան Զորյանի անվան տուն –թանգարանում: Մրցանակակիրները ՀՀ Լոռու մարզպետի, փոխմարզպետի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի կողմից պարգևատրվեցին շնորհակալագրերով, գրքերով և նկարչական պարագաներով:

Սպորտ

Փետրվարին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական աջակցությամբ, ՀՀ Լոռու մարզի սամբոյի ֆեդերացիայի հետ համատեղ կազմակերպվել է մարզի առաջնություն 2002-2004թթ ծնված պատանիների և աղջիկների մասնակցությամբ: Հաղթողների և մրցանակակիրներին պատվոգրերով և մեդալներով պարգևատրել է ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանը:

Փետրվարին ՀՀ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում ՀՀ Լոռու փոխմարզպետ տիկին Գ.Մարկոսյանի կողմից կազմակերպվել է Վանաձորի աթլետիկայի մարզադպրոցի թվով 15 անապահով և լավագույն արդյունքներ ցուցաբերած սաների ընդունելություն, որոնց տրամադրվել է ֆիրմային մարզակոշիկներ:

2020թ. փետրվարի 16-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «Լոռվա ձմեռ-2020» 4-րդ ավանդական մարզատոնահանդեսը:

Մշակույթի և սպորտի ոլորտի հեղինակավոր մարդկանց մասնակցությամբ կազմակերպվել է տեսաուղերձի նկարահանման աշխատանքներ՝ «Կրի՛ր դիմակ, փրկի՛ր կյանքեր» խորագրով:

2020թ փետրվարին Վանաձորի թիվ 6-րդ դպրոցի մարզադահլիճում, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական աջակցությամբ, կազմակերպվել է 3-օրյա բասկետբոլի առաջնություն՝ նվիրված Հայոց բանակի և զոհված ազատամարտիկների հիշատակին: Հաղթողների և մրցանակակիրներին պատվոգրերով, մեդալներով և գավաթներով պարգևատրել է ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանը: Կազմակերպչական և տեղեկատվական աշխատանքներին ցուցաբերվել է աջակցություն:

Հունիս-Հուլիս ամիսներին Կրթության բաժնի հետ համատեղ կազմակերպվել է «Մնա տանը, եղիր առողջ» խորագիրը կրող տեսահոլովակների մրցույթ: Շուրջ 110 տեսահոլովակներից ընտրվել են 3 լավագույնը, որոնք ուղարկվել են ԿԳՄՍ նախարարություն և արժանացել շնորհակալագրի: Հաղթող դպրոցականներին շնորհակալագրերով և գավաթներով պարգևատրել է կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետը:

Կազմակերպվել է ՀՀ Լոռու մարզպետի հանդիպումը «Լոռի» ֆուտբոլային թիմի հետ: Մարզպետի կողմից թիմին տրվել է 30 զույգ որակյալ խաղակոշիկներ:

Կազմակերպվել է կքանիստ դրությամբ ծանրաձողը ուսերին պահելով «Դյուցազնագրքի» ռեկորդ սահմանած Զորիկ Պողոսյանի ընդունելությունը:

Կազմակերպվել է 142 կգ ծանրությունը մեջքին՝ 6 վարկյանում 5 անգամ հենում – ծալում վարժությունը կատարելով «Դյուցազնագրքի» ռեկորդ սահմանած Արտյոմ Սոլոյանի ընդունելությունը:

ՀՀ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում պարբերաբար կազմակերպվում են միջազգային մրցասպարեզներում հաջողություններ գրանցած մարզիկների և նրանց մարզիչների պարգևատրման արարողություններ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2020թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները.

h/h	բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալների թիվը
	հիվանդանոց	1	45
	բժշկական կենտրոններ՝	5	396

	«Վանաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ		186
	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ		50
	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ		40
	դիսպանսեր	1	35
	պոլիկլինիկաներ	4	
	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	1	
	առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ամբուլատորիաներ/	19 (որից համայնքային ենթակայության՝ 5)	
	առողջապահական ընկերությունների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր	95	
	Ընդամենը՝	31	476

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 434, միջին բուժաշխատողներ- 901, այլ- 518, ընդամենը՝ 1853 մարդ:

2020թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

2020թ. Բազային ծավալ հազ.դրամ		Կատարողական	Ֆինանսավորում
ԸՆԴԱՄԵՆԸ՝	5055973.0	4986785.0	4986738.0

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 100 %-ով:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում վճարովի ծառայության մուտքերը ըստ տարիների՝

հազ.դրամ

	Վճարովի ծառայության մուտքերը

	կազմել են՝
2014թ.	475415.9
2015թ	523786.7
2016թ	526069.1
2017թ.	608255.7
2018թ.	722956.6
2019թ.	1202544,3
2020թ.	1084902.4

Նկատվում է վճարովի ծառայությունների նվազում 2019թ. համեմատ՝ շուրջ 10%-ով, որը պայմանավորված է երկրում կորոնավիրուսի համաճարակով:

Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց և վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ եռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

2020թ. արդյունքներով աշխատավարձի գծով պարտքեր առողջապահական ընկերությունները չունեն:

2020թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզում իրականացվել են՝

✓ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և ձեռք են բերել գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ, ընդամենը 6435.5 հազ. դրամ արժողությամբ: ՀՀ ԱՆ-ի կողմից ստացել է ընդամենը 4361.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ, որից թոքերի ապարատ՝ 800.0 հազ. դրամ, օքսիգեներատոր՝ 1500.0 հազ. դրամ, թթվածնային կոնցենտրատորներ /3 հատ 5լ, 5 հատ 10լ/՝ ընդամենը 1392.0 հազ. դրամ, վիրաբուժական գործիք տիտանային միջին-մեծ ամրակների՝ 300.0 հազ. դրամ, թթվածնի կոմպրեսոր՝ 250.0 հազ. դրամ, գոլորշով մաքրող սարք՝ 119.0 հազ. դրամ: ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրվել է 2 հետազոտման սեղան՝ ընդամենը 800.0 հազ. դրամ արժողությամբ:

✓ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և ձեռք են բերվել գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ, ընդամենը 36697.5 հազ. դրամ արժողությամբ, որից վերանորոգման աշխատանքներ՝ 7684.0 հազ. դրամ, թթվածնային կենտրոնացված համակարգի համար՝ 5000.0 հազ. դրամ, թվային ուլտրաձայնային համակարգ՝ 13750.0 հազ. դրամ, լիզինգով ձեռք բերված հիմնական միջոցի վճարումներ՝ 5125.0 հազ. դրամ, տեսահսկման համակարգ՝ 400.6 հազ. դրամ, 2 լվացքի մեքենա՝ ընդամենը 1674.8 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է ընդամենը 44218.8 հազ. դրամ արժողությամբ բժշկական սարքավորումներ և պարագաներ, որից շարժական թվային համակարգ՝ 17500.0 հազ. դրամ, շտապ օգնության մեքենա՝ 17320.0 հազ. դրամ արժեքով, թթվածնի բալոններ՝ 5750.0 հազ. դրամ, երկու ճառագայթային ռեզերկուլյատորներ՝ ընդամենը 1800.0 հազ. դրամ արժեքով և այլ սարքավորումներ:

✓ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել 530.0 հազ. դրամի սարքավորումներ և բժշկական պարագաներ: Առողջապահության նախարարության կողմից

հատկացվել է ընդամենը 16300.1 հազ. դրամ արժեքով սարքավորումներ և բժշկական պարագաներ, որից շտապ օգնության մեքենա՝ 14200.0 հազ. դրամ, արտահագուստ՝ 1158.0 հազ. դրամ, առաջնային օգնության պայուսակ՝ 822.3 հազ. դրամ, դյուրակիր համակարգիչ՝ 119.8 հազ. դրամ և այլն:

✓ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերվել ընդամենը 25736.5 հազ. դրամ արժողությամբ սարքեր և բժշկական սարքավորումներ, որից որովայնային լապարասկոպ՝ 25000.0 հազ. դրամ, օֆտալմոսկոպ՝ 158.0 հազ. դրամ, տեսահսկման համակարգ՝ 420.0 հազ. դրամ, բակտերիցիդ լամպեր՝ 46.0 հազ. դրամ, հակահրդեհային ազդանշանային համակարգ՝ 52.5 հազ. դրամ և այլն:

✓ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերվել ընդամենը 10272.9 հազ. դրամ արժողությամբ գույք, սարքավորումներ, բժշկական սարքավորումներ և պարագաներ, որից իմունոֆլյուորեսցենտային անալիզատոր՝ 700.0 հազ. դրամ, նախորդ տարիներին լիզինգով ձեռք բերված սարքավորումների վճար՝ 8287.3 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել են 21 հատ պուլսօքսիմետր՝ ընդամենը 192.0 հազ. դրամ արժողությամբ: Անհատների կողմից հատկացվել են 294.0 հազ. դրամ արժեքի սարքավորումներ:

✓ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ընդամենը 240.0 հազ. դրամ արժողությամբ գույք և սարքավորում, որից ցենտրիֆուգա՝ 90.0 հազ. դրամ, դուռ՝ 150.0 հազ. դրամ: «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին մի շարք հիմնադրամների կողմից անհատույց տրամադրվել են գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ՝ ընդամենը 48942.6 հազ. դրամ, այդ թվում՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից հատկացվել է շարժական ռենտգեն սարքավորում՝ ընդամենը 35030.0 հազ.դրամ արժեքով, «Թովմասյան» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել են կենսաքիմիական անալիզատոր՝ 6677.0 հազ. դրամ արժեքով և 12 հատ բազմաֆունկցիոնալ մահճակալ՝ 2340.0 հազ. դրամ արժեքով, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից՝ 10 հատ բազմաֆունկցիոնալ մահճակալ՝ 1530.0 հազ. դրամ, «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից՝ հեմատոլոգիական վերլուծիչի հավաքածու, կոագուլոմետր, լվացքի մեքենա, թթվածնային կենտրոնացված համակարգի 5 կետ, ընդամենը 3202.0 հազ. դրամ արժողությամբ, ինչպես նաև «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի և Լիլիա Աբրահամյանի կողմից գույք և բժշկական պարագաներ: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել է Բոբրով թթվածնային ծախսաչափ խոնավացուցիչով՝ 75.0 հազ. դրամ և Բոբրովի բաժակ թթվածնային ծախսաչափ խոնավացուցիչով՝ 81.6 հազ. դրամ, թոքերի արհեստական օդափոխության սարք:

✓ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ և ձեռք է բերել սարքավորումներ ընդամենը 1107.5 հազ. դրամ արժեքով, որից վերանորոգման աշխատանքներ՝ 352.8 հազ. դրամ, 2 սառնարան՝ ընդամենը 340.0 հազ. դրամ, 2 փոշեկուլ՝ ընդամենը 160.0 հազ. դրամ և այլն:

✓ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք են բերել ընդամենը 993.3 հազ. դրամի գույք և սարքավորումներ, որից ՀԾ ծրագրի տեղադրում՝ 480.0 հազ. դրամ, համակարգիչ՝ 249.3 հազ. դրամ, մատնահետք կարդացող սարք՝ 189.0 հազ. դրամ և այլն:

✓ «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք են բերել ընդամենը 261.6 հազ. դրամի սարքավորում, որից պատճենահանող սարք՝ 102.6 հազ. դրամ, սկաներ՝ 59.0 հազ. դրամ, 3 հեռահար ջերմաչափ՝ 100.0 հազ. դրամ: Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են 5 սառնարան-պայուսակ՝ ընդամենը 373.8 հազ. դրամ:

✓ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է 2 դյուրակիր համակարգիչ՝ ընդամենը 239.5 հազ. դրամ:

✓ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ընդամենը՝ 1031.0 հազ. դրամ, որից իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ՝ 813.0 հազ. դրամ արժողությամբ, ձեռք են բերվել 2 տպիչ սարք՝ ընդամենը 218.0 հազ. դրամ:

✓ «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում «Հայաստանի մանուկներ» /COAF/ բարեգործական հիմնադրամի միջոցով իրականացվել են ընդամենը 5462.2 հազ. դրամի աշխատանքներ, որից ատամնաբուժական համասարք՝ 1755.0 հազ. դրամ, կոնվեքսային տվիչ՝ 3214.0 հազ. դրամ, կոմպրեսոր՝ 145.0 հազ. դրամ 4 հեռահար ջերմաչափ՝ 110.0 հազ. դրամ, սենյակի մանրեազերծման

լամպ՝ 65.0 հազ. դրամ, պլանշետ՝ 94.0 հազ. դրամ, 4 պուլսօքսիմետր՝ 40.0 հազ. դրամ և այլն: Սեփական միջոցներով իրականացվել են ջրագծի համակարգի վերանորոգում՝ 17.0 հազ. դրամ, տեսանկարահանող սարք՝ 45.0 հազ. դրամ, ընդամենը՝ 62.0 հազ. դրամ: Տարվա կտրվածքով համայնքապետարանը տրամադրել է 50.0 հազ. դրամ:

✓ «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը սեփական միջոցներով՝ ընդամենը 132.5 հազ. դրամ, որից տպիչ՝ 114.0 հազ. դրամ, ախտահանման ցողացիր սարքեր՝ 15.0 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են առաջին բուժօգնության պայուսակներ՝ 149.5 հազ. դրամ, 4 պուլսօքսիմետրեր, 3 դիսպենսեր: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցով տրամադրել են ընդամենը 114.6 հազ. դրամի բժշկական պարագաներ: Վորլդ Վիժն ինթերնեյշնլի կողմից հատկացվել է 2 պուլսօքսիմետր՝ 39.7 հազ. դրամ արժեքով:

✓ «Արևածագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ը սեփական միջոցներով ձեռք է բերել հեռահար ջերմաչափ՝ 21.0 հազ. դրամ արժեքով, Վորլդ Վիժն ինթերնեյշնլի կողմից հատկացվել է 2 պուլսօքսիմետր: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը հատկացրել է բժշկական նշանակության պարագաներ:

✓ «Վարդաբլուրի ԲԱ» ՀՈԱԿ սեփական միջոցներով իրականցվել են վերանորոգման աշխատանքներ՝ 500.0 հազ. դրամ և ձեռք են բերվել գույք 190.0 հազ. դրամ, ընդամենը 690.0 հազ. դրամ:

✓ «Գուգարքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ սեփական միջոցներով իրականցվել են վերանորգման աշխատանքներ, ընդամենը 931.0 հազ. դրամ, որից 1 կաբինետի վերանորոգում՝ 80.0 հազ. դրամ, 13 ճաղավանդակ՝ 700.0 հազ. դրամ, ջեռուցման համակարգի վերանորոգում՝ 110.0 հազ. դրամ, ջրի տաքացուցիչ՝ 41.0 հազ. դրամ:

✓ «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ սեփական միջոցներով ձեռք են բերվել սարքեր և կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը՝ 186.7 հազ. դրամ, որից անալիզատոր՝ 89.0 հազ. դրամ, 2 տոնոմետր՝ 11.0 հազ. դրամ, մեկուսարանի կառուցում՝ 86.7 հազ. դրամ:

✓ «Ախթալայի ԱԿ» ՊԳԲԸ սեփական միջոցներով իրականացվել են ներքին վերանորոգման աշխատանքներ՝ 117.0 հազ. դրամ արժեքով, հեռահար ջերմաչափ՝ 36.6 հազ. դրամ արժեքով, ընդամենը 153.6 դրամ արժեքով:

✓ «ՈՒռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ ձեռք է բերել գազի կաթսա ընդամենը 320.0 հազ. դրամ, որից 120.0 հազ. դրամը սեփական միջոցներով, 200.0 հազ. դրամը տրամադրել է համայնքը:

✓ «Շնողի ԲԱ» ՀՈԱԿ համայնքապետարանը կատարել է 2899.7 հազ. դրամի ներդրում, որից գույք՝ 245.0 հազ. դրամ, վերանորոգում՝ 554.7 հազ. դրամ, դրամաշնորհ՝ 2100.0 հազ. դրամ:

Կատարվել են նաև այլ ընթացիք վերանորոգման աշխատանքներ:

Այսպիսով, մարզի առողջապահական ընկերություններում սեփական միջոցներով ձեռք են բերվել գույք, սարքավորում, կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը 210960.7 հազ. դրամ արժեքով, որից սեփական միջոցներով՝ 85618.2 հազ. դրամ արժեքով, այլ միջոցներով 121532.8 հազ. դրամ արժեքով, համայնքապետարանների կողմից 3809.7 հազ. դրամի աշխատանքներ:

Մարզի առողջապահական ընկերությունները սերտ համագործակցել են մի շարք միջազգային ընկերությունների հետ՝ «Վորլդ Վիժն Հայաստան», «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» /«COAF»/, UNISEF:

«Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» /«COAF»/-ի կողմից մի շարք ընկերություններում կատարվել են.

«Դսեղի ԱԿ» ՊՈԱԿ-ում երկրորդ ատամնաբուժական ժամանակակից համասարքի, մանրէասպան /փակ, ցիրկուլյատոր/ լամպի տեղադրում:

Քաղցկեղի վաղ հայտնաբերման ծրագրի շրջանակներում 212 պացիենտի ուլտրաձայնային հետազոտության կազմակերպում Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Դսեղ, Արևածագ, Աքորի, համայնքներում, այդ թվում 174 կնոջ կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն, 38 տղամարդու շագանակագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն, 96 պացիենտի վահանաձև գեղձի հորմոնալ քննություն:

140 երեխայի անվճար ատամնաբուժական ծառայության մատուցում Դսեղի ատամնաբուժական կաբինետում /303 ատամի բուժում, 80 ատամի հեռացում/:

2020թ. աշխարհում տարածված «Covid-19» կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարի ծրագրի շրջանակներում «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» /«COAF»/-ի կողմից շահառու 27 համայնքների բուժհաստատու-թյուններին տրամադրվել են փաթեթների (քլորի հիմքով ախտահանիչ, 96% սպիրտ, գլիցերին, անհատական պաշտպանիչ միջոցներ, վիրաբուժական դիմակներ, K-95 ռեսպիրատորներ, պաշտպանիչ վահաններ, արտահագուստ), տոնոմետրեր, գլյուկոմետրեր, ստրիպներ և պուլսօքսիմետրեր: 4 բուժամբուլատորիաներին (Վահագնի, Արևածագ, Դսեղ, Օձուն) տրամադրվել են փոքր ուլտրաձայնային սարքեր, Վանաձորի «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին՝ բիոքիմիական անալիզատոր (A1C և խոլեստերին): Դսեղի, Դեբետի, Եղեգնուտի, Քարինջի դպրոցներին տրամադրվել է ընդամենը 1350000 դրամ՝ սանիտարահիգիենիկ և պաշտպանիչ միջոցների ձեռքբերման համար: 27 համայքների 1500 ընտանիքներին տրամադրվել են հումանիտար փաթեթներ՝ սնունդ, հիգիենիկ պարագաներ, գրենական պիտույքներ և խաղալիքներ երեխաների համար, կորոնավիրուսի տարածումը կանխարգելող կրթական նյութեր:

Առողջապահության նախարարության հետ համագործակցության շրջանակներում և երիտասարդ բժիշկների հետ տարվող աշխատանքի արդյունքում մարզի առողջապահական ընկերությունները համալրվել են հետևյալ բժիշկ-մասնագետներով՝

✓ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 1 գծային հերթապահ բժիշկ, 2 գերձայնային ախտորոշման բժիշկ, 1 վնասվածքաբան, 1 վիրաբույժ, 2 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, 1 մանկաբարձ-գինեկոլոգ, 1 մանկաբույժ, 1 սրտաբան, 1 նյարդաբան:

✓ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում՝ 3 թաղամասային թերապևտ, 1 ներզատաբան, 1 մաշկավեներաբան:

✓ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում՝ 1 մաշկավեներաբան:

✓ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 1գծային հերթապահ բժիշկ:

✓ «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 1 ընտանեկան բժիշկ:

✓ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 1 սրտաբան, 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, 1 ակնաբույժ, 1 գաստրոսկոպիստ:

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 1 վիրաբույժ, 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ:

Լիբանանի Հանրապետության մայրաքաղաք Բեյրութում տեղի ունեցած ուժեղ պայթյունի հետևանքով տուժած ազգաբնակչությանը օգնություն տրամադրելու նպատակով՝ ՀՀ Լոռու մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից հավաքագրվել և ուղարկվել է առաջին բժշկական օգնության ապրանքներ և դեղորայք՝ ըստ առաջարկված ցանկի:

2020թ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական ընկերություններում բնակչության անվճար բուժօգնությունը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի առողջապահական ընկերություններում հիվանդանոցային բուժօգնություն է ստացել 19630 հիվանդ, որից պետական պատվերի շրջանակներում՝ անվճար՝ 16065 հիվանդ, համավճարով՝ 592 հիվանդ, վճարովի՝ 2973 հիվանդ: Մարզում գործող 5 ուղեգրող հանձնաժողովների կողմից տրամադրվել են շուրջ 210 ուղեգրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծված մարզային ակնաբուժական կենտրոնում կատարվել են 523 վիրահատություններ, որից անվճար սոցիալապես խոցելի խմբերին պատկանող 312 հիվանդների շրջանում՝ պետպատվերի և 6 հիվանդ՝ ՀԱՆ ԲՀ-ի բարեգործական ծրագրերի շրջանակներում, վճարովի սկզբունքով՝ 205 վիրահատություն:

Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն /ՀՀ կառավարության 7 հուլիսի 2011թ. թիվ 992-Ն որոշում/: Կազմակերպվել և անց են կացվել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, «Մեծավանի առողջության կենտրոն», «Դսեղի առողջության կենտրոն», «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Մեծ Պարնիի առողջության

կենտրոն», «Գուգարքի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն»,«Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ների, «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենների թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթներ և նշանակվել տնօրեններ, իսկ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մրցույթի արդյուքում հաղթող չճանաչվելու պատճառով հայտարարվել է նոր մրցույթ: «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված նոր մրցույթը պետք է կայանար 2020 թվականի փետրվարի 20-ին: 17.01.2020թ. 2662/20 գրությամբ ՀՀ Լոռու մարզպետարան է ուղարկվել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, որով արգելվել է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելը մինչև դատարանի կողմից վճռի կայացումը:

Կազմակերպվել և վերահսկվել է մարզի հարյուր տոկոս՝ պետության սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական ոլորտի բաժնետիրական ընկերությունների բժշկական անձնակազմի ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման օրինակելի կարգը և պայմանները /ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշում/: 2020թ. մարզի առողջապահական ընկերություններում անց են կացվել միջին բուժաշխատողների մրցույթներ և նշանակվել պաշտոնում 15 բուժքույրեր:

Երկրում կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված և ՀՀ Լոռու մարզում գործող 3 հիվանդանոցներ վերապրոֆիլավորվել են որպես COVID-19 կորոնավիրուսային վարակի բուժման հիվանդանոցների՝ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն 40 մահճակալ հզորությամբ և «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 100 մահճակալ հզորությամբ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 40 մահճակալ հզորությամբ բաժանմունքը: Նախ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն (ԱՆ 10.04.20թ. թիվ 1235-Լ հրաման), «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (ԱՆ 09.06.2020թ. թիվ 1822-Լ հրաման) վերապրոֆիլավորվել են որպես կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների բուժման հաստատության: Այնուհետև, հիվանդացության աճով պայմանավորված, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 40 մահճակալանոց բաժանմունքը (ԱՆ 26.10.2020թ. թիվ 3761-Լ հրաման): Այնուհետև երկրորդ ալիքի ժամանակ կրկին «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն (ԱՆ 14.10.20թ. թիվ 3635-Լ հրաման) և «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (ԱՆ 14.10.20թ. թիվ 3633-Լ հրաման) վերապրոֆիլավորվել են որպես կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների բուժման հաստատության:

Հիվանդանոցները սպասարկում են Հայաստանի Հանրապետության կորոնավիրուսով վարակված ողջ բնակչությանը: Վերոնշյալ հիվանդանոցները համալրվել են անհրաժեշտ կադրերով, բժշկական սարքավորումներով և գույքով: Անց է կացվել կենտրոնացված թթվածնային համակարգ, ապահովվել են անհրաժեշտ դեղորայքով, բժշկական նշանակության պարագաներով, որոնք պարբերաբար տրամադրվել են ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

ՀՀ-ում կորոնավիրուսային /Covid-19/ վարակի սկզբից առ 01.01.2021թ. Լոռու մարզում արձանագրվել են՝

- ընդհանուր հիվանդացության դեպքեր – 7836
- մահ – 119
- առողջացած – 6998
- բուժվող – 719

Լոռու մարզի COVID-19 կորոնավիրուսային վարակի բուժման հիվանդանոցներում ստացիոնար բուժում ստացած հիվանդների թիվը.

Բուժհաստատության նավանումը	Covid հիվանդների թիվ՝ 2020թ.
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	208
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ	670

«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1445
Ընդամենը	2323

Կորոնավիրուսային /Covid-19/ վարակով պայմանավորված՝ 2020թ. օգոստոս ամսին կազմակերպվել են Լոռու մարզի դպրոցների աշխատակիցների թեստավորման աշխատանքներ դպրոցներում՝ թեստավորելով մարզի դպրոցների շուրջ 3000 աշխատակիցների:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրից բխող նախատեսված աշխատանքներից կորոնավիրուսային վարակով Covid-19 պայմանավորված՝ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տեղափոխումը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ հետաձգվել է:

Կապված համայնքների խոշորացման հետ 2021թ. ևս նախատեսվում են օպտիմալացման աշխատանքներ:

Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները.

2016-2020թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է նորագոյացություններով, պարբերական հիվանդություններով, շաքարային դիաբետով հիվանդացության աճման, իսկ հոգեկան հիվանդությունների և տուբերկուլոզի՝ նվազման միտում:

Հիվանդություններ	**2016թ**	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**	**2020թ.**
Շաքարային դիաբետ	4906	5170	5965	5700	6960
Նորագոյացություններ	3531	3656	3614	3670	3759
Հոգեկան հիվանդություններ	5243, այդ թվում 604-ը նարկոլոգ. կաբ./	4841, այդ թվում 485-ը նարկոլոգ. կաբ./	4361, այդ թվում 487-ը նարկոլոգ. կաբ./	4917, այդ թվում 532-ը նարկոլոգ. կաբ./	4889, այդ թվում 543-ը նարկոլոգ. կաբ./
Պարբերական հիվանդություններ	478	515	526	507	548
Տուբերկուլոզ	372	334	312	281	265

Տուբերկուլոզի ազգային կենտրոնի բազմադեղորայքակայուն բաժանմունքում ինտենսիվ փուլի բուժում կազմակերպվել է դեղորայքակայուն 14 հիվանդների բուժում, որոնց բուժօգնությունը այնուհետև ամբուլատոր պայմաններում իրականացվել է ՀՀ Լոռու մարզի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում:

Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 84 հիվանդներ:

Առողջապահության նախարարի 12.03.2019թ. թիվ 611–Ա հրամանով Հայաստանում ներդրված սանիտարական ավիացիայի ծառայության միջոցով ՀՀ Լոռու մարզից Երևանի առաջատար բժշկական կենտրոններում մասնագիտացված բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տեղափոխվել է 10 պացիենտ

ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվել մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված 30 մլն 032 հազ. 220 դրամ արժեքով և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված 143 մլն 880 հազ. 456 դրամ արժեքով դեղորայք: Մեթադոնային ծրագրով հատկացվել է 2 մլն 018 հազ. 553 դրամ արժեքով դեղորայք:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2020թ «Արարատ» մոր և մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 9 հաշմանդամ երեխաներ և 9 խնամող:

2020թ. «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում մարզում կատարվել է գլյուկոզայի հետազոտություն՝ 9468 մարդ /51 % թիրախի նկատմամբ/, պապ-քսուք՝ 2254 մարդ /32% թիրախի նկատմամբ/:

ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» պետական հիմնարկի կողմից մեկնարկել է «Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամ»-ի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Դրամաշնորհային ծրագիր): Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ կանանց 50-69 տարիքային խմբում: Կրծքագեղձի անվճար մամոգրաֆիկ հետազոտությունները կմեկնարկվի Վանաձոր քաղաքում և Գուգարքի տարածաշրջանի 26 համայնքներում: 2020թ. ընթացքում կազմակերպվել են մարզի բժիշկների վերապատրաստումներ, մամոգրաֆիկ շարժական կլինիկան տեղակայվել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում, որտեղ շարժական մամոգրաֆը դեռ 6 ամիս տեղակայված կլինի: Վանաձոր քաղաքի պոլիկլինիկաներում, Գուգարքի, Մարգահովիտի, Վահագնի, Լեռնապատի և Շահումյանի բժշկական ամբուլատորիաներում կցագրված 50-69 տարեկան կանայք հնարավորություն կունենան անցնել անվճար մամոգրաֆիկ հետազոտություն: Այնուհետև շարժական մամոգրաֆը կուղևորվի Լոռու մարզի մյուս քաղաքներ:

Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 1 մարզային բժշկական հանձնաժողով և 1 ստացիոնար /վիրաբուժական և թերապևտիկ պրոֆիլ/ բժշկական հանձնաժողովը:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 27-ի No 983–Ա և ՀՀ պաշտպանության նախարարի 2017 թվականի ապրիլի 25-ի No 2-Ա «Հայաստանի Հանրապետությունում զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման մասին» համատեղ հրամանի Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացը իրականացվել է համապատասխան ԱԱՊ հաստատության կողմից՝ ըստ Պատվաստումների ազգային օրացույցի:

2020թ. ընթացքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ մարզի բուժքույրերի համար: Վերապատրաստվել են թվով 127 բուժքույրեր, 29 դեղագործներ և 4 դեղագետներ:

2020թ. օգոստոսի 25-ին ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն «Ծխախոտի դեմ պայքարի համապարփակ քաղաքականության և ծխախոտային արտադրանքի հարկման ընդլայնման միջոցով ծխախոտի տարածվածության նվազեցում Հայաստանում» ծրագրի շրջանակում կազմակերպել է 2020 թվականի փետրվարի 13-ին ընդունված ՀՀ «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի, ինչպես նաև ծխախոտի ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտությունների ներկայացումը:

Նոր կորոնավիրուսային վարակը սպառնալիք է աշխարհում յուրաքանչյուր երկրի համար: ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտը (այսուհետ՝ ԱԱԻ) մարտի 18-ից իրականացրել է մի շարք դասընթացներ, որոնք միտված են եղել աջակցելու

հանրապետությունում կորոնավիրուսային համավարակի դեմ իրականացվող պայքարին: COVID-ի 19-ի վերաբերյալ բժիշկների, բուժքույրերի և մայրապետերի, վարչական անձնակազմի հմտություններն ու գիտելիքները բարելավելու նպատակով ԱԱԻ կողմից կազմակերպվել են բազմաբնույթ դասընթացներ:

2020թ. մարտ ամսից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Լոռու մարզից տարբեր դասընթացներին մասնակցել է ավելի քան 1000 մասնակից:

2020թ. ընթացքում իրականացվել են իմունականխարգելման գործընթացի վերաբերյալ դասընթացներ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բժիշկների և բուժքույրերի համար:

2020թ. ընթացքում առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիրը» իրականացնելու նպատակով: Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը ԱԱՊ օղակի բժիշկների համար կազմակերպել է կորոնավիրուսային հիվանդության դեմ հեռավար դասընթացներ:

2020 թվականին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացվել են «Վաղ տարիքի երեխաների սնուցումը, պատրոնաժ խնամքը և պատվաստումները COVID-19 համավարակի համատեքստում» թեմայով 3-օրյա դասընթացներ (պայմանավորված ռազմական դրությամբ) նեոնատոլոգների, ԱԱՊ հաստատությունների մանկաբույժների, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի համար:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ԱԱՊ օղակի բժիշկների համար կազմակերպվել է դասընթաց պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ցավային համախտանիշի կառավարման նպատակով թմրամիջոցների և հոգեմետ դեղերի նշանակման վերաբերյալ:

«Հայ օգնության ֆոնիդի» կողմից կազմակերպվել է առցանց դասընթաց առողջապահության վարչության պետերի համար կորոնավիրուսային հիվանդության պայմաններում առողջապահական համակարգում աշխատանքների արդյունավետ կազմակերպման մասին:

2020թ. մարզում արձանագրվել են մանկական մահացության հետևյալ ցուցանիշները. պերինատալ մահացության 15 դեպք, այդ թվում՝ 12 մեռելածին դեպք, 0-7 օրեկան երեխայի 3 դեպք: 0-1 տարեկան երեխայի 3 դեպք, այդ թվում՝ 1 հիվանդանոցային և 2 տնային դեպք /Այս թվում ներառված չեն 0-7 օրեկան երեխայի մահվան դեպքերը/ և 1-5 տարեկան երեխայի 2 դեպք, այդ թվում՝ 1 հիվանդանոցային և 1 տնային մահ/ :

Լոռու մարզ	մանկական մահացություն /պրոմիլե/	պերինատալ մահացություն /պրոմիլե/
2015թ	8.2	13.3
2016թ	5.8	9.2
2017թ	5.6	9.7
2018թ	5.9	5.9
2019թ.	2.0	3.7
2020թ.	7.4	6.2

2016-2020թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ	Ծնելիություն	Մահացություն	Բնական

				աճ
2016	բացարձակ թիվ	2856	2760	0.4 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.7	12.3	
2017	բացարձակ թիվ	2689	2630	0.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.2	11.9	
2018	բացարձակ թիվ	2361	2473	-0.5 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.2	11.9	
2019	բացարձակ թիվ	2439	2447	-0.1 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.4	11.5	
2020	բացարձակ թիվ	2435	2926	-2.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.4	13.7	

Ուսումնասիրվել են Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների հաստիքացուցակների և մատուցվող վճարովի ծառայությունների գները, կատարվել են համապատասխան փոփոխություններ և հաստատվել:

Կանոնակարգվել է Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների տարեկան վիճակագրական հաշվետվությունների նախնական ստուգման և 2020թ. մարզի պետական պատվեր հավակնող մարզային և համայնքային ենթակայության, ինչպես նաև մասնավոր առողջապահական ընկերությունների բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման հայտերի նախնական վերլուծություն, գործող կարգին համապատասխանություն, այնուհետև ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնելու գործընթացը:

Մարզի գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են խորհրդակցություններ առողջապահական ընկերություններում տնօրենների հետ համատեղ աշխատանքի ընթացքում առաջացած հարցերի լուծման ուղղությամբ:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում մեկ անձ իրականացնում է այլընտրանքային ծառայություն:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարգահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Գյուլագարակ, Փամբակ, Շահումյան, Վարդաբլուր, Դարբաս, Կուրթան, Արչուտ, Արևաշող համայնքների ազգաբնակչության և Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի խնամքի կենտրոնի շահառուների ստոմատոլոգիական սպասարկումը՝ ընդհանուր հաշվով 3098 մարդ, որից 2020թ. ընթացքում սպասարկելով 355 մարդ: Սպասարկվել են նաև պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տարհանված ազգակնակչությունը:

Հունական Բժշկական «Հիպոկրատ» հիմնադրամի և «Ամքոր» կազմակերպության հետ միասին Թումանյանի տարածաշրջանի գյուղերում կատարվել է «Համայնքային վերար-տադրողական առողջության բարելավում իրազեկման և բուժսպասարկման միջոցով» ծրագիր: 2020 թվականին Ախթալա, Ճոճկան, Թումանյան, Քարինջ, Վահագնի համայնքներում կատարվել են կանանց սկրինինգ: Հետազոտվել են 1389 կին, որից կրծքագեղձի և վահանաձև գեղձի սոնոգրաֆիա՝ 1273,

հորմոնալ հետազոտություններ՝ 403, մամոգրաֆիա՝ 108 կանանց շրջանում: Օձուն համայնքում կատարվել է 100 բնակչի ռենտգեն հետազոտություն՝ գրավոր եզրակացության և ռենտգեն պատկերի տրամադրումով:

Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝

Վանաձորում «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը սպասարկում է մանկական (մինչև 12 տարեկան երեխաներ) ազգաբնակչությանը: Ակնաբուժական ծառայություն՝ 2020թ. առաջին անգամ հաշվառման է վերցվել 311 երեխա, հաշվառումից հանվել են՝ 234 երեխա, անվճար տրվել են ակնոցներ՝ 110: Ատամնաբուժական ծառայություն մատուցվում է 16321 երեխայի, որից 2020թ. առաջին անգամ ընդգրկվել են 952 երեխա, հաշվառումից հանվել են՝ 1846:

Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոններում ստոմատոլոգիական բուժօգնություն են ստացել 1763 երեխա, մանկաբուժական բուժօգնություն՝ 900 երեխա: Ըստ անհրաժեշտության հատկացվել է անվճար դեղորայք:

Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 2 և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատում են 2 սիրիահայ բժիշկներ/:

ՀՀ Լոռու մարզ հրավիրված երիտասարդ բժիշկներին ևս ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն:

Թարմացվել են առողջապահական ընկերությունների ինտերնետային կայք-էջերը, որտեղ արտացոլված են ընկերությունների ողջ գործունեությունն ու աշխատանքի ծավալը:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է /0322/ 2-33-99 հեռախոսահամարով թեժ գիծ՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով: Թեժ գծի աշխատանքի արդյունքում նաև վեր են հանվում համակարգում առկա թերություններ, բացթողումներ: Արձանագրվել է ավելի քան 300 զանգ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցություն

ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարության մեջ համալիր կերպով ներկայացվել է սոցիալական ապահովության բնագավառը, որտեղ կարևորվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը, իրազեկության բարձրացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծումը:

Մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները (ՍԱՏՄ-ներ) կարողացան 2020թ. ընթացքում Համավարակի պայմաններում էլ զգալի աշխատանք կատարել Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման գործում՝ անապահովության գնահատման համակարգի միջոցով: ՍԱՏՄ-ների կողմից յուրաքանչյուր ամիս թարմացվել են տեղեկատվական շտեմարանները, որը կարևոր հանգամանք է անապահով խմբերին ուղղված միջոցների հասցեականությունը առավել հստակեցման գործում: Մարզպետարանի կողմից իրականացվել են ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման հաշվետվություն-ների հավաքումն ու ամփոփումը, ինչպես նաև այդ տվյալների ամենամսյա վերլուծությունը:



2020թ. ընթացքում ՍԱՏՄ-ները փաստագրել են 15.363 ընտանիք, որից՝ նպաստառու 12.437 (կանխատեսվել էր 16.638-ը, որից՝ նպաստառու 13.469), նրանցից նպաստի իրավունքը պահպանել են 10.871-ը, իրավունքը կորցրել՝ 2.179 ընտանիք (որոնցից՝ 274-ը փաստագրման, 1.480-ը չփաստագրման, իսկ 425-ը՝ ՍԱՏՄ-ների ուսումնասիրության արդյունքում): Նոր նպաստառու են դարձել 1.957 ընտանիքներ: 01.01.2021թ. դրությամբ նպաստառու են ամսական միջինացված 13.047 ընտանիք:

Մարզի ՍԱՏՄ-ները իրենց աշխատանքներն իրականացրել են պետության կողմից տրամադրված միջոցների սահմաններում: 2020թ. ընթացքում մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները տնտեսել են ավելի քան 861.6 մլն դրամ:

Մարզում 2020թ. ընթացքում ՍԱՏՄ-ների կողմից վճարվել է շուրջ 4 մլրդ 435 մլն դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ հրատապ օգնությունները/, որից՝ շուրջ 4.23 մլրդ դրամ ընտանեկան նպաստ /ներառյալ՝ սոցիալականը/ և հրատապ օգնություն՝ ավելի քան 205.32 մլն դրամ:

Նպաստառու ընտանիքի 527 երեխայի համար վճարվել է կրկնակի չափով ծննդյան նպաստ՝ 26.7 մլն դրամ/, առաջին դասարան հաճախող 1.092 երեխայի համար վճարվել է միանվագ օգնություն՝ 27.225 մլն դրամ, 5 ընտանիքներում մահացած անդամի համար՝ 0.25 մլն դրամ, եռամսյակային հրատապ օգնություն է վճարվել շուրջ 151.15 մլն դրամ /միջին հաշվով յուրաքանչյուր ամիս 695 ընտանիքների/:

Ամբողջական վճարումների պատկերը, ըստ տարածաշրջանների.

Պետական նպաստների մասով՝ /մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար
Ընտանեկան նպաստ	Ցուցակային	3546	1372.49	1760	7013.63	1313	518.43	759	315.63	1002	393.12
	Վճարված	3496	1348.59	1748	6948.09	1282	497.07	735	303.71	985	388.01
Սոցիալական նպաստ	Ցուցակային	2242	511.21	672	155.51	614	142.45	609	140.2	376	94.64
	Վճարված	2197	496.87	653	148.1	589	134.4	600	134.32	362	83.76
Ընդամենը՝	Ցուցակային	5788	1883.7	2432	856.87	2078	660.88	1368	455.83	1383	487.76

	Վճարված	5693	1845.47	2401	842.91	1870	631.46	1335	438.03	1335	471.77

Հրատապ օգնությունների մասով՝ /մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն /50.000դր./	Ցուցակային	241	10.7	156	7.8	62	3.1	32	1.6	65	3.6
	Վճարված	214	10.7	156	7.8	61	3.05	31	1.55	65	3.6
Երեխայի առաջին դասարան հաճախման միանվագ օգնություն /25.000դր./	Ցուցակային	451	11.275	270	6.75	143	3.5	93	2.325	138	3.45
	Վճարված	451	11.275	270	6.75	142	3.475	91	2.275	138	3.45
Ընտանիքի անդամի մահվան դեպքում /50.000դր./	Ցուցակային	5	0.25	0	0	1	0.05	0	0	0	0
	Վճարված	5	0.25	0	0	0	0	0	0	0	0
Եռամսյակային հրատապ օգնություն /18.000 դր./ միջին.	Ցուցակային	307	67.19	136	29.54	115	25.24	75	16.21	75	16.38
	Վճարված	301	65.39	133	29.05	113	24.59	74	15.93	74	16.18
Ընդամենը վճարված			87.62		43.6		31.11		19.76		23.23

2020թ. մարզում սահմանված ժամկետներում վճարվել են պետական նպաստները և հրատապ դրամական օգնությունները:

2020թ.՝ 2019թ. համեմատությամբ նվազել են նպաստառու ընտանիքների միջինացված թիվը /միջինը 13.806-ից՝ 13.047. նվազումը՝ 759/ և կատարված վճարումները /4.552 մլրդ դրամից՝ 4.435 մլրդ դրամ. նվազումը՝ 117 մլն դրամ/:

ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ստացված տվյալների /հարակից բազաներ/ համադրումների և նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ 2020թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ է գանձել ավելի քան 7.11 մլն դրամ:

/մլն դրամ/

	Հետգանձման ենթակա	Փաստացի ետ է գանձվել 2020թ. ընթացքում /ՍԱՏՄ, ԴԱՀԿ, դատարան/	Սոցիալական աջակցության խորհուրդների և դատական ատյանի կողմից մարված	Մնացորդը՝ 01.01.2021թ. դրությամբ

Վանաձորի ՍԱՏԲ	17730.79	4136.41	286.2	13308.18
Սպիտակի ՍԱՏԳ	2888.85	416.9	174.0	2252.95
Ստեփանավանի ՍԱՏԳ	1019.45	401.95	54.0	563.5
Թումանյանի ՍԱՏԳ	2722.29	1629.9	292.0	800.39
Տաշիրի ՍԱՏԳ	810.53	480.73	0	329.8
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	25171.91	7110.89	806.2	17254.82

Շարունակվել է վերահսկվել մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից քաղաքացիներին տարբեր կազմակերպություններ /այդ թվում՝ հանրապետության բժշկական հաստատություններ, կրթական, կոմունալ և այլն/ ներկայացվող տեղեկանքների տրամադրման գործընթացը:

2020թ. ընթացքում մարզի ՍԱՏԳ-ների կողմից տրամադրվել են 8.831 տեղեկանքներ.

Տեղեկանքների բնույթը և տրամադրող մարմինը	Վանաձո-րի ՍԱՏԲ	Սպիտակի ՍԱՏԳ	Ստեփա-նավանի ՍԱՏԳ	Թումա նյանի ՍԱՏԳ	Տաշիրի ՍԱՏԳ	Լոռու մարզ
Ա /անձնագրային ծառայություն	1.103	95	82	25	44	1.349
Բ /բժշկական ընկերություններ	3.449	664	797	429	429	5.768
Գ /գիտա - կրթական հաստատու-թյուններ	916	161	62	29	22	1.190
Դ /այլ ծառայություններ/	243	75	110	39	57	524
Ամբողջը՝	5.711	995	1051	522	552	8.831

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից շարունակվել են ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործ-ընթացը: 2020թ. ընթացքում փոխհատուցման ենթակա է 734 անձի ավելի քան 152.487 մլն դրամի չափով /2019թ.՝ փոխհատուցվել էր 616 անձ՝ ավելի քան 132.07 մլն դրամի չափով, իսկ 2018թ. 391 անձ՝ ավելի քան 83.15 մլն դրամ/:

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի մասնագետները տարվա ընթացքում իրավական և մասնագիտական /նախկինում՝ վարչական/ հսկողություն են իրականացրել Մարգահովիտ, Մեծավան, Դսեղ, Քարաձոր, Շիրակամուտ համայնքներում՝ ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից առաջարկված հարցաշարի հիման վրա:

2020թ. իր բնականոն աշխատանքներ են շարունակել ՀՀ Լոռու մարզում տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրերի համաձայն ձևավորված տարածաշրջանային համակարգող խորհուրդները /ՀԽ/:

Շարունակվում են պետական քաղաքականության ուղղություններից մեկի՝ սոցիալական ծառայությունների մեկտեղման՝ համալիր կենտրոնների ստեղծման աշխատանքները: Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիրը Հայաստանի սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման բարեփոխումների առանցքային ծրագիրն է: ՀՀ Լոռու մարզում գործում են Վանաձորի և Տաշիրի համալիր կենտրոնները, իսկ 2021թ. նախատեսված է շահագործել Ստեփանավանի համալիր կենտրոնը, որը կլինի մարզում երրորդը: Ընթացքի մեջ են Թումանյանի նույնատիպ կենտրոնի շինարարական աշխատանքները: Սպիտակի տարածաշրջանում այն կկառուցվի առաջիկա տարիներին:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ Լոռու մարզում 01.01.2021թ. դրությամբ կենսաթոշակ են ստանում 50.026 մարդ, հաշմանդամություն ունեն 16.386-ը, որից՝ առաջին խմբի հաշմանդամ են 733, երկրորդ խմբի՝ 6.079, երրորդ խմբի՝ 8.885, մանկուց հաշմանդամություն ունեն 689 երեխա:

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2020թ. բոլոր ամիսների կենսաթոշակները /2020թ. ընթացքում վճարվել է շուրջ 2.0 մլրդ դրամ/:

Աշխատաշուկա և զբաղվածություն

2020թ. Լոռու մարզում շարունակվել է ակտիվ աշխատաշուկայի ստեղծման և զբաղվածության խթանման քաղաքականությունը:

Գործազուրկների թիվը կազմում է առ 01.01.2021թ. դրությամբ՝ 9213 մարդ / նախորդ ժամանակահատվածում՝ 9243 մարդ/, որից՝ 6205-ը կանայք են (Վանաձոր՝ 4243/2826-ը կին, Ալավերդի 821/528, Ստեփանավան՝ 2318/1638, Սպիտակ՝ 1311/859, Տաշիր՝ 520/354):

Աշխատանք փնտրողների թիվը 01.01.2021թ. կազմել է 10107 մարդ, նախորդ ժամանակահատվածում՝ 10.071 մարդ /Վանաձոր՝ 4417, Ալավերդի՝ 1241, Ստեփանավան՝ 2388, Սպիտակ՝ 1399, Տաշիր՝ 662/: Նրանցից աշխատանքի է տեղավորվել 1067 մարդ, որից՝ 793 կին (Վանաձոր՝ 470 /որից՝ 362 կին/, Ալավերդի՝ 107 /որից՝ 76 կին/, Ստեփանավան՝ 256 /որից՝ 192 կին/, Սպիտակ 172 /որից՝ 115 կին/, Տաշիր՝ 62 /որից՝ 48 կին):

Զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 181 մարդ /Վանաձոր՝ 89, Ալավերդի՝ 15, Ստեփանավան՝ 35, Սպիտակ՝ 28, Տաշիր՝ 14/:

2020թ. ընթացքում Զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով իրականացվել են գործատուներին աջակցման թվով 11 ծրագրեր 242.37 մլն դրամի չափով, որում աշխատանքի են տեղավորվել 911 մարդ: Որից միայն՝ ՀՀ Լոռու մարզպետարանի համակարգմամբ վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում իրականացվել է թվով 14 ծրագիր՝ 169 մասնակցով: Աշխատանքներ են իրականացվել Տաշիր /երկու ծրագիր/, Ախթալա, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Մեծավան խոշորացված, Անտառամուտ, Եղեգնուտ, Դարպաս, Ձորագետ, Շենավան, Սարալանջ, Չկալով և Ծաղկաբեր համայնքներում:

2020թ. Համավարակի պատճառով ավանդական դարձած ամենամյա «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառումը չանցկացվեց:

Առանձնանում են Վանաձորի բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ը և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունը, որտեղ յուրաքանչյուրում ներգրավված են մեկուկես տասնյակ հաշմանդամություն ունեցող անձինք: Այսօրինակ զբաղվածության ծրագրեր են իրականացնում Վանաձորում գործող «Էբրիկոտ» ընկերությունը /հուշանվերների և արծաթյա զարդերի արտադրություն/, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն /տպագրություն, կարի արտադրություն/ զբաղված են յուրաքանչյուրում ավելի քան մեկ տասնյակ հաշմանդամություն ունեցող անձինք:

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին

Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը սերտ համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, գործընթացում ներգրավելով մարզի ակտիվ կառույցներին, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնողական պարագաներով ապահովելու ուղղությամբ առանձնանում են «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, «Լիարժեք կյանք», «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ները՝ աջակցություն ստանալով երևանյան «Սատար» հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ից /վերջինս զբաղվում է նաև հաշմանդամային գույքի արտադրությամբ/:

Նվազ արդյունավետությամբ է ընթացել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ /մասնավորապես՝ թեքահարթակների կառուցում/ աշխատանք-ները: Թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, սակայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն, շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեռևս հիմնախնդիր է մնում: Պետք է փաստել, որ 2020թ. նպաստավոր չէր նմանօրինակ աշխատանքների կատարման համար:

Մարզի համայնքապետարաններում և խոշորացված համայնքների վարչական ղեկավարների նստավայրերում /թվով 113/ առկա են թեքահարթակներ 35-ում, 36-ը մատչելի է շինարարական

տեսակետից անվասայլակ օգտագործող մարդկանց համար: 2020թ. Համավարակի բացասական ազդեցությունը զգալի էր այս աշխատանքների կատարման գործում:

✓ 2020 թվականի ընթացքում Լոռու մարզի թվով 9 պետական և 26 (սուբվենցիոն ծրագրեր) համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտներ հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժի ապահովման համար (կան օբյեկտներ, որտեղ դեռևս շարունակվում են շինարարական աշխատանքները):

✓ Մարզպետարանի պատվիրատվությամբ նախագծվող և կառուցվող բոլոր շինություններում նույնպես հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պահպանմանը, լայն քննարկման թեմա դարձավ Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի դիմացի թեքահարթակի քանման հարցը:

Մարզի 163 կրթական հաստատություններից 108-ում առկա է թեքահարթակ, շինարարական տեսակետից մատչելի են 33-ը, իսկ 22 դպրոցում դեռևս թեքահարթակ չկա: Այդ պատճառաբանվում է մատչելի մուտք ունենալով կամ շահառուների և անհրաժեշտության բացակայությամբ: ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական հաստատություններից թվով 89 դպրոց իրականացնում է ներառական կրթություն, որից թվով 12 դպրոց ունի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույցներ, թվով 76 դպրոց ունի թեքահարթակ, 10-ը մատչելի է: Վանաձորի թիվ 7 և թիվ 18 դպրոցներն ունեն վերելակ: Դրանցից, օրինակ՝ 2020թ. շահագործման է հանձնվել Վանաձորի թիվ 7 դպրոցի դպրոցական շենքային համալիրը (432 աշ.տեղ), որը հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժի ապահովման համար: Վանաձորի թիվ 18 դպրոցը կառուցվել էր նախորդած տարիներին:

Լոռու մարզում 2020 թվականի ընթացքում գործել է 68 մանկապարտեզ, որից 43-ն ունի թեքահարթակ կամ մատչելի է, 25-ը՝ չունի:

ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններում 2020թ. ընթացքում թեքահարթակներ չեն կառուցվել: Մարզում գործում են 31 առողջապահական ընկերություններ, որոնցից 28-ում առկա են թեքահարթակներ (մնացած 3-ից 2-ը մատչելի են, մատչելի չէ «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի մուտքը): 95 բուժակ-մանկաբարձական կետերից 20-ում կառուցված են թեքահարթակներ, իսկ մնացածը իրենց դիրքով ունեն մատչելի մուտքեր, քանի որ տեղակայված են հիմնականում միահարկ շինություններում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը 2019թ. ընթացքում հրավիրել էր աննախադեպ՝ թվով 9 նիստ, իսկ 2020թ. կայացել է միայն մեկ նիստ: Այս աշխատանքային մեծապես խանգարել են Համավարակը և պատերազմական ժամանակաշրջանը:

Մարզպետարանը սերտ համագործակցում է մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների /նրանց մասնաճյուղերի/ հետ, նրանցից մեծ մասը ընդգրկված են մարզպետարանում գործող տարբեր հանձնաժողովներում կամ տարածաշրջանային համակարգող խորհուրդներում:

Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկույթը ներկայացված է ստորև:

ա/ Տեղեկատվություն մարզում գործող ցերեկային կենտրոնների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1.	«Առաքելությունն Հայաստան»	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	118 (որից՝ 31 հաշմանդամ)	ՀՀ պետբյուջե, ԱՄՔՈՐ և այլ դոնոր կազմակերպություններ
2.	ԲՀԿ /ռեսուրս կենտրոններ/	Ալավերդի,Սանահին Սարահարթ թաղամաս	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	105 (որից՝ 18 հաշմանդամ)	

		1/11ա			
3.		Սպիտակ, Չարենցի 10	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	140 (որից՝ 30 հաշ-մանդամ)	
4.		Տաշիր, Խանջյան 3ա	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն		
5.	«Լիարժեք կյանք» ՀԿ	Ստեփանավան, Նժդեհի 17/23ա	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	40՝ մշտա-կան հաճախ-մամբ	պետբյուջե
6.		Տաշիր, Գագարինի 7	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	20՝ մշտա-կան հաճախ-մամբ	պետբյուջե
7.	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Տաշիր	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	60	դոնոր կազ-մակերպութ յուններ

բ/ Տեղեկատվություն մարզում գործող տնային պայմաններում միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման վերաբերյալ.

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառու-ների թիվը /տարեկան/	Ֆինանսավո-րման աղբյուրը
1.	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ /ռեսուրս կենտրոն/	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	70 (որից՝ 32 հաշ-մանդամ)	ՀՀ պետ-բյուջե, ԱՄՔՈՐ և այլ դոնոր կազմա-կերպություն-ներ
2.		Ալավերդի, Սանահին-Սարահարթ թաղամաս 19ա	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	25 (որից՝ 7 հաշ-մանդամ)	
3.	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	80	դոնոր կազ-մակերպությ ան միջոց-ներով
4.	Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային մասնաճյուղ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք /ծրագիրը շարունակական է, շահառուների թվի մեծացման միտումով/	57	Շվեյցարական և Հայկա-կան կարմիր խաչի աջակ-ցությամբ

գ/ Տեղեկատվություն մարզում գործող հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունների վերաբերյալ.

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառունե-րի թիվը /տարեկան/	Ֆինանսա-վորման աղբյուրը
1.	Վանաձորի տարեցների տուն	Վանաձոր, Մայմեխի խճ.	Միայնակ, սոցիալապես անապահով տարեցների	50-55 /միջինը/	ՀՕՖ ֆի-նանսա-

		8	խնամք		վորում և պետական աջակցութ-յուն
2.	Կյանքի հաց ՀԿ-ի «Հույսի տուն» հանգստավայր	Վանաձոր, Աբեղյան փող.	անօթևան, անժառանգ /անխնամ/ և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների /ներառյալ՝ հաշ-մանդամություն ունեցող անձանց/ խնամքի ծառայություն	30-50 /միջինը/	մասնավոր կառույց է
3.	Սպիտակի հոգե-կան առողջության համայնքային խնամքի տուն	Սպիտակ, Իտալական թաղ.	Միայնակ, սոցիալապես անապահով հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների խնամք	15 /միջինը/	բարեգործա կան կառույց է

2020թ. ընթացքում ևս առողջարանային ուղեգրերով մարզի շահառուները Ջերմուկի «Արարատ» մոր ու մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 9 երեխա և 9 խնամող:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև տարեց անապահով քաղաքա-ցիների հիմնահարցերը:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

01.01.2021թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում են ավելի քան 7500 փախստական, որից քաղաքացիություն են ստացել շուրջ 6000 անձ: Աշխատունակ են՝ 3.465 մարդ (46.2%), նախկին քաղաքաբնակներ՝ 6.750 մարդ (90%):

1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետբյուջեի միջոցներով:

2006-2020թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման պետական ծրագիր չի իրականացվել:

Դեռևս բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը մարզում կազմում է 139 /որից՝ 24-ը առաջնահերթության, իսկ 115 ընտանիք ընդհանուր հերթացուցակում/: Մեծաթիվ ընտանիքներ /47 ընտանիք/ գտնվում են արտերկրում /մեծ մասը՝ ՌԴ-ում/:

Զոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

Ներկայումս ՀՀ Լոռու մարզում բնակարանի կարիքավոր են 56 (4 զոհվածի և 52 զինհաշման-դամություն ունեցողի) ընտանիքներ /անօթևան են՝ 27-ը/:

Նախորդած տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 248 ընտանիքներ:

2020թ. զոհված մեկ /Գրիգորյան Արայիկ/ և երկու զինհաշմանդամություն ունեցող անձանց /Սարգսյան Կոլիկ, Գալստյան Մարատ/ բնակարանային բարելավման գործերը տրամադրվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը, իսկ 2020թ. ընթացքում դրական եզրակացություն է տրվել երեք զոհված զինծառայողի ընտանիքների /Գևորգ Կոծինյան, Սամվել Գասպարյան՝ 4.117.000-ական, իսկ Սևակ Ասլիկյան՝ 7.679.000 դրամի չափով /ամբողջը՝ 15.913.000 դրամ/:

29.06.2020թ. Վանաձորում նշվել է անհայտ կորած զինծառայողների հիշատակի օրը: Մարզում հաշվառված թվով 16 անհայտ կորած զինծառայողների ընտանիքներից 12 ընտանիքներին տրամադրվել է 20.000-ական դրամ օգնություն /240.000 դրամ/:

Ցավոք, 2020թ. աշնանը մեր երկրին պատուհասած պատերազմը փոխեց նաև զինծառայողների ընտանիքների սոցիալական պատկերը: Հետագա տարիներին ենթադրվում է, որ բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիքների թիվը կաճի:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

Հաշվետու ժամանակահատվածում ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Շուրջօրյա խնամքի հաստատություն/մանկատուն/ են տեղավորվել թվով 8 երեխա, որից 5-ը մասնագիտացված մանկատուն, մանկատնից դուրս են գրվել 7 երեխա, որից 1-ը՝ մասնագիտացված մանկատնից

Որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա կամ անձ են հաշվառվել 22 անձ

Որպես որդեգրողի թեկնածու հաշվառվել են 14 քաղաքացի

Որդեգրման ենթակա երեխա հաշվետու ժամանակահատվածում չի հաշվառվել,

Որդեգրվել է 1 երեխա

Ոստիկանության կողմից հաշվառվել է 37 անչափահաս, որից 35-ը՝ տղա,2 աղջիկ: Հանցանք -24, Զանցանք-11, պարտադիր ուսուցումիցդուրս մնացած-1, անօթևան, ընտանիքը լքած-1

Վկայագրվել է 104 երեխա՝ որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

Բաժինը զբաղվել է ամուսնալուծված ընտանիքների խնդիրներով, այդ ընտանիքներում երեխայի բնակության վայրի ու տեսակցության սահմանված կարգի պահպանմամբ, տվել օրենքի պարզաբանում, տարել բացատրական աշխատանքներ, երեխաների խնամքից և դաստիարակությունից խուսափող ծնողներին, բռնության ենթարկված կանանց և երեխաներին տվել համապատասխան ուղղորդում և աջակցություն/թվով 87 ընտանիք/

Բաժնում հաշվառվել է խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող 6 անձ:

Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու համար արվել են համադրումներ, կազմակերպվել են հանդիպումներ և դրանց արդյունքում 6 երեխայի տրվել է եզրակացություն խնամատար ընտանիքներում խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար, խնամատար ծնողների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

2020թ.-ի ընթացքում ընդանուր 24 ընտանիքներում խնամք և դստիարակություն են ստացել 32 երեխա:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Հայ-չինական (Լոռի-Շանսի)

Ստեփանավանի Կաթնաղբյուր բնակավայրում «Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում ՍՊԸ-ի և Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության) միջև 25.04.2019թ. կնքվել է թիվ Պ599 ընդերքօգտագործման պայմանագիրը: Պայմանագրի 3-րդ հավելվածով «Նյու Իդա» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություններ՝ ուղղված ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում առաջնահերթ խնդիրների լուծմանը: 2020թ. փետրվարի 7-ին կնքված պայմանագրով «Նյու Իդա» ՍՊԸ-ն 1.000.000 ՀՀ դրամի չափով աջակցություն է տրամադրել Կաթնաղբյուր բնակավայրի միջնակարգ դպրոցին՝ թվով 12 լուսամուտների փոխարինման նպատակով:

2020թ. մայիսի 28-ին կազմակերպվել է տեսաժողով Լոռու մարզպետի տեղակալի, մարզպետարանի աշխատակիցների, բուժհաստատությունների ղեկավարների և ՉԺՀ Շանսի նահանգի, ինչպես նաև Շանսի նահանգի քույր մարզեր հանդիսացող տարբեր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ կապված Covid-19 համավարակի կանխարգելմանն ուղղված աշխատանքների հետ: Տեսաժողովի ընթացքում ներկայացուցիչները կիսվել են իրենց փորձով և հնչեցրել տարբեր առաջարկներ համավարակի կանխարգելման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Որպես մարդասիրական օգնություն՝ Շանսի նահանգի կողմից Լոռու մարզ է ուղարկվել թվով 30.000 բժշկական դիմակ:

«Երկրաշարժի մշտադիտարկում և մոդելավորում» հայ-չինական համատեղ ֆինանսավորմամբ առաջին միջազգային լաբորատորիայի կառուցման ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողատարածքը գտնվում է պետական սեփականություն հանդիսացող Անտառային ֆոնդի կազմում, Լոռու մարզպետի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե՝ տվյալ հողատարածքը ծրագրի համար հատկացնելու նպատակով: Կոմիտեի կողմից քննարկվել է հողատարածքի տրամադրման հարցը: Այն այժմ գտնվում է լուծման փուլում:

Հայ-իրանական (Լոռի-Մազանդարան)

ՀՀ Լոռու մարզի և ԻԻՀ Մազանդարան նահանգի միջև 2020թ. հունիսի 6-ին կայացել է տեսակապ՝ ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արտաշես Թումանյանի և մարզերի ղեկավարների մակարդակով: Տեսակապի ընթացքում քննարկվել են քույր մարզերի միջև համագործակցությունը խորացնելու հետ կապված մի շարք հարցեր:

Իրանական կողմին է փոխանցվել մարզի գործարարների, արտադրատեսակների ցանկը, կոնտակտային տվյալներ՝ հետաքրքրության դեպքում փոխշահավետ համագործակցություն ստեղծելու նպատակով և նույնը ակնկալվում է քույր մարզից:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից կազմվել է հանձնաժողով, որը կստանձնի Իրանի Մազանդարան նահանգի հետ փոխադարձ պայմանավորվածությունները գործնականում քննարկելու և կյանքի կոչելու գործառույթ: Ցանկը ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան միջոցով փոխանցվել է գործընկերներին: Շուտով ակնկալում ենք ստանալ իրենց կողմից ձևավորված հանձնաժողովի կազմը:

Լոռու մարզպետարանի կողմից կազմվել է նաև մարզի՝ ԻԻՀ-ի հետ գործարար կապերի հաստատմամբ հետաքրքրված խոշոր արտադրողների ցանկ՝ արտադրատեսակներով և գներով, որը ևս փոխանցվել է իրանական կողմին՝ ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան միջոցով:

ՀՀ Լոռու մարզում ներդրումների իրականացման պատրաստակամություն հայտնած 3 գործարարներին և նահանգային իշխանությանը հրավիրել ենք այցելել Լոռու մարզ և տեղում քննարկել ներդրումների հետ կապված գործնական քայլերը:

2020թ. Հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Մազանդարան նահանգի միջև տեղի է ունեցել հանդիպում-տեսակապ: Տեսակապի ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, քննարկվել են քույր մարզերի միջև համագործակցությունը խորացնելու հետ կապված մի շարք հարցեր:

Իրանական ներդրումների արդյունքում 2018թ-ին Վանաձորում գործարկվեց «ՌԱԴ սանե Վարշամիր գրուպ» գազաբալոնների և կարբոնի գործարանը և ս.թ. օգոստոսից մեկնարկեց իր աշխատանքները: 2018թ-ին գործարանում ներդրումների ծավալը կազմել է 3 մլրդ ՀՀ դրամ, 2019թ առաջին կիսամյակում այն կազել է 3.1 մլրդ ՀՀ դրամ:

Գործարանն արդեն իսկ ստացել է իր առաջին խոշոր պատվերը՝ շուրջ 400 տնային օգտագործման գազաբալոներ, որից 250 արդեն պատրաստ են: Այժմ գործարանը գտնվում է սերտիֆիկացման գործընթացում:

Չին-Վան ՍՊԸ-ի հրավերով 2020թ-ի գարնանը Լոռու մարզ է այցելել ԻԻՀ պատվիրակությունը: Այցի ընթացքում ձեռք են բերվել համապատասխան պայմանավորվածություններ տրակտորների արտադրության մեջ ներդրումներ իրականացնելու համար: Իրանցի գործընկերները բանակցային փուլում են պոտենցյալ գնորդների հետ: Նախատեսվում է արտադրանքը արտահանել աֆրիկական և եվրոպական երկրներ:

Հայ-ռումինական (Լոռի-Հարգիտա)

2020թ. հունիսի 19-ին տեսաժողով է կազմակերպվել ՀՀ Լոռու մարզպետարանի և Ռումինիայի Հանրապետության Հարգիտա նահանգի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ մարզերի ղեկավարների գլխավորությամբ: Տեսաժողովի ընթացքում ներկայացվել է երկու կողմերի գործընկերության զարգացման հնարավորությունները, քննարկվել տարբեր ծրագրեր՝ միտված կապերի ամրապնդման և միջմշակութային համագործակցությանը: Առաջարկվել է քույր մարզերի միջև համագործակցության ամրապնդման ու համատեղ ծրագրերի իրականցման համակարգման նպատակով ստեղծել հանձնաժողովներ՝ փոխմարզպետների գլխավորությամբ, և հետագա առաջարկները քննարկել և պայմանավորվածություններ ձեռք բերել հանձնաժողովների միջոցով:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից կազմվել է քույր մարզերի գործընկերային հարաբերությունների զարգացման հանձնաժողով, որի կազմն ուղարկվել է Ռումինիայի Հանրապետության Հարգիտա նահանգի նահանգապետին՝ ակնկալելով ստանալ նաև նրանց կողմից ձևավորված հանձնաժողովի կազմը:

Ուղարկվել է Լոռու մարզի խոշոր արտադրողների ցանկը՝ արտադրատեսակներով և գներով, որոնք հետաքրքրված են ապրանքներ արտահանել: Երկուստեք հետաքրքրություններ առաջանալու դեպքում առաջարկվել է պլանավորել գործարարների առցանց ֆորում:

ՀՀ Լոռու մարզի քաղաքների և այլ երկրների քաղաքների միջև համագործակցություն

Ալավերդի-Գեորգեն (2020թ պայմանագիր բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին)

Հայ-բելառուսական (Լոռի-Վիտեբսկ)

2020 թ. մայիսի 14-15-ին ԲՀ Վիտեբսկ քաղաքում կայանալիք «Նորարարություններ, ներդրումներ, հեռանկարներ» IX միջազգային տնտեսական ֆորումի հանդիսավոր միջոցառումներին «Պատվավոր հյուրի» կարգավիճակով նախատեսվում էր Լոռու մարզի պատվիրակությանը մասնակցություն, որը սակայն ամբողջ աշխարհում տիրող համաճարակի պատճառով չեղարկվել է:

Հայ-ռուսական

2020թ. մարտ ամսին համագործակցության առաջարկով նամակ է ուղարկվել Տվերի մարզ, մեր պատրաստակամությունն ենք հայտնել նաև համագործակցել Սանկտ-Պետերբուրգի մարզի հետ, որոնց առնչությամբ դեռևս արձագանքներ չենք ստացել:

Ռուսաստանի դաշնության Կեմերովո-Կուզբասս նահանգից ստացվել է համագործակցության հրավեր, որին ի պատասխան ներկայացվել է մարզի համագործակցության ոլորտային առաջարկները: Ակնկալում ենք ստանալ առաջարկների վերաբերյալ ռուսական կողմի պատասխանը:

Հայ-Չեխական

Չեխիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան հետ բանավոր պայմանավորվածության համաձայն, Լոռու մարզի և Չեխիայի Սրեդնիչեշսկի, Մորավսկոսիլեզկի կամ Յուժնոմորավսկի երկրամասերից որեւէ մեկի հետ համագործակցության առաջարկ են ներկայացվել, սակայն մինչև հիմա արձագանքներ չկան:

Չեխիայի Զլինի երկրամասի ընկերությունների հետ համագործակցության վերաբերյալ ստացվել է առաջարկ համագործակցել չեխական “VYMTAHY” վերելակների արտադրությամբ զբաղվող ընկերության հետ: Մարզի համայնքները և ընկերությունները տեղեկացվել են համագործակցության առաջարկի մասին: Ակնկալվում է հետագա քննարկումների և առաջարկների դեպքում համագործակցություն սկսել չեխական կողմի հետ:

Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ ՀՀ-ում Չեխիայի, Լեհաստանի և Սլովակիայի դեսպանատները մեծ աջակցություն են ցուցաբերել մարզին համավարկի հետևանքների մեղմման նպատակով. Չեխիայի դեսպանատան կողմից Սպիտակի բժշկական կենտրոնին տրամադրված ֆինանսական միջոցներով ձեռք է բերվել ռենտգեն թվային համալիր, որը Լոռու մարզում կլինի մինչև հունվարի 10-ը: Իսկ Վիշեգրադի միջազգային հիմնադրամի աջակցությամբ Սպիտակ համայնքի թվով 6 դպրոցների տրամադրվել է ընդհանուր առմամբ 135 պլանշետ՝ հեռավար ուսուցման կազմակերպման համար սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին հատկացնելու նպատակով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրատվություն

Լոռու մարզպետարանի գործունեության հանրային իրազեկման գլխավոր տեղեկատվական հարթակները մարզպետարանի lori.mtad.am պաշտոնական կայքն է, որի «Տեղեկատվական հարթակ» բաժնի «Նորություններ» էջի սպասարկումը համարվում է բաժնի կարևորագույն գործառույթներից մեկը և Լոռու մարզպետարանի ֆեյսբուքյան էջը՝ (https://bit.ly/3bbfoEd): Այստեղ զետեղվում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը լուսաբանող ֆոտոնյութերով և տեսանյութերով մշտապես թարմացվող ամենօրյա տեղեկատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել է շուրջ 720 տեղեկատվական նյութ և 190 տեսանյութ: Տեսանյութերը տեղ են գտել նաև մարզպետարանի յութուբյան էջում:

Բոլոր հիշարժան տոների, միջազգային օրերի և տեղական իրադարձությունների վերաբերյալ պատրաստվել են Լոռու մարզպետի ուղերձներ, ելույթները(ընդհանուր թվով՝ շուրջ 50):

«Լոռու մարզպետարան» ֆեյսբուքյան էջի բաժանորդների թիվը ներկա պահին հասնում է 12 978-ին նախորդ տարեվերջի 7500-ի դիմաց:

Սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Բաժինն իրականացնում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ու քաղաքացիներից մարզպետարանին ուղղված հարցումներին ժամանակին և պատշաճ պատասխանելու կանոնակարգման պարտականությունը: 2020թ. ընթացքում ստացվել է մարզպետին և կառուցվածքային ստորաբաժանումներին ուղղված 76 գրավոր և շուրջ 120 բանավոր հարցում, որոնց տրվել է հիմնավոր պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետների մեջ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է մարզպետի թվով 1 մամլո ասուլիս, շուրջ 80 հարցազրույց և ճեպազրույց:

Աշխատանք Հասարակական կազմակերպությունների(այդ թվում նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող) հետ

Մարզում ակտիվորեն գործող շուրջ 30 հասարակական կազմակերպություններ՝ այդ թվում և ազգային փոքրամասնություններին պատկանող, ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների հետ, որոշ ՀԿ-ներ ընդգրկված են մարզպետարանի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային», «Լոռու մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող» հանձնաժողովների կազմերում: Պատերազմական առաջին իսկ օրերից առաջնագծի զինվորներին և մարզում ապաստան գտած արցախցիներին աջակցելու նպատակով Լոռու մարզպետարանում նաև ձևավորվել է մարզային համակարգման կենտրոն, որի կազմում ընդգրկվել են հասարակական կազմակերպությունների, քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչներ: Կենտրոնն իրականացրել է մեծածավալ կամավորական աշխատանք:

ՀԿ ներկայացուցիչները(այդ թվում նաև՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ՀԿ-ների) հրավիրվել են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, մարզպետարանի պաշտոնյաները ևս հրավիրվել և մասնակցություն են ունեցել ՀԿ-ների ու միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին, նրանց կարծիքներն ու առաջարկությունները կարևորվել են տարբեր որոշումների ընդունման ժամանակ: Հասարակական կազմակերպությունների հետ ակտիվորեն համագործակցում են նաև մարզի համայնքները՝ իրականացնելով տարաբնույթ ծրագրեր: Մարզի համայնքներում հասարակական կազմակերպությունների հետ իրականացվել է շուրջ 40 ծրագիր:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

Բաժինը ուսումնասիրություններ է կատարում մարզում գործունեություն ծավալող կրոնական կազմակերպությունների վերաբերյալ:

Ըստ այդ ուսումնասիրությունների, մարզում գործունեություն են ծավալում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմը, Հայ կաթողիկե եկեղեցու Տաշիրի թեմը, Հայ Ավետարանական եկեղեցու Լոռու թեմը, Վանաձորի Ավետարանական հավատքի, մորմոնների(Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբեր), Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցիները, Եհովայի վկաների

հետևորդները, իրականացնում բարեգործական ծրագրեր: Մարզպետարանի առնչությունները՝ գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, եղել են պաշտոնական գործառույթներից բխող հանգամանքներով:

Մարզպետը և մարզպետարանի պաշտոնյաները մշտապես մասնակցում են Հայ Առաքելական եկեղեցու գլխավոր տոնակատարություններին: Պարբերական հանդիպումներ և կարևոր հարցերի քննարկումներ են անցկացվում նաև Լոռու մարզպետի և Գուգարաց թեմի առաջնորդի միջև:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2020 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատմանն է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2020թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 2020թ. հունվարի 10-ի թիվ 10-Ա որոշմամբ:

2020 թվականի ընթացքում Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 1176 ահազանգ, որոնցից՝ 674-ը – տեխնածին, 46-ը – տարերային, 456-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 34, վիրավորվել 869 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 95.214.900 դրամ:

2020 թ-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 1430 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 878-ը - տեխնածին, 29-ը - տարերային և 523-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 42, վիրավորվել 866 մարդ: Նյութական վնասը կազմել է 10.789.330 դրամ:

2020թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերը նվազել են 254-ով, ընդ որում 17-ով աճել են տարերային դեպքերը, իսկ 204-ով և 67-ով նվազել են համապատասխանաբար տեխնածին բնույթի և սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքերը: Զոհվածների թիվը նվազել է 8-ով, վիրավորներինը՝ աճել 3-ով: 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 84.425.570 դրամով աճել է արտակարգ դեպ-քերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 3318 ելք (2019թ.՝ 2199), այդ թվում՝ հրդեհների - 531 (2019թ.՝ 809), վթարների և պատահարների - 208 (2019թ.՝ 119), կեղծ կանչի 31 (2019թ.՝ 37), կենցաղային օգնության - 425 (2019թ.՝ 269), այլ մեկնումներ - 2123 (2019թ.՝ 965):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

Covid-19 համավարակի և ռազմական դրության հետ կապված կասեցվել են պլանավորված ուսումնավարժությունների և վարժանքների անցկացման աշխատանքները:

2 համայնքներում՝ դեկտեմբերի 17-ին Սարահարթ համայնքում և դեկտեմբերի 18-ին Պրիվոլնոյե բնակավայրում անց են կացվել <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը>> թեմայով գործնական միջոցառումներ:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի №34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն

որոշման համաձայն մշակված և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 09.01.2020թ-ին հաստատված պլանի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2020թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին, 2020թ-ի ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 39 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 30 մասնակիցներ:

Կապի և ազդարարման համակարգ

Մինչև ռազմական դրության հայտարարումը Լոռու մարզում առկա էր թվով 18 գործող շչակ, 2020թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ առկա են թվով 55 գործող շչակ (ավելացվել են 37-ը), հիմնականում ավելացած շչակների հայթաթման, տեղադրման աշխատանքները իրականացվել են Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից: Մարզում բնակչության ազդարարման համար անհրաժեշտ են 163 շչակներ, որից առկա են 55-ը, որոնք տեղադրված են 23 բնակավայրերում, 90 բնակավայրում առկա չեն շչակներ: Հատկապես շչակները բացակայում են Գուգարքի տարածաշրջանում, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Սարչապետ խոշորացված համայնքների բնակավայրերում: Քաղաքային համայնքներում ազդարարման խնդիրը համարյա լուծված են, մնացել են գյուղական համայնքներն ու բնակավայրերը՝ բոլոր տարածաշրջաններում:

Կանխարգելիչ միջոցառումների իրականացում

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների հետ իրենց համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանները մշակելու ուղղությամբ : Ներկա պահին Լոռու մարզի 56 համայնքներից 56-ի ԱՌԿ պլանները համաձայնեցվել են Լոռու մարզային փրկարարական վարչության հետ:

Կորոնավիրուսային համավարակի կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքներ՝

իրականացվել են մարզում հանրային օբյեկտների ախտահանման աշխատանքներ (ավտոկանգառներ, բանկոմատներ, շուկաներ և այլն): Հաշվետու ժամանակահատվածում մարզի տարածքում թվով 8109 անգամ իրականացրել են հանրային օբյեկտների ախտահանման աշխատանքներ,

Լոռու մարզային փրկարարական վարչության և ենթակա ստորաբաժանումներում իրականացվել են տարածքի և մեքենաների ախտահանման աշխատանքներ,

հրշեջ – փրկարարական մեքենաների բարձրախոսների միջոցով, մարզի տարածքում իրականացրել են բնակչության իրազեկման աշխատանքներ, կորոնավիրուսային համավարակի կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:

ԶՈՐԱԿՈՉ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Իրականացվել է վարչական հսկողություն մարզի 8 համայնքներում, անց է կացվել 2 շտաբային մարզումներ, ձմեռային և ամառային զորակոչի ժամանակ ՀՀ Լոռու մարզային զորակոչային հանձնաժողովը կայացրել է 3 նիստ (110 անձնական գործ, որից 10-ը «Պատիվ ունեմ» ծրագրով), բարոյական, ֆինանսական և նյութական աջակցություն է ցուցաբերվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ադրբեջանական զորքերի շփման գծում 2016 թվականի ապրիլի 2-5-ը տեղի ունեցած քառօրյա պատերազմի ժամանակ զոհված զինվորների ընտանիքներին (թվով 31 հոգի), իրականացվել է ամրագրման և ապաամրագրման գործընթացը, իրականացվել է 27.09.2020թ.-ի Արցախյան պատերազմում զոհված, վիրավորված, անհայտ կորած և գերի ընկած քաղաքացիների վերաբերյալ ամենօրյա տեղեկատվությունների թարմացման աշխատանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 133 հաստիք, որից 113-ը՝ քաղաքացիական ծառայողների հաստիքներն են (21-ը առանձնացված ստորաբաժանումներում), որից թափուր է 10-ը: 3 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

2020 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել և անց է կացվել է 19 մրցույթ, ընդհանուր դիմորդների քանակը՝ 122, մասնակիցների քանակը 115,իսկ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն

- ✓ զբաղեցնելու համար հայտարարվել և անց է կացվել 3 մրցույթներ:
- ✓ Վերապատրաստվել են 53 քաղաքացիական ծառայողներ
- ✓ 2020 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 18 քաղծառայողներ, ընդունվել 15-ը: Քաղաքացիական ծառայության մասով կարգապահական տույժի է
- ✓ ենթարկվել 5 աշխատակից:
- ✓ 2020թ-ին նախապատրաստվել են՝
- ✓ Լոռու մարզպետի 1010 որոշումների նախագծեր,
- ✓ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 1530 հրամանների նախագծեր,
- ✓ մրցույթով անցած 12 դպրոցի տնօրենների պայմանագրերի նախագծերը,
- ✓ ՔԾԳ-ի 15 գրությունների նախագծեր,
- ✓ Աշխատակիցների 31 տեղեկանքներ
- ✓ 21 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:
- ✓ Ամփոփվել է աշխատակիցների կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատումը:

ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2020Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020թ. ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 1143 որոշում, որոնք վերաբերում են հետևյալ հարցերին.

• ՏԻՄ	5	0.5%
• առողջապահություն և սոց. ապահովություն	65	5.7%
• կադրային հարցեր	436	38.1%
• կրթություն, մշակույթ և սպորտ	396	34.7%
• ֆինանսական հարցեր	166	14.5%
• տրանսպորտ	3	0.3%
• ԱԻ և ՔՊ	11	1.0%
• հողաշինություն և հողօգտագործում	5	0.4%
• գյուղատնտեսություն	2	0.2%
• գաղտնի	14	1.2%
• իրավական և մասնագիտական հսկողություն	4	0.3%
• այլ	36	3.1 %

Մշտապես իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՀՀ օրենսդրության խախտումների հիմնավորմամբ հետ վերադարձված իրավական ակտեր չունենք:

Մարզպետարանի գլխավոր քարտուղարի կողմից 2020թ. ընթացքում արձակվել է 1692 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2020թ. ընթացքում բաժնի կողմից կազմվել է 367 գրություն, որոնցից՝ 29 դիմումի պատասխան և 338 գրություն:

2020թ. իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն նախատեսված 15 համայնքներից 12-ում, ևս 2 համայնքում՝ լրացուցիչ, ընդհանուրը՝ 14 համայնքում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

2021թ. ընթացքում նախատեսվում է իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնել մարզի 20 համայնքներում:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 80 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ավարտից հետո արխիվացվում են մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի թղթային տարբերակները և հանձնվում մարզպետարանի արխիվ՝ մշտական պահպանության:

Մշտապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար /մարզպետի որոշումներ, գլխավոր քարտուղարի հրամաններ, իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն/:

Բաժնի կողմից կատարվել է նաև մարզի համայնքներից մարզպետարան ներկայացված իրավական ակտերի՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և ավագանիների որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում:

2020թ. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. ընթացքում, Լոռու մարզպետարանում մուտք է արվել 30766 /2019թ.-27226/ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան 21101 /2019թ.-21101 /:

2020թ. Mulberri համակարգ է մուտքագրվել 5631 /2019թ.-5854 / պաշտոնական գրություն, որից 1676 /2019թ.-1399/ հսկողական գրություններ են: Դրանցից 1628 /2019թ.-1328 / հանձնարարականի պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակաշրջանում առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել շուրջ 7081 /2019թ.-4741 / դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում, որոնցից 276–ը /2019թ. -739/ ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Վարչապետի աշխատակազմից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից:

2020թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է շուրջ 18054 /2019թ.-16631 / գրություն, որոնց տրվել է համապատասխան ընթացք՝ սահմանված կարգի պահպանմամբ:

2020թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով 26 /2019թ.-25 / խորհրդակցությունների արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի և այլն:

Հաշվետու տարում «Արխիվային գործի մասին» օրենքի և ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին գործավարության կարգին համաձայն՝ իրականացվել է փաստաթղթերի և անձնական գործերի պատճենահանում և առաքումների կազմակերպում, ինչպես նաև մրցույթների և ատեստավորումների փաստաթղթերի արխիվացում, սուրհանդակային և հատուկ կապի ծառայության սպասարկում:

2020թ. ընթացքում համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության համապատասխան որոշումների և այլ իրավական ակտերի պահանջների, ինչպես

նաև տրված հանձնարարականների իրականացվել է Լոռու մարզպետարանի գաղտնի գործավարությունը: Այս ուղղությամբ ուշացումներ կամ չկատարված հանձնարարականներ չկան, վերահսկողությունը իրականացվում է սահմանված կարգով:

2020թ. ընթացքում անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել աշխատակազմի ծրագրատեխնիկական և համակարգչային տեխնիկական սպասարկումների աշխատանքների իրականացման ուղղությամբ, մասնավորապես, պարբերաբար և սահմանված ժամկետներում թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, ցանցի ընդլայման աշխատանքները՝ կապված նոր հաստիքների և աշխատատեղերի փոփոխությունների հետ: Անհրաժեշտ աշխատանքային պայմաններ են ստեղծվել մարզպետարանի աշխատակիցների համար, իրականացվել է համակարգչային տեխնիկայի ընթացիկ վերանորոգում և ծրագրային վերափոխումներ:

Հաշվետու տարում քարտուղարության վարչատնտեսական բաժնի միջոցով իրականացվել է աշխատակազմի վարչական համալիրի շահագործման աշխատանքներ, աշխատակազմի գույքի ձեռքբերման, պահպանման /անհրաժեշտության և հնարավորության դեպքում նաև վերանորոգման/ աշխատանքներ, աշխատակազմի հեռախոսակապի, կապի, ջեռուցման և այլ ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի ապահովման, մարզպետարանի պաշտոնատար անձանց մասնակցությամբ անցկացվող արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման ապահովման աշխատանքների իրականացում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա. Խաչատրյան**